







*Handwritten text in a cursive script, likely a signature or a note, located at the top of the page.*

ՍԿՂԲՈՒՆՔ

ՊԵՏՐՈՒԹԵԱՆ

ՀԻՆ ԱԶԳԱՅ

Handwritten text in a cursive script, likely a signature or name, possibly reading "L. J. ...".

Faint, illegible text, possibly a date or reference number.

Faint, illegible text, possibly a name or title.

Faint, illegible text, possibly a date or reference number.



9 (3)

VMS  
1201

U-57 ՍԿՂԲՈՒՆՔ

ՊԵՏՐՈՒԹԵԱՆ

ՀԻՆ ԱԶԳԱՅ

ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

~~1225~~  
~~1206~~



A  
1088

Ի ՎԵՆԵՏԻԱ

Handwritten text in blue ink, partially obscured by a stamp, including the word "BIBLIOTECA".

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1848

14x8

Handwritten text in a stamp, including the word "BIBLIOTECA" and other illegible characters.

28.00  
28.00

19344

SHIPPING & FREIGHT  
PAID BY  
RECEIVED  
1934



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

ՈՒՍՄԱՆՑ Տէջ տղոց համար ամենէն զուարճալին Պատմութիւն է, միայն թէ պէտք է որ վարժապետը պատմութիւն սորվեցընելուն կերպը գիտնայ, այսինքն վարժ ըլլայ այնպիսի ոճով մը պատմելու պատմութիւններն որ տղաքը ամենայն սիրով ուշադրութիւն ընեն ու չձանձրանան: Իսկ թէ որ տղոց գիմացը պատմութեան գիրք մը դնես ու գնացէք ասկէց ինչուան հոն բերնուց սերտեցէք ըսես, խեղճ տղոց տարակոյսը կը պատէ, կ'երթան տեղերնին՝ կը սկսին յօրանջել:

Աս գիտնալով եւրոպացի վարժապետները, երբոր կ'ուզեն մանր տղոց Պատմութիւն սորվեցընել, առաջ անոնց կը պատմեն տեղն 'ի տեղը ու զուարճալի ոճով անօրուան դասը. ետքը նոյն դասին Տէջի ամենէն գլխաւոր անուաններն ու պարագաները



սերտեւ կուտան , որով բոլոր պատմութիւնն ալ մտքերնին կը մնայ :

Մենք ալ ուզելով մեր ազգին տղոցը դիւրացընել աս պիտանի և օգտակար ուսումը , Հին Պատմութեան գլխաւոր պարագաները աս տետրակիս մէջ համառօտեցինք՝ որչափ որ կարելի է տղոց սերտողութեանը յարմար ոճով : Աեր 'ի վերանց նայողին աս ոճը չոր ու ցամաք ցանկի պէս բան մը կ'երևնայ իսկ բան հասկըցողները մէկէն կ'իմանան որ մանր տղոց սերտելիքը թէպէտ այսչափ քիչ ու համառօտ բան է , բայց պէտք է որ վարժապետը նոյն բաներուն ընդարձակը պատմէ անոնց ու մտքերնին տպաւորէ :

Օրինակի համար , ըսենք թէ վարժապետը Վոզրոսի պատմութիւնը պիտի սորվեցընէ . թէ որ աս տետրակիս 59 երեսին մէջի հատուածը միայն սերտել տայ տղոց , շուտով կրնան մոռնալ . ուստի պէտք է այնպիսի կերպով մը պատմէ որ մտքերնին մընայ , այսինքն առաջ հասկըցընէ թէ Աթենացիք ան ատենները ինչ մեծ նեղութեան մէջ էին , որ ոչ ուժ ունէին և ոչ օգնական . դրացի ժողովուրդները ինչպէս զօրաւոր ու կատաղի էին , և այլն . ետքը ըսէ թէ ինչպէս Աթենացւոց ճարը հատնելով՝ պատգամ հարցուցին աստուածներուն . հոս պատ-



գամին ինչ ըլլալը պիտի հասկըցընէ տղոց,  
և թէ ինչ սլատկառանկքով՝ ինչ արարողու  
թիւններով կ'ընդունէին մարդիկ հին ատեն  
աս պատգամները: Անկէց ետքը պատմէ որ  
Պատգամախօսը պատասխան տուաւ թէ եր  
կու ժողովրդոց՝ այսինքն Աթենացւոց ու  
Գորացւոց՝ որո՞ւն որ թագաւորը մեռնի՝  
ան ժողովուրդը պիտի յաղթէ: Աս որ լսե  
ցին սարսափեցան Աթենացիք. վասն զի  
մեծ սէր ունէին իրենց Վոդրոս թագաւո  
րին վրայ. լաւ է որ յաղթուինք կ'ըսէին՝  
քան թէ մեր թագաւորէն զրկուինք: Անդին  
Գորացիք ալ պատգամ հարցուցին, նոյն  
պատասխանն առին. և որովհետև կը ճանչ  
նային Վոդրոսը, հարկաւ պիտի զգուշա  
նային զինքը սպաննուէն որ Աթենացիք յաղ  
թող չըլլան: Բայց վեհանձն թագաւորը մը  
տածեց որ լաւ է հայրենեաց համար մեռնի  
քան թէ իր կենդանի մնալովը անոր յաղ  
թուելուն կերպով մը պատճառ սեպուի.  
առանց իր միտքը յայտնելու՝ բանակին գլու  
խը անցաւ, ելաւ Գորացւոց դիմացը, տե  
սաւ որ անոնց նետերը ամենեին դէպ 'ի  
իր կողմը չեն նետուիր: Ան միջոցին տես  
նելով որ երկու կողմի զօրքերը անդին իրա  
րու հետ խառնուած կը պատերազմին, իր  
թագաւորական նշանները մէկդի ձգեց, գե



ղացի մուրացկանի հագուստ մը հագաւ, ու  
ճանչցուելու վախ չունենալէն ետքը՝ նե-  
տուեցաւ թշնամեաց մէջ, ու « Բո է յաղ-  
թութի, ո՛վ Աթէնք » կանչելով զարնուե-  
ցաւ մեռաւ:

Աս ոճով պատմուած պատմութիւնը  
յայտնի է որ տղուն միտքը կը մնայ, և Կո-  
դրոսի անունը մէյմըն ալ մտքէն չելլեր: Աը  
մնայ որ վարժապետը տեղեակ ըլլայ պատ-  
մութեան. անոր համար ալ բաւական գըր-  
քեր կան նաև մեր լեզուով հրատարա-  
կուած, ինչպէս Ռօլէնի Հնախօսութիւնը և  
Հռովմայեցւոց պատմութիւնը՝ տասուեր-  
կու հատոր գրաբառ, Պատմութիւն Չորից  
ինքնակալութեանց ըսուածը՝ մէկ պզտիկ  
հատոր աշխարհաբառ, և այլն:

Յուսանք որ աս վախճանիս ինչպէս որ  
սկտք է յարմար երևնալով աս մեր փոքրիկ  
աշխատութիւնը, հաճոյ և օգտակար ըլլայ  
ազգային դպրոցաց:







ՊԱՏՄ ՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ե Յ Ի Ո Յ



Եգիպտացոց պատճառելինը ինչպե՛ս կամբխտ  
սիրելը: — Եգիպտացոց կրօնքը, կառավարու-  
թիւնը, արուեստները և հնարելիքները:

ՀԻՅ. Նոն Եգիպտոսի սահմանը ո՞րն էր.  
ՊԽ. Հիւսիսէն Միջերկրական ծովն էր,  
արևելքէն Արաբիոյ ծոցը, հարաւէն Եթով-  
պիան, արևմուտքէն Աֆիան:

Հ. Եգիպտացոց տէրութեան սկզբնա-  
ւորութիւնը ո՞ր գաւառին մէջ եղաւ.  
Պ. Թեբայիտ ըստած գաւառին մէջ, որ  
Եգիպտոսի հարաւային կողմը կ'իյնայ ու  
վերին Եգիպտոս ալ կ'ըսուի:

Հ. Եգիպտոսի կառավարութիւնը 'ի  
սկզբան ի՞նչպէս էր.

Պ. Սկիզբները կառավարութիւնը քուր

մերուն ձեռքն էր, և անոր համար աստուած-  
պետական կրսեպուէր:

Հ. Եգիպտոսի հարստութիւները կամ  
ղանազան թագաւորական ցեղերը որչափ  
կը համրուին.

Պ. Երեսուն, որոնցմէ շատը մի և նոյն  
միջոցի մէջ եղած պիտի ըլլան. ապա թէ  
ոչ, հարկ կ'ըլլայ կարծել թէ Եգիպտոսի  
պատմութիւնը շատ աւելի հնութիւն մը  
պիտի ունենայ, որ իրաւ չէ:

Հ. Եգիպտոսի առջի թագաւորը ո՞վ կը-  
սեպուի, և ե՞րբ թագաւորեց.

Պ. Մենէս կամ Մեսորեմ, Քրիստոսէ  
2500 տարի առաջ:

Հ. Մենէս ի՞նչ քաղաք շինեց.

Պ. Մեմփիս քաղաքը՝ Եօթնանահանդ  
դաւառին կամ Միջին Եգիպտոսի մէջ:

Հ. Հարիւրադուռն թեքէ ըսուած հըռ-  
չակաւոր քաղաքը ո՞վ շինեց.

Պ. Բուսիրոս թագաւորը:

Հ. Երբոր Հիւնոսոս կամ Հովիւ ըսուած  
թագաւորները Եգիպտոսի տիրեցին, Ե-  
գիպտացիք քանի՞ հարստութիւններ էին.

Պ. Տասուիրեք հարստութիւն:

Հ. Հիւկոսոս կամ Հովիւ թագաւորները  
ի՞նչ մարդիկ էին.



Պ . Փիւնիկէէն կամ Արաբիայէն եկած  
Հովիւներ էին :

Հ . Սուրբ դրոց մէջ աս Հովիւ Թագա-  
ւորները ի՞նչ կ'ըսուին .

Պ . Փարաւոն :

Հ . Յովսէփ նահապետին ժամանակը ո՞ր  
ատեն կ'իյնայ .

Պ . Քրիստոսէ 2076 տարի առաջ :

Հ . Վերին Եգիպտոսի ո՞ր Թագաւորը Հիւ-  
կոսոս կամ Հովիւ Թագաւորները վաճառեց .

Պ . Թեթմոսիս Թագաւորը :

Հ . Մերիսեան լիճը ո՞վ փորել տուաւ ,  
և ի՞նչ վախճանաւ .

Պ . Մերիս անուանով Թագաւորը փորել  
տուաւ , որպէս զի երբոր Նեղոս գետը չա-  
փէն աւելի բարձրանայ՝ ջուրը ան լճին մէջ  
ժողովուի , և ետքը չորութեան ժամանակ  
գետինները ջրելու գործածուի :

Հ . Մերիսի յաջորդներուն մէջ գլխաւոր  
ները որո՞նք եղան .

Պ . Ուկոր , Ոսիմանդ , Հուամէս , Միա-  
մուն , և Ամենովփիս :

Հ . Մենէս Թագաւորէն ինչուան Սե-  
սոսար քանի՞ դար է .

Պ . Ութը դար :



Հ . Սեսոսար որո՞ւ որդին է , և ի՞նչպէս  
գաստիարակուեցաւ .

Պ . Ամենովիս թագաւորին տղան է , ու  
զինուորական արուեստի մէջ մեծցաւ իր  
հասակակից տղոցը հետ :

Հ . Իրեն գլխաւոր բարեկարգութիւններ  
ըր որո՞նք եղան .

Պ . Եգիպտոսը երեսունուվեց նահանգ  
բաժնեց . առաջին նաւատորմիդ հանողը  
ինքը եղաւ . ջրանցքներ փորել տուաւ , և  
ուրիշ շատ գործքեր ըրաւ :

Հ . Սեսոսար ինչուան ո՞ւր տիրեց .

Պ . Ինչուան Գանգէս գետը և Ուկիանոս :

Հ . Սեսոսարի ո՞վ յաջորդեց .

Պ . Փերոն իր որդին , որ հօրը կատարե-  
լութիւններէն զուրկ էր :

Հ . Փերոնի յաջորդներուն մէջ գլխաւոր-  
ները որո՞նք են .

Պ . Պրոտեւս , Քէոպս և Քեփրէն երկու  
եղբարք , Միկերին , Սիսակ , Բոկքովսիս ,  
Սեթոն քուրմ . երկոտասան թագաւորք և  
Փսամետիքոս :

Հ . Երեք բուրգերը որ թագաւորներուն  
չինածը կրկարծուին .

Պ . Քէոպս և Քեփրէն երկու եղբարց , և  
Միկերին թագաւորին որ Քէոպսի որ-  
դին է :



Հ . Հռչակաւոր Աբիւրինթոսը ինչպէս շինուեցաւ .

Պ . Տասուերկու թագաւորաց դաշնակցութեամբը շինուեցաւ՝ որնոյն միջոցի մէջ կը թագաւորէին :

Հ . Փասմեաիքոս որ անոնցմէ մէկն էր՝ ինչպէս մինակ թագաւորեց Եդիպոսի վրայ .

Պ . Կարիացի Յոյն զօրաց օգնութեամբը յաղթելով իր դաշնակցացը՝ մինակ թագաւորեց :

Հ . Սեսոսարէն ինչուան Փասմեաիքոս որչափ ատեն անցաւ .

Պ . Տասը դար :

Հ . Փասմեաիքոս Եդիպոսի մէջ ինչ էրևելի գործք ըրաւ .

Պ . Աճառականութիւնը ծաղկեցուց , ամէն օտարականաց ներս մտնելու հրաման տուաւ , ինչուան թող տուաւ որ Յոյնք հոն բնակութիւն ալ հաստատեն :

Հ . Փասմեաիքոսի ո՞վ յաջորդեց .

Պ . Իր որդին՝ Նեքաւով :

Հ . Նեքաւովայ էրևելի գործքերը որոնք են .

Պ . Նեղոսը Կարմիր ծովուն հեա միացրնելու համար ջրանցք մը սկսաւ բանալ տալ . Փիւնիկեցի նաւավարները Ափրիկէի



չորս կողմը պտրոցուց, և ինչուան Ասորես-  
տան վազէց սլառերազմով:

Հ. Նեքաւուլայ ո՞վ յաջորդէց .

Պ. Իր որդին Փսամուժէս:

Հ. Փսամուժէսի ո՞վ յաջորդէց .

Պ. Վափրէս, որ սուրբ գրոց մէջ Փարա-  
ւոն Վափառ կրկոչուի:

Հ. Վափրէսի ո՞վ յաջորդէց .

Պ. Ամասիս:

Հ. Ամասիս ո՞վ էր .

Պ. Ամասիս թագաւորելէն առաջ աւա-  
զակ մըն էր . և որովհետև ժողովուրդը իրեն  
թագաւորի պատիւ չէր տար՝ ըրած առջի  
գողութեանցը և աննշան տնէ ըլլալուն հա-  
մար, Ամասիս իմաստուն օրէնքներով և խե-  
լացի վարպետութեամբ մը ինքզինքը ժողո-  
վըրդեան դիմացը պատկառելի ըրաւ:

Հ. Ամասիս թագաւորութիւնը որո՞ւ  
ձրդէց .

Պ. Իր Փսամենէս որդւոյն, Քրիստոսէ  
532 տարի առաջ:

Հ. Փսամենէս ո՞րչափ ատեն թագաւո-  
րէց, և ուսկից յաղթուեցաւ .

Պ. Վէց ամիս թագաւորելէն ետև՝ Վամ-  
բիւսէն յաղթուելով թագաւորութիւնը  
կործանեցաւ:



Հ. Ի՞նչ վիճակի մէջ ընկաւ ան աստե՛նը  
Եգիպտոս .

Պ. Պարսից իշխանութեան մասն եղաւ ,  
ինչուան որ Պարսից հետ մէկտեղ Աղեքսան-  
դրի իշխանութեան տակ ընկաւ :

Հ. Եգիպտոսացւոց կրօնքը ի՞նչ էր .

Պ. Իրենց բոլոր աստուածները՝ ոմանք  
արևու, ոմանք ալ լուսնի ձևով էին . ետքը՝  
ասոնցմէ շատը կենդանեաց գլուխներով  
կրճեացրնէին :

Հ. Եզն ու կովը ի՞նչ կրնշանակէին .

Պ. Եզը նշան էր Ոսիրիսի կամ արևուն ,  
իսկ կովը Իսիսի կամ լուսնին :

Հ. Ոսիրիսի և Իսիսի հակառակ չար աս-  
տուածները որո՞նք էին , և ի՞նչպէս էր ա-  
նոնց ձևը .

Պ. Տիւփոն և Նեփտիս իր քոյրը . առջինը  
կոկորդիլոսի ձևով, երկրորդն ալ մատակ  
գայլու ձևով կը նկարէին :

Հ. Եգիպտոսի մէկալ աստուածները ո-  
րո՞նք էին .

Պ. Շուն, կատու, հիլոս կամ Փարաւոնի  
մուկ, քաջահաւ կամ ցեժ . ասոնցմէ զատ  
ինչուան բոյսերն ու ընդեղէններն ալ կը-  
պաշտէին :

Հ. Եգիպտոսացւոց կրօնքին հիմնական  
վարդապետութիւնը ի՞նչ էր .



Պ . Անմահութիւն հոգւոյ և հոգեւոր  
խութիւն :

Տ . Եղիպտացւոց կառավարութեան կեր  
պը ի՞նչպէս էր խիտ հին ժամանակները .

Պ . Եգիպտական միաստութիւն էր :

Տ . Եղիպտոսի թագաւորաց սովորական  
գործքը ի՞նչ էր .

Պ . Իրենց հպատակացը դատաստաննե  
րուն մէկ մասը իրենք կը տեսնէին :

Տ . Եղիպտոսի ժողովուրդը քանի՞ կը  
բաժնուէր .

Պ . Երէք . քուրմք , զօրականք և ժողո  
վուրդ :

Տ . Երկիրը ի՞նչպէս բաժնուած էր .

Պ . Երկիրը թագաւորաց , քուրմերուն և  
զօրականաց մէջ բաժնուած էր . իսկ ժողո  
վուրդը՝ որ իրենք կարգ կըբաժնուէր , այս  
ինքն երկրագործ , հովիւ և արուեստաւոր ,  
պարտաւորեալ էր իր աշխատանքովը ասլ  
րուստը ճարել :

Տ . Արուեստներուն վրայ ի՞նչ գլխա  
ւոր օրէնք կար .

Պ . Արուեստները միշտ որդւոց որդի ժա  
ռանգութեամբ պիտի անցնէին :

Տ . Եղիպտացեք ուրիշ ի՞նչ գլխաւոր օ  
րէնքներ ունէին .



Պ. Մահուան պատիժ սահմանած էին  
կամաւոր մարդասպաններու, երգմնազանց  
ներու, և վտանգի ժամանակ ուրիշի օգնու  
թիւն չընողներու: Ամբաստանողը՝ ամբաս-  
տանելոյն կրելու պատիժը կրկրէր՝ թէ որ  
անոր յանցանքը սուտ էլէր: Պարտատիրոջ  
պարտք ունեցողին ունեցածը չունեցածը  
կրվճարէին՝ առանց մարդուն անձին լնա-  
սելու, և այլն:

Հ. Եգիպտացւոց արուեստներուն և  
ճարտարութեան ի՞նչ երևելի մնացորդները  
կան:

Պ. Բուրդերը, Լաբիւրինթոսը, Մեմ-  
նոնի արձանը, հսկայաձև սփինքսեր և այլն:

Հ. Ի՞նչ էր Մեմնոնի արձանը:

Պ. Ամենովփիսի կերպարանքովը արձան  
մըն էր, որ երբոր վրան արևուն ճառա-  
գայթները կը զարնէին՝ անուշ ձայներ կը-  
հանէր կ'ըսեն:

Հ. Եգիպտացւոց խորհրդաւոր կամ «ըր-  
բադր» ըսուած դրուածքը ի՞նչ բան է:

Պ. Ասոնք խորհրդաւոր նշանագիրներ  
էին որ մէյմէկ գիր կամ վանկ կամ բառ կը-  
նշանակէին:

Հ. Եգիպտացիք իրենց մեռելները ի՞նչ  
պէս կը պահէին:

Պ. Կը զմըռսէին, անով շատ մեռելներ  
ինչուան հիմա կան ու ճոճայ կ'ըսուին:

Հ. Եգիպտացւոց թագաւորներուն մահուանէն ետքը վրանին ի՞նչ դատաստան կ'ընէին .

Պ. Իրենց ըրած գործքերը կը քննէին , և ան դատաստանով կ'որոշուէր թէ մեռելը արժանի է թաղման թէ անթաղ ձգելու է :

Հ. Եգիպտոսի մէջ առջի բնակող օտարականները որո՞նք էղան .

Պ. Յոյնք էղան :








ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԸՍՈՐԵՍՏԸՆԵԸՅՅ

ԵՒ

ԲԸԲԵԼԱՅԻՈՅ



Ասորոց և Բաբելոնացոց պատմութիւնը ինչպէս  
Կիւրոսի Բաբելոն առնելը : — Քաղաքացոց  
խառնաձայնութիւնը, իրօնքը ու գիտութիւնը . Բա-  
բելոնի հետնութիւնները :

Հ . ԲԱԲԵԼՈՆԻ տէրութեան հիմնադիրն  
ով է .

Պ . Քամայ թուր Քուշայ որդին՝ Նեբ-  
բոլթ , որ Բէլ կամ Բահայ ալ կ'ըսուի :

Հ . Նեբբոլթայ վրայ ի՞նչ կը պատմէ  
սուրբ գիրքը .

Պ . Աստուծոյ առջև հսկայ որսորդ էր ,  
կ'ըսէ :



Հ. Մեր ազգին պատմութենէն ինչ գիտենք Բէլայ վրայ .

Պ. Երբոր Բէլ օրէ օր զօրացաւ, ամենուն վրայ ուզեց տիրել, ու Աստուծոյ պէս ինքզինքը պաշտել տալ, մեր Հայկ նահապետը չհնազանդեցաւ անոր . իր քաջերովը դէմն ելաւ, ու Անուայ ծովուն քով պատերազմի մէջ զարկաւ սպաննեց Բէլը :

Հ. Բէլայ ո՞վ յաջորդեց .

Պ. Բէլէն ետև հինգ ազգ որդւոց որդի յաջորդեցին, բայց անուննին միայն կայ . անոնց ետևէն նստաւ Նինոս :

Հ. Նինոսի տէրութիւնը ինչուան ո՞ւր էր :

Պ. Եգիպտոսէն ինչուան Բաղտրիա :

Հ. Նինոսի կինը ո՞վ է .

Պ. Շամիրամ, որ Նինոսի զօրապետներէն մէկուն կինն էր՝ այրի մնացած :

Հ. Նինոսի ո՞վ յաջորդեց .

Պ. Շամիրամ :

Հ. Շամիրամայ վրայ ինչ գիտենք կայ .

Պ. Բաբելոնը զարդարեց, Անուայ բերդը շինեց, իր տէրութեան սահմանը ինչուան Հնդկաստան տարածեց, և մեր Արայ նահապետին դէմ պատերազմ ըրաւ :

Հ. Շամիրամայ ո՞վ յաջորդեց .

Պ. Նինուաս :



Հ. Նինոււաայ քանի՞ թագաւորներ յա-  
ջորդեցին, և ետքինը ո՞վ եղաւ.

Պ. Երեսուներջորս թագաւոր, որոնց  
ետքինը Սարգանապաղն է:

Հ. Ինչո՞ւ Բեղեսիս, Պարոյր և Վարբա-  
կէս գլուխ քաշեցին, ու Սարգանապաղ  
ի՞նչպէս մեռաւ.

Պ. Վարբակէս Մարաց նախարարը բար-  
կանալով թագաւորին կնամարդութեանը  
վրայ, Բեղեսիսի՝ Բաբելացւոց իշխանին ու  
մեր Պարոյր նահապետին հետ Սարգանա-  
պաղայ դէմ ելաւ: Սարգանապաղ աս ա-  
պրատամբութիւնը լսելով՝ վազեց վրանին  
ու իրեք անգամ պատերազմի մէջ կոտորեց  
զանոնք, բայց ետքը յաղթուելով՝ Նինուէի  
մէջ փակուեցաւ ու երկար ատեն պաշա-  
րուեցաւ. ետքը տեսնելով որ գերի պիտի  
իյնայ՝ ինքզինքը իր կնիկներովն ու գանձե-  
րովը մէկտեղ այրեց:

Հ. Սարգանապաղայ տէրութենէն քա-  
նի՞ թագաւորութիւն ձևացաւ, և առջի թա-  
գաւորները որո՞նք եղան.

Պ. Երեք. Մարաց՝ Վարբակէսի իշխա-  
նութեան տակ, Բաբելացւոց՝ Բեղեսիսին  
ձեռքը, և Նինուէի՝ որուն թագաւոր եղաւ  
Նինոս կրտսեր: Վարբակէս մեր Պարոյրին  
ալ թագաւորական թագ ու գաւազան  
խրկեց:

Հ. Բաբելացւոց թագաւորութիւնը ո՞վ



Հաստատեց, և իրեն յաջորդները որոնք  
եղան.

Պ. Բեղեսիս. իրեն յաջորդեցին կար-  
գաւ քուրմ թագաւորներ:

Հ. Նաբոնասարի թուականը ինչ քան է.

Պ. Աս թուականը արեւելք շատ անուա-  
նի է, ու Քրիստոսէ 747 տարի առաջ կըս-  
կաի:

Հ. Ասորոց թագաւորութիւնը Քրիս-  
տոսէ 680 տարի առաջ ինչ վիճակի մէջ  
ընկաւ.

Պ. Նինուէի հարկատու եղաւ:

Հ. Նինուէի թագաւորութիւնը որչափ  
ատեն քշեց.

Պ. 759էն ինչուան 625 տարին Քրիստո-  
սէ առաջ:

Հ. Աս թագաւորութիւնը որ ցեղին  
վրայ մնացեր էր.

Պ. Սարգանապաղայ ցեղին վրայ, և ա-  
ռաջին թագաւորը Նինոս կրտսերն եղաւ:

Հ. Այնչափ միջոց Նինուէի մէջ քանի  
թագաւոր նստաւ.

Պ. Եօթը թագաւոր:

Հ. Աս թագաւորներէն ո՞վ Ղամասկոսի  
թագաւորութիւնը կործանեց, և ո՞վ Երու-  
սաղեմայ թագաւորութիւնը վերցուց.



Պ . Դամասկոսինը կործանեց Թագղաթ-  
փաղասար , Երուսաղէմինը Սաղմանասար  
(718) :

Հ . Ո՞ր Թագաւորը Երուսաղէմը պաշա-  
րեց ու չկրցաւ առնուլ .

Պ . Սենեքերիմ :

Հ . Բաբելոնի ո՞վ տիրեց .

Պ . Ասորդան (680) :

Հ . Եկբատանայ ո՞վ տիրեց .

Պ . Նաբուգոդոնոսոր Ա (655) :

Հ . Նինուէ ո՞ր Թագաւորին ատենը կոր-  
ծանեցաւ , և ո՞վ կործանեց .

Պ . Սարակոս Թագաւորին ժամանակը .  
Մարաց Թագաւորը Նիաքսար և Բաբելոնի  
նախարարը Նաբուսադասար կործանեցին :

Հ . Ասորեստանեայց երկրորդ տէրու-  
թիւնը երբ հաստատուեցաւ , և ի՞նչպէս .

Պ . Նաբուսադասարայ ատենը , Նինուէին  
Բաբելոնի հետ միանալովը , Քրիստոսէ 625  
տարի առաջ :

Հ . Ո՞րչափ ատեն տևեց աս տէրութիւնը  
և քանի՞ Թագաւոր ունեցաւ .

Պ . Քրիստոսէ առաջ 625էն ինչուան  
538 տևեց , և վեց Թագաւոր ունեցաւ :

Հ . Ի՞նչ գիտելիք կայ Ասորեստանի եր-



կրորդ տէրութեանը հիմնադրին որդւոյն վրայ :

Պ . Նաբուպաղասարայ որդին Նաբուգոդոնոսոր Բ Եգիպտացւոց Նէքաւով թագաւորին յաղթեց . Երուսաղէմի և Տիւրոսի տիրեց , ու կենացը վերջի տարիները իր ամբարտաւանութեանը համար Աստուծոյ պատժուելով անբանի կերպարանք մտաւ , ետքը նորէն զգաստացաւ :

Հ . Իրեն յաջորդներուն ատենները տէրութիւնը ի՞նչ վիճակի մէջ ընկաւ .

Պ . Քանի դնաց տկարացաւ :

Հ . Ասորեստանի Երկրորդ տէրութիւնը երբ ու ի՞նչպէս վերջացաւ .

Պ . Պարսից թագաւորը Աիւրոս 538ին տիրեց Բաբելոնի , երբոր Բաղտասար թագաւորը իր իշխաններուն հետ մէկտեղ կերուխումի հետ էր :

Հ . Սուրբ գրոց մէջ յիշուած Բաղտասար թագաւորը՝ արտաքին պատմութեանց մէջ ի՞նչ կրկոչուի .

Պ . Լաբինիտ , կամ Նաբոդինոս :

Հ . Բաբելացւոց և Ասորեստանեայց կաւալարութեան կերպը ի՞նչպէս էր .

Պ . Ազատ միապետութիւն :

Հ . Իրենց կրօնքը ի՞նչ էր .

Պ . Երկնային մարմինները կը պաշտէին :



Հ. Ո՞ր աստղերը կրպաշտէին .

Պ. Արևը, լուսինը և հինգ մոլորակները :

Հ. Աս աստղերը ի՞նչպէս կրնկարագրէին .

Պ. Այլևայլ արձաններու ձևով, և ան մանր արձանները հմայից տեղ ալ կրգործածէին :

Հ. Ասորեստանցիք աստղերը սլաշտելով ի՞նչ մոլորութեան մէջ ընկեր էին .

Պ. Աստեղագիտութեան կամ աստարքի սխալ կարծիքները մէջերնին տարածուած էր :

Հ. Աստեղաբաշխութիւնը աստեղագիտութենէն ի՞նչ տարբերութիւն ունի .

Պ. Աստեղաբաշխութիւնն է աստեղաց օրէնքներուն գիտութիւնը . իսկ աստեղագիտութիւնը աւելորդապաշտութիւն մըն է որով աստեղագէտները աստղերը գիտելով աստարքի պէս գրուածքներ նայելով և ուրիշ հաշիւներով կարծեն թէ ասպագայ բաները կրնան գուշակել :

Հ. Քաղդէացիք աստեղաբաշխութեան մէջ ո՞րչափ առաջ գնացած էին .

Պ. Արեգակնային տարւոյն շրջանը գտեր էին 365 օր, 5 ժամ և 48 վայրկեան :

Հ. Բաբելոնի պարիսպներուն ընդարձակութիւնը ո՞րչափ էր .

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1088

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԲԱԲԵԼՈՆԻ ԵՐԱՊՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Պ. Բաբելոնի պարիսպներուն երկայնու-  
թիւնը եօթը բիւրմեթր էր, թանձրութիւ-  
նը 24 մեթր, և բարձրութիւնը 64 մեթր:

Հ. Բաբելոնի գլխաւոր շէնքերը որո՞նք  
էին:

Պ. Շամիրամայ շինած կախաղանաւոր  
բուրաստանը, երկու մեծամեծ պալատներ՝  
Եփրատ գետին երկու եզերքը շինած ու  
գետնափոր ճամբով մը գետին տակէն իրա-  
րու հաղորդուած. Բէլայ կուստունը, և  
ուրիշ մեծագործ տեղուանք:







ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Ա Յ, Պ Ա Ր Մ Ի Յ

ԵՒ

Լ Ի Ի Դ Ա Յ Ի Ո Յ



Լիւրացաց Բագատորութիւնը ինչո՞ւնս Կրեւոսի  
անկո՞ւմը: — Պարոնից և Մարաց պատմութիւնը ին-  
չո՞ւնս Կիւրոս: Կիւրոսի Բագատորութիւնը: Պար-  
ոնից և Մարաց սովորութիւններն և օրէնքները:

Հ. Լ Ի Ի Դ Ա Յ ըստ Լ ա ճ ճ գ ա լ ա ո ը ո՞ւր  
կ'իջնայ.

Պ. Փոքր Ասիոյ արևմտեան կողմը: Գըլէ  
խաւոր քաղաքն էր Սարդիկէ:

Հ. Լիւրացաց վրայ քանի՞ ցեղէ թա-  
ղաւորներ իշխեցին.

Պ. Երեք. Ասիսեանք, Հերակլեանք և  
Մերմսեանք:



Հ. Ատիսեանց իշխանութիւնը ո՞րչափ ատեն քչեց .

Պ. Ատիսեանք Քրիստոսէ առաջ 1579էն ինչուան 1219 թագաւորեցին, ընդ ամէնը 360 տարի :

Հ. Հերակլեանք ո՞րչափ ատեն թագաւորեցին .

Պ. Հերակլեանք 1219էն ինչուան 708 թագաւորեցին, բոլորը 511 տարի :

Հ. Մերմնեանք ո՞րչափ ատեն թագաւորեցին .

Պ. Մերմնեանք 708էն ինչուան 547 թագաւորեցին, ընդ ամէնը 161 տարի :

Հ. Լիւդացւոց թագաւորութիւնը ո՞րչափ ժամանակ տևեց .

Պ. Ընդ ամէնը 1032 տարի, այսինքն 1579էն ինչուան 547 :

Հ. Լիւդացւոց թագաւորութե հիմնադիրն ո՞վ եղաւ, և ո՞վ է վերջին թագաւորը .

Պ. Մանէս կամ Մէոն Արամազդայ որդին կրսեպոսի առաջին թագաւոր Լիւդացւոց . իսկ վերջին թագաւորը Կրեսոս էր :

Հ. Մէոն ո՞ր ժամանակները կ'իյնայ .

Պ. Կրկարծուի թէ իրեն թագաւորութիւնը Քրիստոսէ առաջ 1579ին ըլլայ :

Հ. Լիւդիոյ անունը ուսկից առնուած է .



Պ . Լիւզոս թագաւորին անունէն , որ Մէոնի յաջորդներէն մէկն էր :

Հ . Առաջին ցեղին իշխանութիւնը որ թագաւորէն սկսաւ .

Պ . Ատիսէն , որ Մէոնի յաջորդներէն մէկն էր :

Հ . Ատիսեան թագաւորաց գլխաւորները որոնք են .

Պ . Մէոն , Ատիս , Լիւզոս , և Ռմփաղէ թագուհին :

Հ . Հերակլեանց իշխանութիւնը ուսկից սկսաւ .

Պ . Արգոնէն՝ որ Հերակլի որդին կրտսեպուէր :

Հ . Հերակլեանց ցեղէն որ թագաւորը անուանի է .

Պ . Կանդաւղէս :

Հ . Կանդաւղէսի վրայ ինչ կը պատմուի .

Պ . Կանդաւղէս ճարտար իշխան մը ունէր Գիւգէս անունով որ թագուհւոյն սիրելի եղած էր . աս իշխանը ղինքը սպաննեց . հիները ըսին թէ Գիւգէս աս սպանութիւնը մոգական մասնիով մը ըրաւ , ինչպէս կը պատմէ Երոզոտոս :

Հ . Մերմեանց ցեղին առաջին թագաւորը ո՞վ եղաւ .



Պ . Գիւղէս՝ որ զՎանդաւղէսն սպաննեց,  
և ինքն Ագեղայոսի կամ Լամոնի ցեղէն՝  
Հերակլի և Ոմփաղեայ որդին էր :

Հ . Գիւղէսի Թագաւորութեան ատենը  
ի՞նչ հանդիպեցաւ .

Պ . Աս Թագաւորը փոքր Ասիոյ Յունաց  
հետ շատ պատերազմներ ունեցաւ, ու յաղ-  
թեց անոնց :

Հ . Իր յաջորդներուն մէջ երևեւիները  
որո՞նք են .

Պ . Արդիս, Աղիատէս և Կրեսոս՝ որ Լիւ-  
դացւոց վերջին Թագաւորը եղաւ :

Հ . Կրեսոս ի՞նչ տեսակ մարդկանց վրայ  
սէր կը ցուցնէր .

Պ . Գիտուն ու իմաստուն մարդկանց . ա-  
սոնց մէջ երևեւիներն են Եսովպոս առակա-  
խօսը և Սողոն :

Հ . Կրեսոս ի՞նչ պատգամով խաբուեցաւ .

Պ . Պատգամ մը ելաւ իրեն Թէ « Անցեալ  
ընդ Ալիս գետ՝ քակտեսցես զիշխանութիւն  
մեծ » . բայց աս պատգամին մտիկ ընելով  
իր իշխանութիւնն ու Թագաւորութիւնը  
կործանեց :

Հ . Կրեսոս ո՞ւր յաղթուեցաւ Կիւրոսէն .

Պ . Նախ Թիմբրեայ մօտ, ետքը Սարդիկէ  
քաղաքին առնուելու ատենը . ան միջոցին  
Կրեսոս սլ բռնուեցաւ :



Հ. Կիւրոս Կրեսոսի հետ ի՞նչպէս վարուեցաւ .

Պ. Կիւրոս անոր կեանքը շնորհեց :

Հ. Ասորեստանի հին տէրութեանը խնայէն ետև Մարաց թագաւոր ո՞վ եղաւ .

Պ. Վարբակէս Մարաց նախարարը՝ Մարաց առջի թագաւորն եղաւ :

Հ. Վարբակէս որչափ ատեն թագաւորեց .

Պ. Վարբակէս 26 տարի թագաւորեց :

Հ. Իր մեռնելէն ետև Մարաց երկիրը ի՞նչ եղաւ .

Պ. Առանց կառավարութեան մնաց քաղաքական խռովութեանց մէջ :

Հ. Մարք զո՞վ թագաւոր ընտրեցին .

Պ. Դիովկ՝ որ ժողովրդեան սիրելի էր իր արդար դատաստաններուն համար :

Հ. Ի՞նչ գիտելէք կայ Դիովկայ թագաւորութեան և իրեն բարուցը վրայ .

Պ. Եկբատան քաղաքը եօթը պարսպով պատեց, և որովհետև աշխարհակալութեան սէր չունէր՝ բոլոր ոգւով իր հպատակները կրթելու ջանացաւ :

Հ. Դիովկայ յաջորդը ո՞վ եղաւ .

Պ. Իր որդին Փրաւորտ, որ պատերազմասէր երիտասարդ մըն էր :



Հ. Փրաւորաւ ի՞նչ յաղթութիւններ ը-  
րաւ, ու ի՞նչպէս մեռաւ .

Պ. Պարսիկները նուաճեց, փոքր Ասիոյ  
գաւառներուն ալ ինչուան Ալիս գետը տի-  
րեց . բայց Նինուէի Նաբուգոդոնոսոր Ա  
Թագաւորէն յաղթուելով՝ ձեռք ընկաւ ու  
սպաննուեցաւ :

Հ. Փրաւորտայ ո՞վ յաջորդեց, անոր Թա-  
գաւորուէ գլխաւոր գործքերը ի՞նչ եղան :

Պ. Փրաւորտայ որդին Կիաքսար Ա  
յաջորդեց իր հօրը . Նաբուգոդոնոսորայ  
դէմ յաղթութիւն մը ընելով՝ հօրը մահուան  
վրէժը հանեց . և երբոր Սկիւթացիները որ  
իր երկիրը եկեր կոխեր էին՝ իր տէրութե-  
նէն հալածեց, Նաբուպաղասարայ հետ միա-  
բանեցաւ ու Նինուէն կործանեց (625) :

Հ. Կիաքսարայ Ա ո՞վ յաջորդեց .

Պ. Աժդահակ՝ որ Կիւրոսի պապն էր :

Հ. Աժդահակ ի՞նչպէս մեռաւ .

Պ. Մեր Տիգրան Թագաւորին դէմ անի-  
րաւութեամբ պատերազմի ելլելով՝ անկէ  
զարնուեցաւ ու մեռաւ :

Հ. Աժդահակայ ո՞վ յաջորդեց .

Պ. Կիաքսար Բ, իր որդին՝ Կիւրոսի հօր  
եղբայրը :

Հ. Ի՞նչ առթով Կիւրոս Պարսից և Մա-  
րաց Թագաւորութիւններուն տիրեց .



Պ . Կիւրոս՝ Պարսից Կամբիւս թագաւորին որդին ըլլալով՝ երբոր Կիաքսար Բ Մարաց թագաւորը մեռաւ, անոր թագաւորութեանն ալ տիրեց՝ մեր Տիգրան թագաւորին օգնութեամբը :

Հ . Կիւրոսի գլխաւոր գործքերը որո՞նք են .

Պ . Կրեսոսի և Ներիգլիսսորայ հետ պատերազմեցաւ . առաջին պատերազմին մէջ (555) Ներիգլիսսոր սպաննուեցաւ, Կրեսոս ալ իր երկիրը փախաւ քաշուեցաւ . բայց Կիւրոս թիսֆրեայ մօտ անոր հետը զարնըւելով յաղթեց, ետքը Սարգիկէն ալ առնելով զԿրեսոս բռնեց : Տիրեց Ասորեստանի, Փիւնիկիի, Պաղեստինու, Արաբիոյ մէկ մասին և Բաբելոնի . և գրեթէ բոլոր արևելք իրեն հնազանդեցաւ : Իր թագաւորութեան առաջին տարին Հրէից գերիներն ազատեց (536) ու հրովարտակաւ Երուսաղէմ գարձուց : Ինքը հաստատեց կ'ըսեն նաև սուրհանդակ բանեցընելու սովորութիւնը, տէրութիւնը քսան նախարարութիւն բաժնեց, և այլն :

Հ . Կիւրոսի պատմութիւնը ո՞ր մատենա գիրները գրած են .

Պ . Յունաց պատմիչներէն Երոզոտոս և Քսենոփոն միայն մնացած են հիմա՝ որ Կիւրոսի պատմութիւնը գրած են . բայց առնոնք ալ իրարմէ բոլորովին տարբեր կը պատմեն Կիւրոսի վարքը : Իսկ մեր մէջ Մովսէս



Խորենացին քանի մը բան կը յիշէ՝ երկու-  
քէն ալ տարբեր, բայց աւելի Նրոդոտոսի  
պատմածներուն նման :

Հ . Պարսից կառավարութեան կերպը  
ի՞նչպէս էր .

Պ . Կառավարութիւնը միասպետական էր :

Հ . Դարեհի ատեն թագաւորին իշխա-  
նութեանը վրայ ի՞նչ փոփոխութիւն ե-  
ղաւ .

Պ . Եօթն իշխանաց ատեն մը հաստա-  
տուեցաւ, որով թագաւորին իշխանու-  
թիւնը չափաւորեցաւ, և իր յաջորդնե-  
րուն ատենը նախարարաց իշխանութիւնը  
մեծնալով թագաւորինը սղտիկցաւ :

Հ . Պարսիկք ի՞նչ կը պաշտէին .

Պ . Զուր, կրակ, երկիր և օդ :

Հ . Պարսից հաւատքը ի՞նչ կ'ըսուի .

Պ . Մոգո-Բի-ն կամ Կրակապաշտ-Բի-ն :

Հ . Պարսից կրօնին մէջ գերագոյն էակին  
անունն ի՞նչ էր .

Պ . Զրուան :

Հ . Բարի և չար սկզբանց անուններն  
ի՞նչ էին .

Պ . Բարւոյն սկիզբը Որմիզդ կ'ըսուէր, և  
չարինը Արհմն :



Հ . Ասոնցմէ զատ ի՞նչ աստուած կը գը-  
նէին .

Պ . Մի՛հր , որ բարւոյն ու չարին միջնոր  
դը կը սեպուէր :

Հ . Պարսիկները տաճար և սեղան ու-  
նէին .


Պ . Պարսիկք իրենց զոհերը բացօթեայ  
տեղ կ'ընէին , և սովորաբար պարսպասպատ  
տեղուանք մոգերը կրակը վառ կը պահէին :

Հ . Կրակ պահելու տեղերը ի՞նչ կը  
սուէին .

Պ . Կրակափուն կամ Ափրո-շան :

Հ . Պարսից մոգերուն գլխաւոր պաշտօն-  
ները որո՞նք էին .

Պ . Ազգին խմաստուն , փիլիսոփայ և  
մարգարէ անձինքը մոգերն էին . քրմու-  
թիւնը , գիտութիւնը , ազգին հաւատքը  
քարոզելը իրենց միայն պահուած էր :







## Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

## Պ Ա Ր Ս Ի Յ



Կիւրսի յաջորդաց պատմութիւնը ինչո՞ւն Դա-  
րեհի Յոնաց զէմ պատերազմին սկիզբը :

Հ . Արիւսի ոմ յաջորդեց .

Պ . Իր որդին Կամբիւս :

Հ . Ի՞նչ պատերազմով իր Թագաւորու-  
թեան սկիզբը անուանի եղաւ .

Պ . Եգիպտացւոց վրայ պատերազմ բա-  
նալով նուաճեց զանոնք :

Հ . Կամբիւս ի՞նչ հնարքով տիրեց Ե-  
գիպտոսի Պեղուսիոն քաղաքին .

Պ . Կամբիւս բանակին առջևը ձգեց շատ  
մը կատու , շուն , ոչխար և ուրիշ կենդանի-  
ներ . և որովհետև աս կենդանիները Եգիպ-  
տացիք կը սաշտէին , ճամարձակելով իրենց  
աստուածներուն դէմ պատերազմիլ՝ յաղ-



Թուեցան, և քաղաքը Պարսից ձեռքն ընկաւ :

Հ . Ան ատենները ո՞վ էր Եգիպտոսի Թագաւորը, և ի՞նչ եղաւ .

Պ . Փռամենէսն էր, որ սաստիկ սլատերազմի մը մէջ յաղթուելով՝ Կամբիւսի ձեռքն ընկաւ . անիկայ Թէսպէտ նախ վրան գթացաւ՝ բայց ետքը մեռցուց զինքը :

Հ . Կամբիւս Արամազդայ Ամմոնի կուտանը վրայ յարձըկած Ժամանակը ի՞նչ սլատահեցաւ .

Պ . Բոլոր բանակը անապատներուն աւաղինն մէջ թաղուեցաւ :

Հ . Կամբիւս Եգիպտոս ի՞նչ անգթութիւններ ըրաւ, և Շմերդ մոգ ի՞նչպէս թագաւորեց .

Պ . Կամբիւս Թեբէ քաղաքը կործանեց, Եգիպտացւոց կուռքերը բոլոր վերուց, Ասիս կով աստուածը որ Եգիպտացիք կը սլաշտէին՝ սպաննեց, քուրմերն ալ թրէ անցուց և իր Շմերդ անուհով եղբայրը մեռցուց : Ասոնցմով ամենուն ատելի եղաւ, և Շմերդ մոգը՝ որ Կամբիւսի սպաննած Շմերդ եղբօրը շատ կը նմանէր՝ թագաւոր դրին :

Հ . Կամբիւս ի՞նչպէս մեռաւ .

Պ . Ձի հեծնելու Ժամանակը՝ թուրը սլատանէն սահելով՝ ելաւ ու անկէ խոցուելով մեռաւ :



Հ . Ո՞րչափ ատեն թագաւորեց .

Պ . Ութը տարի թագաւորեց , 530էն ինչուան 522 :

Հ . Սուտ Շմերդը որչափ ատեն թագաւորեց .

Պ . Վեց ամիս միայն :

Հ . Իրեն խաբէութիւնը ի՞նչպէս յայտնուեցաւ .

Պ . Գիտէին որ Վիւրոս թագաւորը Շմերդ անուանով մոգի մը ականջները կտրել տուեր էր : Ասոր կանանց մէկը՝ իր հօրը խորհրդովը գիտեց իմացաւ որ աս Շմերդ թագաւորին ականջներն ալ կտրած էին :

Հ . Ի՞նչ կերպով Շմերդ մոգ աթուէն ձգուեցաւ .

Պ . Եօթը նախարար միաբանելով Շմերդ մոգը իր կուսակիցներուն հետ սպաննեցին , ժողովուրդն ալ կատղած՝ գրեթէ ամէն մոգերը ջարդեցին : Աս սպանութիւնը մոգասպանութիւն կ'ըսուի :

Հ . Գարեհ Աշտասպեան ի՞նչ հնարքով թագաւորեց .

Պ . Եօթը նախարարները Շմերդ մոգը սպաննելէն ետեւ խօսք գրին մէջերնին որ որոշեալ տեղ մը արևուն ելլելու ժամանակը երկրպագութիւն ընելու երթան , և որուն ձին որ ամենէն առաջ խինջայ՝ ան թագաւորէ . Գարեհի ձիասպանը վարպետութեամբ



իր տիրոջը ձիուն վնջել տուաւ, անով  
Դարեհ թագաւորեց :

Հ . Դարեհ Վշտասպեանին սուրբ դերքը  
ի՞նչ անուն կուտայ .

Պ . Ոմանք կ'ըսեն թէ սուրբ դրոց մէջ  
Ասուերոս ըսուածը աս Դարեհն է :

Հ . Դարեհի թագաւորութե՛ վեցերորդ  
տարին որ քաղաքն իրմէ գլուխ քաշեց .

Պ . Բաբելոն :

Հ . Ի՞նչ կերպով նորէն նուաճեց Բաբելոնը .

Պ . Չոպիւռոս անունով իշխանը ինքնիրեն  
քիթը և աղանջները կտրեց, ու ձեացը  
նեղով թէ Դարեհին անգթութեամբը ան  
խեղճութեան հասեր է՝ քաղաք մտաւ :  
Բաբելոնցիք ալ հաւտաւով ձեռքը զօրք տը-  
լին Դարեհին դէմ . ան ատենը Չոպիւռոս  
քաղաքին դռները բացաւ ու Դարեհի ձեռ-  
քը մատնեց :

Հ . Դարեհի Սկիւթացոց դէմ ըրած  
պատերազմը ի՞նչպէս վերջացաւ .

Պ . Դարեհ տեսնելով որ Սկիւթացիք կը  
փախչին՝ ետևէն ընկաւ ինչուան Սկիւթիոյ  
անապատները, բայց սովը սաստկանալով  
ստիպուեցաւ ետ դառնալ՝ առանց թշնա-  
մեաց ետևէն հասնելու . իրեն հետ ետ դար-  
ձան իր բազմաթիւ բանակէն մնացած սա-  
կաւաւոր զինուորները :



Հ. Գարեհի Հնդկաց հեռ պատերազմը  
ի՞նչ վերջ ունեցաւ .

Պ. Քիչ ատենուան մէջ զանոնք նուա  
ճեց :

Հ. Գարեհ ի՞նչ պատճառաւ Յունաց  
դէմ պատերազմ բացաւ .

Պ. Յոնիացւոց ապստամբութիւնը և Սար  
դիկէի կրակը պատճառ առնելով Յունաց  
վրայ պատերազմի ելաւ :

Հ. Յունաց դէմ պատերազմին վերջը  
ի՞նչպէս եղաւ .

Պ. Գարեհ նախ նաւատորմիդ մը խրկեց  
վրանին, բայց մըրիկով մը փճացան նաւերը .  
ետքը անթիւ զօրք խրկեց՝ որ հաղիւ կրցան  
Մակեդոնիան նուաճել :

Հ. Առջի պատերազմը ի՞նչ վերջ ու  
նեցաւ .

Պ. Մեծ զօրաց բանակ մը Գատ զօրա  
վարին ձեռքը տալով խրկեց, բայց անիկայ  
Մարաթոնի քով Միլտիադէսէն յաղթուե  
ցաւ :

Հ. Գարեհ որչափ ատեն թագաւորեց,  
և երբ մեռաւ .

Պ. 37 տարի թագաւորելէն ետև՝ 48Յին  
մեռաւ :

Հ. Գարեհին ո՞վ յաջորդեց .

Պ. Իր որդին Քսերքսէս Ա :



Հ. Քսերքսէսի առաջին արշաւանքը որն  
էղաւ .

Պ. Եգիպտացիք որ ապստամբեր էին՝  
նուաճեց :

Հ. Քսերքսէս ինչպէս Յունաստանի վը-  
րայ վազեց, ու Թերմոպիլէէն ինչպէս ան-  
ցաւ .

Պ. Քսերքսէս իրեք միլիոն զօրքով վազեց  
Յունաստանի վրայ, ու մէկը չկրցաւ իր  
սարսափելի զօրութեանը դէմ դնել, ին-  
չուան եկաւ հասաւ Թերմոպիլէի կիրճը .  
հոն Լեւոնիդաս Սպարտացոց թագաւորը  
300 հոգւով կը սպասէր, և 20,000 հոգի  
Պարսիկներէն ջարդելով ինքն ալ իրեննե-  
րուն հետ հոն ընկաւ մեռաւ :

Հ. Սաղամինայի սլատերազմը որն է .

Պ. Ան օրը որ Լեւոնիդաս սպարտացին  
Թերմոպիլէի կիրճը ընկաւ, Պարսից նաւա-  
աորմիդը Արտեմիսիոնի քով յաղթուեցաւ .  
քիչ ատենէն Յոյնք Թեմիստոկղէսի ճարտա-  
րութեամբը Սաղամինայի քով բոլորովին  
յաղթեցին Պարսից (480) . ան ատեն Քը-  
սերքսէս սարսափած՝ Ելլէսպոնտոսէն նո-  
րէն անդին անցաւ ու իր երկիրը քաշուե-  
ցաւ :

Հ. Երկրորդ տարին ինչ սլատերազմ  
էղաւ .

Պ. Երկրորդ տարին Պղատիէս քաղաքին  
քով Պաւսանիաս յաղթեց Մարդոնիոսին .



ան միջոցին ալ Միկաղեայ մօտ Յոնիացիք  
ծովու և ցամաքի վրայ Պարսիկներուն յաղ-  
թեցին :

Հ . Քսերքսէս ինչպէս մեռաւ .

Պ . Իր թիկնապահ զօրաց գլխաւորը Ար-  
տաւան զինքը մեռցուց :

Հ . Քսերքսէս որչափ ատեն թագաւոր-  
րէց .

Պ . Քսերքսէս 13 տարի թագաւորէց .  
485էն ինչուան 472 :

Հ . Քսերքսէսի ո՞վ յաջորդէց .

Պ . Քսերքսէսի յաջորդէց Արտաշէս Ա,  
որ Երկայնաձեռն կըսուի :

Հ . Երկայնաձեռն Արտաշէսին առաջին  
գործքը որն եղաւ .

Պ . Արտաւանը սպաննելով հօրը մա-  
հուան վրէժը առաւ :

Հ . Վիսնն ինչ յաղթութիւններ ըրաւ .

Պ . Աթենացիք Պարսից խռովութիւնը  
առիթ առնելով Թրակիոյ տիրեցին , Վի-  
սննի առաջնորդութեամբը Վիպրոս կղզւոյն  
վրայ ալ յարձրկեցան , և այնչափ առաջ գը-  
նացին որ Արտաշէս նեղը մտնելով հաշտու-  
թիւն ընելու յանձն առաւ :

Հ . Պարսիկք ինչ գիտուածով աւելի  
տկարացան .



Պ . Մէկ սոսկալի ժանտամահ մը բոլոր Պարսկաստանը աւերակ դարձուց , և ան առթով Հիպպոկրատէս Աովացի երևելի բժշկին վէհանձնութիւնը փառաւորուեցաւ :

Հ . Հիպպոկրատայ վէհանձնութիւնը ո՞րն է .

Պ . Հիպպոկրատէս Պարսից թագաւորին տուած ոսկին չառաւ ու չուզեց Պարսկաստան երթալ , ըսելով թէ աւելի հայրենակցացս քան թէ օտարաց օգտակար կ'ուզեմ ըլլալ :

Հ . Արտաշէս Ա , ո՞րչափ ատեն թագաւորեց .

Պ . Արտաշէս 48 տարի թագաւորեց . 472էն ինչուան 424 :

Հ . Արտաշէսի իրեք յաջորդներուն անունները որո՞նք են .

Պ . Քսերքսէս Բ , Սոգդիանոս և Դարեհ Բ , որ Նոթոս կամ Հարճորդի կ'ըսուէր :

Հ . Արտաշէս երկրորդին թագաւորութեան ժամանակը ի՞նչ հանգիպեցաւ .

Պ . Արտաշէս՝ որ Հարճորդի Դարեհին յաջորդն էր՝ իր եղբօրը Վիւրոսի գէմ պատերազմի ելաւ որ իրմէ ապստամբեր էր . Վիւրոս հարիւր հազար օտարազգի զօրքով և տասուիրեք հազար Յոյներով գէմն ելաւ . Վուհաքսա քաղաքին քով զարնուեցան , և



Բարեւոյնի մօտ Աիւրոս Արտաշէսէն սպաննուեցաւ :

Հ . Որն է Յունաց անուանի նահանջը ,  
և ան սլաւոմուծիւնը գրողին անունն  
ի՞նչ է .

Պ . Աիւրոսի օգնութեան գնացող զօրքին  
զօրասլետը Աղէարքոս ձեռք իյնալով մե-  
ռաւ . Քսենոփոն ասթենացին անոր տեղը  
յաջորդելով տասը հազար զօրքը շատ վը-  
տանգներէ ազատելով ետ դարձուց ին-  
չուան Յունաստան , և աս բանիս սլաւոմու-  
ծիւնն ալ ինքը գրեց :

Հ . Սպարտացուց որ թագաւորը զԱրտա-  
շէս սարսափեցուց .

Պ . Ագեսիդայոս :

Հ . Յոյնք իրենց քաղաքական խռովու-  
թեանցը համար Պարսից հետ ի՞նչ դաշնա-  
դրութիւն ըրին .

Պ . Ան դաշինքով Անտաղկիդաս Պարսից  
թագաւորին թողուց փոքր Ասիոյ մէջի յոյն  
գաղթականները :

Հ . Արտաշէս Բ ի՞նչ տնական վիշտ ու-  
նեցաւ .

Պ . Թէպէտ և թագաւորութեանը կող-  
մանէ երջանիկ էր , բայց ընտանեացը կող-  
մանէ թշուառացաւ . վասն զի իր որդւոցը  
մէկը Դարեհ ետեւէ եղաւ զինքը սպաննե-  
լու . և թէպէտ անիկայ սլաւոմուծը գտաւ ,



բայց Արտաշէս սրտին ցաւէն քիչ ատենէն  
մեռաւ :

Հ . Արտաշէս ո՞րչափ ատեն թագաւո-  
րեց .

Պ . Արտաշէս Բ , 42 տարի թագաւորեց ,  
404էն ինչուան 362 :

Հ . Իրեն երկու յաջորդները որո՞նք են .

Պ . Ուլքոս իր որդին , և Արշէղ իր թոռը :

Հ . Ե՞րբ թագաւորեց Դարեհ Կողո-  
մանոս .

Պ . Դարեհ Գ , Կողոմանոս 336ին թա-  
գաւորեց :

Հ . Ան միջոցին Մակեդոնիա ի՞նչ վիճա-  
կի մէջ էր .

Պ . Մեծն Ալէքսանդր Մակեդոնացւոյ  
վրայ թագաւորեց :

Հ . Ալէքսանդր ի՞նչ յաղթութիւններ  
րով Պարսից թագաւորութիւնը կործա-  
նեց .

Պ . Գրանիկեայ , Իսսեայ և Արբեղայի  
յաղթութիւններովը Դարեհի թագաւո-  
րութիւնը կործանեց :

Հ . Դարեհ ի՞նչպէս մեռաւ .

Պ . Բակարիոյ Բեսոս նախարարը զինքը  
սպաննեց :



Հ. Պարսից թագաւորութիւնը որչափ  
ատեն քչեց Վիւրոսի թագաւորէլէն ին-  
չուան Դարեհի մահը .

Պ. Պարսից թագաւորութիւնը 206 տա-  
րի քչեց, 536էն ինչուան 330 :







## Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն

# Փ Ի Ի Ն Ի Կ Ե Յ Ի Ո Յ



ՏԻՐՈՒՄ ԴԻՐԵԼ, ՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՅԻՆԸ, ԳՈՂ-  
ԼՆԱԿԱՆՆԷՐԸ:

Հ. ՏԻՐՈՍ ընդ կ'իյնայ.

Պ. ՏԻՐՈՍ ՄԻՋԵՐԿԻՐԱՍԿԱՆ ՏՈՒՄԻՆ ԵՂԵՐ-  
ՔՐ շինուած էր, և մէջի բնակիչքը ՍԻՂՈՆ  
քաղաքէն եկած դաղթականներ էին:

Հ. ԻՆՅ առթով ՏԻՐԱԿԵՔ ՎԱՃԱՌՈՒ-  
ԿԱՆՈՒԹԵԱՄՔ ՏՈՂԿԵԿԱՆ.

Պ. ԱՐՈՒՆԵՍԻ ԵՐԿԻՐՆԻՆ անսպաղաքեր  
էր, ՓԻՆԻԿԵԿԵՔ ստիպուեցան իրենց ճար-  
տարուծեամբը երկրին պակասուծիւնը ու-  
րիշ տեղերու վաճառքներովը լեցրնելու:

Հ. ՏԻՐԱԿԵՐՈՅ սկիզբը ուսկից էր.

Պ. ՏԻՐԱԿԵՔ ՔԱՆԱՆԱԿԵՐՈՅ սերունդ  
էին:



Հ . Փիւնիկէի ամենէն հին քաղաքը ո՞րն էր .

Պ . Սիդոն՝ Տիւրոսի գլխաւոր քաղաքը ,  
որ հիմա Սայտա կ'ըսուի :

Հ . Փիւնիկէի կառավարութեան առջի  
կերպը ի՞նչպէս էր .

Պ . Միապետութիւն էր :

Հ . Փիւնիկէի առջի թագաւորը ո՞վ կը  
սեպուի , և ո՞ր ատեն կ'իյնայ .

Պ . Աբիբաաղ՝ Քրիստոսէ 1100 տարի ա-  
ռաջ :

Հ . Փիւնիկէի ո՞ր թագաւորը Դաւթի և  
Սողոմոնի հետ բարեկամացաւ .

Պ . Քիրամ , Աբիբաաղայ որդին , 1040ին :

Հ . Քիրամ Դաւթի ի՞նչ արուեստ սոր-  
վեցուց .

Պ . Նաւորդութեան արուեստը :

Հ . Սողոմոնի հետ ի՞նչ վերաբերութիւն  
ունեցաւ .

Պ . Քիրամ Երուսաղէմի տաճարին շի-  
նութեանը համար ազնիւ նիւթեր և ճար-  
տար արուեստաւորներ խրկեց Սողոմոնի :

Հ . Պիգմաղիոնի , Սիւքէոսի և Դիդէի վը-  
րայ ի՞նչ գիտելիք կայ .

Պ . Սիւքէոս Դիդէ թագուհւոյն էրիկն  
էր . Պիգմաղիոն՝ Դիդէի եղբայրը՝ սպան-  
նեց զՍիւքէոս . Դիդէ իր ունեցած հարըս-



տութիւնը ժողովեց վախաւ ու քանի մը հոգւով Վարքեդոն գնաց :

Հ . Ասորեստանի ո՞ր թագաւորը երուսաղէմի և Տիւրոսի տիրեց .

Պ . Նաբուգոդոնոսոր Բ :

Հ . Տիւրոսի առնուելէն ետև ի՞նչ տեսակ կառավարութիւն ունեցան Փիւնիկեցիք .

Պ . Թագաւորութիւնը վերցուեցաւ , ու տեղը Սոփեսոաց իշխանութիւնը յաջորդեց , որ տարեկան բդեշխից ժողով մըն էր . նոյն իշխանութիւնը ետքը Վարքեդոնի կառավարութեան մէջ ալ կար :

Հ . Միապետական իշխանութիւնը ե՞րբ նորէն հաստատուեցաւ .

Պ . Բաղատորայ ժամանակը ՏՏԿին , որ Ասորեստանեայց հարկատու եղաւ :

Հ . Տիւրացիք Վիւրոսի դէմ կեցան .

Պ . Երբոր Վիւրոս Տիւրոս քաղաքը սլաշարելու գնաց , Փիւնիկեցիք անձնատուր եղան :

Հ . Աղէքսանդրի ալ հնազանդեցան .

Պ . Տիւրացիք թէպէտ քաջութեամբ դէմ կեցան իրեն , բայց վերջապէս քաղաքը անոր ձեռքն ընկաւ :

Հ . Ծովու վրայ ի՞նչպէս ճամբայ կընէին Տիւրացիք .



Պ . Բեւեռային աստղերը իրենց առաջ  
նորդ առնելով :

Հ . Փիւնիկէէն ելած գաղթականները  
Սպանիոյ , Սիկիլիոյ և Ափրիկէի ո՞ր քաղաք-  
ները բնակեցան .

Պ . Տարտեսա , Գադէս և Վարտէա՝ Սպա-  
նիոյ հարաւային կողմը . Պանորմոն և Աիլի-  
բէոն՝ Սիկիլիոյ մէջ : Ուտիկէ , Ադրոմէս և  
Վարթագինէ՝ Ափրիկէի հիւսիսային կողմը :

Հ . Փիւնիկէցւոց ըրած երևելի գիւտերը  
որո՞նք կը սեպուին .

Պ . Վ՛ըսուի թէ Փիւնիկէցիք հնարեցին  
նաւու առագաստները , ապակի շինելուն  
կերպը , մետաղ գործելը , չափ և կշիռ , լա-  
թի վրայ բանուածքը , և ծիրանի ներկը՝ ու-  
րով շատ հարստացան : Աս ծիրանի ներկը  
հովիւ մը գտաւ՝ կ'ըսեն , տեսնելով որ օր  
մը իր շանը բերանը ծիրանի ներկուէր էր՝  
տեսակ մը խեցեմորթ ուտելուն համար :

Հ . Վաղմոս փիւնիկէցին ի՞նչ արհեստ  
մտուց Յունաստան .

Պ . Գիր գրելու արհեստը և Յունաց հին  
այբուբէնը՝ որ 16 գիր էր :

Հ . Փիւնիկէցիք ի՞նչ սոսկալի սովորու-  
թիւններ ունէին .

Պ . Փիւնիկէցիք և Վարքեդոնացիք իրենց  
աստուածներուն մարդազոհ կ'ընէին :





# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## Յ Ո Ւ Ն Ա Յ



Յունաստան : — Առջի հին բնակիչք : — Հել-  
 ևնք : — Դի-ցառանց ժամանակներուն պատմա-  
 Բի-նք : — Ողբձայրական Բու-սական :

Հ . ՅՈՒՆԱՍՏԱՆ ո՛ւր կ'իյնայ .

Պ . Յունաստան Եւրոպայի հարաւային  
 կողմը կ'իյնայ . սահմանն է հիւսիսէն Մա-  
 կեդոնիա և Լիւրիկէ , արևելքէն Արշիպե-  
 ղագոս , արևմուտքէն Յոնիական ծովը , հա-  
 րաւէն Միջերկրական ծովը : Իրեք մաս կը  
 բաժնուէր . Ելլադա , Պեղոպոնես և Կրղ-  
 զիները :

Հ . Աս երկրիս առջի բնակիչները որո՞նք  
 էին .

Պ . Հելլէնք , Լէլեգեանք , Կուրետացիք  
 և Պեղասգեանք :



Հ . Հին Յուճապ քարքարոսու թիւնն ի՛նչ  
աստիճանի էր .

Պ . Այնչափ վայրենի կեանք ունէին որ  
խոտերով, արմատներով ու ծառի տե-  
րւներ ուտելով կ'ապրէին կ'ըսէն :

Հ . Յուճաստանի մէջ առջի քաղաքը ո՞րն  
էրաւ, և ե՞րբ շինուեցաւ .

Պ . Առջի քաղաքն էրաւ Սիկիոն, որ Ե-  
գիպտոս կանգնեց Քրիստոսէ 2164 տարի  
առաջ :

Հ . Ինչքոս փիւնիկեցին ե՞րբ եկաւ ու  
բնակեցաւ ան երկիրը որ ետքը Արգողիս  
ըսուեցաւ .

Պ . Քրիստոսէ 1986 տարի առաջ :

Հ . Արգողիս անուճը ինչէ՞ն առաջ ե-  
կած է .

Պ . Արովհետեւ քաղաք մը կար հոն՝ Ինա-  
քոսի թոռանը որգւոյն Արգոս անուճովը  
շինուած, անկէ գաւառն ալ Արգողիս  
ըսուեր է :

Հ . Կորնթոսն ո՞վ շինեց .

Պ . Ինչքոսի քոյրը Նփիւրէ :

Հ . Ինչքոսի թոռը Պեղասդոս՝ ի՛նչ սոր  
վեցուց Արկադացոց .

Պ . Արկադացոց սորվեցուց խրճիթ շի-  
նել, կենդանեաց մորթը իրենց հագուսա-  
րնել, և խոտի տեղ կաղին ուտելով ապրիլ :



Հ. Ինաքեանք ի՞նչպէս հաշածուեցան Արգողիսէն .

Պ. Սեսոսարի եղբայրը Դանաւոս հաշածեց զիրենք անկէ :

Հ. Դանաւոս ի՞նչ արհեստ սորվեցուց Արգողիսացուց .

Պ. Երկրագործութիւն և ուրիշ մէկ քանի օգտակար արհեստներ :

Հ. Իր տէրութեանը վրայ ի՞նչ քաղաք աւելցուց Դանաւոս .

Պ. Միկէնք քաղաքը :

Հ. Դանաւոսի յաջորդներէն որո՞նք եղան երևելի .

Պ. Դանաւոսի որդին էր Պերսէոս . աւոր ցեղէն ելան Ելեկարիոն , Սթենեղոս , Աղկէոս . աւոր ցեղէն ալ Հերակլէս կամ Հերքիւլէս՝ Հերակլեանց տոհմին առաջինը :

Հ. Սպարտան ո՞վ շինեց , և ո՞ր ասէն .

Պ. Ինաքոսի թուր հիմնեց Սպարտա քաղաքը Քրիստոսէ 1880 տարի առաջ :

Հ. Ո՞ր Եգիպտացին էր որ 200 տարի ետքը Սպարտան մեծցուց .

Պ. Լէլէքս :

Հ. Լէլէքսի ո՞վ յաջորդեց , և ի՞նչ արհեստ հնարեց Յուսաստանի մէջ .



Պ . Միւղէս , որ ցորեն ալալու համար  
երկանաքարը գտաւ կ'ըսեն :

Հ . Եւրոտաս դէտը առաջ ինչ էր .

Պ . Առաջ ընդարձակ ճահիճ մըն էր .  
բայց Սպարտացուց Եւրոտաս թագաւորը  
դէտ ձևացուց :

Հ . Ինչ պատճառաւ Սպարտան շատ  
անգամ Լակեդեմոն ալ կ'ըսուի .

Պ . Վասն զի Լակեդեմոն Սպարտայի  
մօտ քաղաք մը շինեց , և իր անուամբը կոչ-  
ւեց . անկէ Սպարտան ալ Լակեդեմոն ը-  
սուեցաւ :

Հ . Ովգիգէսի վրայ ինչ գիտելիք կայ .

Պ . Ովգիգէս իր անուամբը կոչուած ջրը  
հեղեղին համար անուանի է . Քրիստոսէ  
1869 տարի առաջ Կիմմերեան Սկիւթիայէն  
եկաւ , Ատտիկէ և Բէոլլոիա գաւառներուն  
տիրեց :

Հ . Աթէնքն ո՞վ շինեց .

Պ . Կեկրոսսս եգիպտացին :

Հ . Թեբէի միջնաբերդը ո՞վ շինեց .

Պ . Թեբէի միջնաբերդը , որ Կագմէա ալ  
կ'ըսուի , Կագմոս փիւնիկեցին շինեց :

Հ . Ո՞վ ու ինչպէս տիրեց Թեսսաղիա գա-  
ւառին հին ատենը .

Պ . Թեսսաղիան 1900 թուականէն 'ի



վեր Պեղասագեանց ձեռքն էր . Դեւկալիոն  
1700ին ատենները Վովկասային Սկիւթիայ  
էն եկաւ տիրեց ան գաւառին :

Հ . Դեւկալիոնի սերնդոցը վրայ ինչ գի  
տելիք կայ .

Պ . Դեւկալիոնի ու իր Պիւռուա կնոջը  
Պրոտոգենիա աղջկանէն ծնան Եթլիոս ,  
Ամփիարիոն՝ Ատտիկէի Թագաւորը՝ որ ան  
զաւակ էր , Հելլէն՝ որ իրեք որդի ունեցաւ ,  
Դովրոս , Եւոզոս և Քսութոս . Դովրոս ա  
ռանց զաւկի մեռաւ . Եւոզոս եօթը որդի  
ունեցաւ , որոնց մէջ անուանիներն են Սի  
սիփոս և Սաղմոնէոս . իսկ Քսութոս եր  
կու որդի ունեցաւ , Յոմի և Աքէոս :

Հ . Ելլագայի , Դովրացւոց , Եւոզացւոց ,  
Յոնիացւոց կամ Յունաց , և Աքայեցւոց ա  
նուաններուն սկիզբը ինչ է .

Պ . Թեասաղիոյ գաւառները Ելլագա  
ըսուեցան , բնակիչքն ալ Հելլէնացիք՝ Դեւ  
կալիոնի Հելլէն որդւոյն Թագաւորութեան  
Ժամանակը . իսկ Դովրացիք , Եւոզացիք ,  
Յոնիացիք և Աքայեցիք՝ իրեն որդւոցը և  
Թոռանցը Ժամանակ անոնց անուանները ա  
ռին :

Հ . Եւոզացւոց առաջին գաղթականնե  
րը որոնք եղան .

Պ . Եւոզացիք իրենց նախնեաց երկրին  
մէջ հաստատուէլէն ետքը՝ գաղթականներ  
խաւրեցին Փովկիա , Բէովտիա , Աորնիթոս ,



Եղիա և Մեասենիա (Քրիստոսէ առաջ  
1480էն ինչուան 1340) :

Հ . Յոնիացիք Յունաստանի ո՞ր գաւառ-  
ներուն տիրեցին .

Պ . Ատաիկէ և Աքայիա գաւառներուն  
(1480էն ինչուան 1370) :

Հ . Աքայեցիք ո՞ր գաւառներուն մէջ  
տարածուեցան .

Պ . Արգոզիա և Լակոնիա (1380) :

Հ . Դովրացիք ի՞նչ վիճակ ունեցան .

Պ . Հերակլեանց գործակից ըլլալով ամէն  
բանի մէջ՝ անոնց վիճակն ունեցան :

Հ . Ո՞վ հալածեց Հերակլեանքը Պեղո-  
պոնեակն .

Պ . Եւրիսթէոս , որ Պեղոպսի որդւոյն  
Ատրէոսի աներձագն էր :

Հ . Հերակլեանք որո՞նք առաջնորդու-  
թեամբ և ո՞ր ժողովրդեան օգնելովը իրենց  
հայրենիքը նորէն ձեռք ձգեցին .

Պ . Հերակլեանք Դովրացւոց օգնութիւն  
և Հերակլեսի հիւղոս որդւոյն առաջնոր-  
դութեամբը նորէն տիրեցին Պեղոպոնեսի :

Հ . Եւրիսթէոս Հերակլեանց հետ ի՞նչ  
սպառերազմ ունեցաւ .

Պ . Սաստիկ սպառերազմ մը ըրաւ Կորըն-  
թոսի սարանոցին մէջ :



Հ . Աս պատերազմին հետեանքը ի՞նչ  
եղաւ .

Պ . Եւրիսթէոս իր որդւոցը հետ մեռաւ .  
բայց յաղթողներն ալ իրենց յաղթութիւ-  
նը չկրցան վայելել . վասն զի մէջերնին թան-  
տամահ իյնալով ստիպուեցան Աթենացւոց  
Թեսէոս թագաւորին ապաւինելու :

Հ . Պեղոպոնէս բաւը ուսկից անուամբ է .

Պ . Պեղոպսին անուանէն :

Հ . Ո՞վ էր Պեղոպս , և ի՞նչպէս բնակե-  
ցաւ Յունաստան .

Պ . Պեղոպս՝ Սիպիւղիոյ Տանտաղոս թա-  
գաւորին որդին ստիպուելով իր հայրենի-  
քէն դուրս ելլելու , գնաց Յունաստան բնա-  
կեցաւ , և իր Ատրէոս և Թիեսա որդւոցը  
հետ Պեղոպոնէսի մեծ՝ մասին տիրեց :

Հ . Պեղոպեանք ի՞նչպէս կամաց կամաց  
բոլոր Պեղոպոնէսի տիրեցին .

Պ . Ատրէոսի որդին Ագամեմնոն գրեթէ  
բոլոր երկիրը իրեն հնազանդեցուց . Մենե-  
ղաւոս անոր եղբայրը հեղինէին հետ կար-  
գուեցաւ , որ Սպարտացի էր , ասով Պեղո-  
պեանք Սպարտացւոց վրայ թագաւորեցին  
Կաստորէն և Պողիտեւկիսէն ետեւ , որ Տին-  
դարոսի որդիքն էին :

Հ . Պեղոպոնէսի հին անունը ի՞նչ էր .

Պ . Ապիոսի երկիր :



Հ . Տրոյիոյ պատերազմին պատճառը  
ի՞նչ եղաւ .

Պ . Պրիամոսի որդին Պարիս՝ յափրշտա-  
կեց զՀեղինէն որ Մենեղաւոսի կինն էր ,  
և աս եղաւ պատերազմին պատճառը :

Հ . Տրոյիոյ պատերազմէն առաջ եղած  
երկու մեծամեծ արշաւանքները որո՞նք են .

Պ . Արգոնաւորդաց արշաւանքը , և Եօթն  
իշխանաց պատերազմը :

Հ . Արգոնաւորդաց արշաւանքին վախ-  
ճանը ի՞նչ էր .

Պ . Իրենց վախճանը կ'երևնայ թէ Սև ծո-  
վուն վրայ սարսուղ աւազակները ջնջել էր ,  
և դէպ 'ի Վողքիսի եղերքը ճամբայ մը բա-  
նալ . վասն զի կը կարծուի թէ միջին Ասիոյ  
բոլոր հարստութիւնը հոն կը ժողվուէր :

Հ . Եօթն իշխանաց պատերազմին պատ-  
ճառը ի՞նչ էր .

Պ . Եգիպտոսի որդին Ետեոկղէս՝ Թեբէի  
Թագաւորութիւնը իր Պողինիկէ եղբօրը  
ձեռքէն առաւ . Պողինիկէ Ագրաստը օգ-  
նութիւն կանչեց , հետն ալ ուրիշ հինգ իշ-  
խաններ :

Հ . Եօթն իշխանաց պատերազմը ի՞նչ  
վերջ ունեցաւ .

Պ . Իրենց ջանքը փուճը գնաց , բայց յաղ-  
թուողները աս վրէժխնդրութիւնը յանձ-  
նեցին իրենց որդւոցը որ Եպիդոնեանք կ'ը-



սուին . Թեքէ առնուեցաւ , և Պողինիկէի  
որդին Թերասնգր թագաւորեց :

Հ . Տրովացւոց թագաւորութիւնը ո՞վ  
կանգնեց .

Պ . Դարդանոս Սամոթրակեցին :

Հ . Դարդանոսի յաջորդներուն մէջ ա-  
նուանիները որո՞նք են , և ի՞նչ երևելի գործք  
կը սպասուի վրանին .

Պ . Երևելիներն են Տրովս , որուն անու-  
նով կոչուեցան Տրովացիք . անոր որդին Ի-  
ղոս՝ որ Իղիոնը կանգնեց . Նաւամեզոն՝ որ  
Ապողոնի և Պոսիգոնի դէմ ըրած անիրա-  
ւութեամբը անուանի է :

Հ . Պրիամոս ի՞նչպէս թագաւորեց .

Պ . Հերակլէս բարկանալով Նաւամեզոնի  
անիրաւութեանը վրայ , գնաց Տրոյիան սա-  
շարեց , 1334ին առաւ , և Նաւամեզոնը՝ հեան  
ալ բոլոր որդիքը մեռուց , ու միայն Պրիա-  
մոսը թագաւորեցուց :

Հ . Պատմէ տեսնեմ Տրոյիոյ սատերազ-  
մին սկիզբը , երևելի դիպուածները և վախ-  
ճանը .

Պ . Հեղինէի յափշտակութեանը սատ-  
ճառաւ բարկացած՝ բոլոր Յունաստան ոտք  
ելաւ՝ Պարիսէն վրէժխնդրութիւն ընե-  
լու : Ողիսեւս Իթակայ թագաւորը , Աքիււ-  
լէս , Պատրոկղ , Այաքս , Դիոմեդէս , Նես-  
տոր և գրեթէ բոլոր յոյն իշխանները Ե-



րենց զօրքերովը գնացին . Ագամեմնոնը ի-  
րենց զօրավար ընտրեցին՝ որ Մենեղաւոսի  
եղբայրն էր : Քաղաքին սաշարուամբ տասը  
տարի քշեց , ան միջոցին Հեկատր քաջու-  
թեամբ մեծ անուն հանեց : Աերջասպէս խա-  
բէութեամբ մը տիրեցին Յոյնք Տրոյիոյ ,  
կրակ տուին այրեցին , Պրիամոսը սպաննե-  
ցին և թագաւորութիւնը կործանեցին :

Հ . Տրոյիոյ սպառերազմէն 86 տարի ետքը  
Գովրացւոց և Հերակլեանց վիճակը ինչպէս  
էր .

Պ . Հերակլեանք՝ Արիատոգեմի , Տեմենո-  
սի և Արեափոնտի առաջնորդութիւնը և Գով-  
րացւոց օգնելովը՝ նորէն Պեղոպոնեսս մտան  
և երկիրը վիճակով մէջերնին բաժնեցին :

Հ . Հերակլեանք Պեղոպոնեսսը ինչպէս  
բաժնեցին մէջերնին .

Պ . Տեմենոսին ընկաւ Արգոս և Միկէնք .  
Արեափոնտին Մեսսենիա , Եւրիսթենէսի և  
Պրոկղէսի՝ Լակոնիան :

Հ . Սպարտայի թագաւորութեան երկու-  
բաժնուելուն սատճառը ինչ էր .

Պ . Պատճառը ան եղաւ որ Սպարտայի  
թագաւորութեան մէկ մասին Եւրիսթենէս  
տիրեց՝ մէկալին Պրոկղէս :

Հ . Եւոզացիք և Յոնիացիք Պեղոպեանց  
հետ Պեղոպոնեսսէն քշուելէն ետև ինչ ե-  
ղան .



Պ . Մտտիկէ քաշուեցան , թէպէտ հոն  
ալ Դորացիք վրանին վազեցին :

Հ . Կողրոս ինչպէս մեռաւ .

Պ . Կողրոս որ Աթենացւոց ետքի թա-  
գաւորն էր՝ ինքզինքը հայրենեաց համար  
մեռուց , վասն զի պատգամ ելեր էր Դո-  
րացւոց՝ որ եթէ Աթէնքի թագաւորը մեռ-  
նի իրենք կը յաղթեն :

Հ . Յունաստան Հելլենացւոց իշխանու-  
թեան ատենը ինչ վիճակի մէջ էր .

Պ . Հելլենացիք Յունաստանի շատ դա-  
ւառներուն տիրելով մեծամեծ խստու-  
թիւններ կ'ընէին անոնց վրայ :

Հ . Յունաց դաղթականներուն պատ-  
ճառը ինչ է .

Պ . Յոյնք իրենց հայրենիքէն հալածուե-  
լով ստիպուեցան երթալ ուրիշ տեղուանք  
բնակութիւն հաստատել , ասանկով ցրուե-  
ցան Փոքր Ասիա , Միջերկրական ծովուն  
կղզիները և հարաւային Իտալիա :

Հ . Հելլենացիք ան ժամանակէն ինչուան  
Մարաց պատերազմներուն ատենները ինչ  
փոփոխութիւններ ունեցան .

Պ . Ան միջոցէն ինչուան Մարաց պատե-  
րազմները անդադար խռովութեանց մէջ  
էին . պատճառն էր իրենց զատ զատ ազգե-  
րէ բազադրուած ըլլալը՝ որով չէին կրնար ի-  
րարու հետ միաբանիլ :



Հ. Հասարակաց ազատութեան համար  
Խնչ ընկերութիւն հաստատուեցաւ .

Պ. Նոր ձևացած հասարակապետութիւն  
ները տեսակ մը ընկերութիւն հաստատե-  
ցին , և խօսք դրին որ նուիրակներ խաւրեն  
Գեղփիա Աճիկփիան անուամբ :

Հ. Ամփիկափոնք կամ Ամփիկափոնեանք  
Խնչ պաշտօն ունէին , և ուր կը ժողովուէին .

Պ. Սովորաբար Գեղփիա կը ժողովուէին ,  
և իրենց պարտքն էր բոլոր Յունաստանի  
աղէկութեանը փոյթ ունենալ :

Հ. Յունաց գաղթականներուն գլխաւոր  
երկիրը ո՞րն էր Գաղղիոյ մէջ .

Պ. Մարսիլիա , Գաղղիոյ հարաւային  
կողմը , որ Միջերկրական ծովին վրայ նա-  
ւահանդիստ է :

Հ. Սպանիոյ մէջ ո՞րն էր .

Պ. Սագունտոն :

Հ. Ափրիկէի մէջ .

Պ. Կիւրենէ :

Հ. Իտալիոյ մէջ .

Պ. Տարենտոն , Սիբարիա , Կրոտոնէ և  
Անքոնա :

Հ. Սիկիլիոյ մէջ .

Պ. Կատանիա , Սիրակուսա , Նաքսոս ,  
Մեգարա , Ակրագանդ :



Հ . Եւքսինեան Պոնտոսին կամ Սև ծովուն քովերը ո՞րն էր .

Պ . Բիւզանդիոն , Պերինթոս , Ամիսոս , և այլն :

Հ . Յունաստանէն ելած իրեք ցեղերը , այսինքն Եւոլացիք , Յոնիացիք և Իովրացիք ո՞ւր բնակեցան աւելի .

Պ . Փոքր Ասիոյ մէջ :

Հ . Եւոլացիք ի՞նչ սլատճառաւ իրենց երկրէն ելան , և ո՞ւր բնակեցան .

Պ . Եւոլացիները թեասաղացոցմէ հալածուելով՝ Բէովտիա քաշուեցան , անկէց Փոքր Ասիոյ հիւսիսային կողմերը նաւեցին . Ասքոս , Տենեդոս և Եկատոնեսիա կղզիներուն բնակիչներն ասոնց տեղ տուին որ հոն մանեն բնակին :

Հ . Յոնիացիք երբ գաղթական գնացին , և վոքր Ասիոյ ո՞ր կողմերը բնակեցան .

Պ . Յոնիացիք Աքայեցոցմէ Պեղոպոնեսէն հալածուելով Պեղոպոնեսէն Ատաիկէ քաշուեցան . Ետքը գնացին Փոքր Ասիա , Աիւկղադայք ըսուած կղզիները , Նաքսոս , Քիոս և ուրիշ կղզիները բնակեցան , Կումայի ծոցէն ինչուան Յասսոս :

Հ . Իորացիք ո՞ւր տեղուանք բնակեցան .

Պ . Իորացիք Կարիոյ հարաւային կողմը , և հարոգոս ու Կով կղզիները բնակեցան :



Հ. Աս իրեք ցեղերը առջի բերանն ի՞նչ  
տեսակ կառավարութիւն ունեցան .

Պ. Առաջ ամէն մէկը առանձին կառավա-  
րութիւններ ունէին :

Հ. Ետքերը առ կառավարութիւնները  
ի՞նչ փոփոխութիւն ունեցան .

Պ. Մէկ դաշնակցութիւն մը ձևացան՝  
Պանիոնիոն անուանով՝ Ամփիկափոնեան Ժո-  
ղովոյն կերպովը :

Հ. Հոմերական բանաստեղծութիւնները  
ի՞նչ են .

Պ. Հոմերոսի Իլիական և Ոդիսական ը-  
տուած դիւցազներդութիւնները : Ասոնք  
դիւցազանց Ժամանակներուն պատմու-  
թիւնն ու նկարագիրներն են :

Հ. Իլիականին նիւթը ի՞նչ է .

Պ. Իլիականին նիւթը՝ Տրոյիոյ պաշար-  
ման ատենը Աքիլլէոսի բարկութիւնն է :

Հ. Ոդիսականին նիւթը ի՞նչ է .

Պ. Ոդիսականին նիւթը՝ Ոդիսեոսի ճամ-  
բորդութեան պատմութիւնն է՝ որ Տրոյիոյ  
պատերազմէն ետքը ըրեր է :

Հ. Յունաստանի խաղերը որո՞նք են , և  
ի՞նչ վախճանի համար կ'ըլլային .

Պ. Աս խաղերը՝ միանգամայն կրօնական  
և քաղաքական հանդէսներ էին : Գլխաւոր



ներն էին Ողիմպիական, Նեմեան, Իսթմեան  
և Պիւթեան ըսուած խաղերը :

Հ. Ողիմպիական խաղերուն վրայ ինչ  
մասնաւոր դիտելիք կայ .


Պ. Ողիմպիական խաղերը Հերակլ կամ  
Հերքիւլէս Ասիացին հաստատեր էր, ու  
ետքը մոռցուեր էր կ'ըսեն. Քրիստոսէ  
1400 տարի առաջ յոյն Հերակլէսը նորէն  
զանոնք ծաղկեցուց, ետքը նորէն դադրե-  
ցան ինչուան Քրիստոսէ 900 տարի առաջ,  
և Իսիսոսի ատենը նորէն սկսան անվրէպ  
կատարել չորս տարին մէյմը :

Հ. Ողիմպիադը ինչ բան է .


Պ. Ողիմպիական մէկ խաղէն ինչուան  
մէկալը անցած Ժամանակը կամ միջոցը, որ  
չորս տարի էր :

Հ. Ողիմպիադի Թուականը որ ատենէն  
կը սկսի .

Պ. Կորեբոս եղէացին 776ին ողիմպիա-  
կան խաղի մէջ անանկ մեծ անուն հանեց,  
որ սկսան իր յաղթութեան տարին մասնա-  
ւոր Թուական սեպել :







ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ե Թ Ե Ն Ե Յ Ի Ո Յ



Անէնացաոց պատճառ-նիւն ինչո-սն Պարսից ար-ձի  
յարձակո-ճը: — Անէնի կառաւարո-նիւն ը: —  
Գրահոնի և Սողոմի օրէնագրո-նիւն ը: — Մա-  
րաց պատերազմէրո-ն ժամանակը:

Հ. ԻՆՁ գիտելիք կայ Ատտիկէի հին ա-  
նուանը և Վեկրոպսի վրայ.

Պ. Վեկրոպս եգիպտացին 1643ին իր  
բնակութիւնը Ատտիկէ հաստատելով՝ եր-  
կրին անուանն ալ Վեկրոպսիա գրաւ:

Հ. Վեկրոպս ի՞նչ երևելի կարգադրու-  
թիւններ ըրաւ.

Պ. Չիթենի տնկեց, եղ պահելու կերպը  
սորվեցուց, ամուսնութիւն և թաղման սո-  
վորութիւնները հաստատեց, աստուածոց  
պաշտամունքը սահմանեց, մանաւանդ Ա-



Թե՛նասայ ու Զեւսի պաշտօնը, և Արիսպա գոսի ատեանը հաստատեց:

Հ. Արիսպագոսը ի՞նչ էր.

Պ. Արիսպագոսը ատեան մըն էր՝ իր արգարու-թեամբը շատ երևելի. ասոր մէջ միշտ գիշեր ատեն կամ մութ տեղ կ'ընէին գատաստանները:

Հ. Վեկրոպայ յաջորդներէն որո՞նք էրևելի եղան, և ի՞նչ գործքեր ըրին.

Պ. Պանդիոն Ա. ասոր ատենը Աթենացիք գինի շինելուն կերպը հնարեցին: Երկթ-թէոս, ասիկայ Ելեւսիսի Տրիպտոլոմէոս Թագաւորին ցորեն ցանելու և հնձելու կերպը սորվեցուց: Թեսէոս, որ հերակլի բռնած ճամբովը կտրճու-թիւններ ըրաւ, և Աթէնքի 12 աւաններուն տիրեց, և Վոդրոս:

Հ. Վոդրոս ի՞նչպէս իր հայրենեացը համար ինքզինքը զոհեց.

Պ. Դորացիք իրեն գէմ պատերազմի ելած ըլլալով, երբոր նեղն ընկաւ, պատգամ մը ելաւ թէ Աթենացիք չեն կրնար յաղթել՝ ինչուան որ ինքը չմեռնի. ինքն ալ գեղացիի հագուստով պատերազմին մէջ նետուեցաւ ու մեռաւ:

Հ. Աթենացիք Վոդրոսին յաջորդ Թագաւոր դրին.

Պ. Աթենացիք կարգէ գուրն երախտագիտութեամբ մը չուզեցին Վոդրոսին տեղը



յաջորդ մը նստեցընել . ուստի թագաւորա-  
կան իշխանութիւնը ժամանակաւոր դատա-  
ւորութիւն մը դարձուցին :

Հ . Ան միջոցին Ատտիկէի ժողովուրդը  
քանի՞ բաժնուած էր .

Պ . Իրեք . Հայրենասէրք կամ Պեղեանք ,  
Հիպերակրեանք , և Պարալեանք :

Հ . Հայրենասէրք կամ Պեղեանք որո՞նք  
էին .

Պ . Ասոնք Ատտիկէի տիրող Եւոզացիքն  
էին , որ դաշտային կողմերուն տիրեցին :

Հ . Հիպերակրեանք և Պարալեանք որո՞նք  
էին .

Պ . Հիպերակրեանք յաղթուողներն էին  
որ լեռները գրաւեցին , իսկ Պարալեանք  
ժովեզերքի բնակիչներն էին :

Հ . Հայրենասէրք ի՞նչ ազատութիւններ  
առեր էին .

Պ . Հայրենասէրք իբրև առաջին յաղթա-  
կաններ՝ ամէն տեսակ սլաշտօն և իրաւունք  
իրենց առեր էին :

Հ . Թագաւորութեան տեղը ի՞նչ իշխա-  
նութիւն հաստատուեցաւ .

Պ . Արխոնաց իշխանութիւնը :

Հ . Արխոնաց իշխանութիւնը ի՞նչ փոփո-  
խութիւններ ունեցաւ .



Պ . Արխոնաց իշխանութիւնը առաջ ինչուան 'ի մահ էր , ինչպէս որ ունեցաւ Մեդոն Կողբոսի որդին . ետքը 754ին տասը տարի միայն սահմանեցաւ , իսկ 684ին տարեկան եղաւ , և ինը իշխան մեկտեղ արխոն ըսուեցան :

Հ . Գրակոնի օրէնագրութեան ատենը Ատտիկեցիք ինչ վիճակի մէջ էին .

Պ . Որովհետև արխոնաց չափաւորեալ իշխանութիւնը բաւական չէր զիրենք զսպելու , ուզեցին նոր օրէնքով մը երկպառակութիւնները վերցընել , ուստի խնդրեցին որ Գրակոն օրէնք դնէ իրենց :

Հ . Գրակոնի օրէնքները ինչպէս էին , և ինչ վախճան ունեցան .

Պ . Աս օրէնքները որ արիւնով գրած էին՝ շուտով փճացան , ինչպէս որ կ'ըլլան ամենայն տեսակ բռնական կարգաւորութիւններն ալ :

Հ . Ո՞վ ուզեց Աթենացւոց մէջ նորէն թագաւորութիւն կանգնել .

Պ . Կիզոն 612ին ջանաց նորէն կանգնել թագաւորութիւնը , բայց ջաջողելով իր կուսակիցներուն հետ մեկտեղ սպաննուեցաւ , թէպէտ և Եւմենեանց բազինը դիմեր սպաւիներ էր :

Հ . Աթենացիք ո՞ր խմաստունին դիմեցին որ իրենց խռովութիւնները դադրեցընէ .



Պ . Սողոմի , որ Յունաստանի եօթը իմասանոց մէկն էր :

Հ . Սողոմն քաղաքական խռովութիւնները ինչպէս դադրեցուց .

Պ . Մէկ կողմէն հրամայեց որ ամէն մարդ ինչ որ ունէր՝ ձեռքը մնայ , մէկալ կողմանէ ալ բոլոր պարտատէրները ազատ ըրաւ պարտքերէն :

Հ . Սողոմն Աթենացիքը քանի՞ կարգ կամ աստիճան բաժնեց .

Պ . Սողոմն Աթենացիքը չորս աստիճան բաժնեց՝ իրենց եկամուտներուն շատութեանը նայելով :

Հ . Առջի իրեք կարգը ինչ արտօնութիւններ ունէին .

Պ . Իրենք միայն կրնային դատաւոր ըլլալ :

Հ . Չորրորդ կարգը ինչ իրաւունքներ ունէր .

Պ . Աս կարգը որ բոլոր աղքատներն էին՝ վարի ատեանները միայն կրնային մտնել . բայց Սողոմն կարգ դրաւ որ հասարակաց ժողովներուն մէջ ասոնք կարենան քուէ ձգուել՝ երբոր տէրութեան գլխաւոր գործոցը վրայ ըլլայ խորհուրդը :

Հ . Աթենքի ծերակոյտը ինչ պաշտօն ունէր .



Պ. Աս ծերակոյտը (որ 400 հոգի էին՝  
ամէն մէկը մէկ տարուան համար ընտրուած)  
պարտրկան էր նախ քննել առաջարկուած  
խնդիրը և ետքը ժողովրդեան առաջարկել:

Հ. Սողոն ի՞նչպէս հաստատեց Արիսապա-  
գոսը, և ի՞նչ քաղաքական արտօնութիւն-  
ներ ունէր աս ատեանը.

Պ. Սողոն սահմանեց որ Արիսապագոսին  
մէջ կարենան մտնել միայն անոնք որ առաջ  
արիտն եղած էին, և ասոնք կրնային ժողո-  
վըրդեան վճիռները նորէն քննել: Բայց  
աս երկու տեսակ զգուշութիւններն ալ  
օգուտ չըրին, ու ռամկապետութիւնը քա-  
նի գնաց զօրացաւ:

Հ. Արիսապագոսին մէջ ի՞նչ կերպով կ'ը-  
նէին դատաստանները.

Պ. Որովհետև Արիսապագոսը դատաստա-  
նարան ալ էր, դատաստանները դիշերը կամ  
մութ տեղը կ'ընէին, որպէս զի դատաւոր-  
ները ուրիշ բան չտեսնեն և ամենայն ուշա-  
դրութեամբ իրենց պարտքը կատարեն: Նոյն  
պատճառաւ փաստաբաններուն պարտքն  
էր առանց ճարտասանութեան ու զարգի  
պարզ կերպով նիւթը հասկը ցընել:

Հ. Սողոն իր օրէնքները հաստատ պահել  
տալու համար ի՞նչ հնարք բանեցուց.

Պ. Աթենացիքը երգուընցուց որ հարիւր  
տարի միայն պահեն ան օրէնքները, և ինքը  
տասը տարի հեռացաւ հայրենիքէն:



Հ . Մողոն երբոր դարձաւ Աթէնք , Աթենացիք ինչ վիճակի մէջ էին .

Պ . Տեսաւ որ բոլոր քաղաքը առջի իրէք հերձուածներուն ձեռքը մատնուած է . Հայրենասիրաց գլուխն էր Աիկուրգոս , Ծովեզերեայց Մեգակղէս , և Առնաբնակաց՝ Պիսիատրատ :

Հ . Պիսիատրատ ինչ կերպով ձեռք ձգեց իշխանութիւնը .

Պ . Պիսիատրատ հարուստ աթենացի մըն էր , Ժողովրդեան սիրելի և առատաձեռն . ասիկայ օր մը ինքզինքը վերաւորելով՝ հրապարակը գնաց Ժողովրդեան առջև , և Ժողովրդենէն իրեն սլահսպանութեանը համար զինուորներ առաւ , անոնցմով Մողոնի օրինացը դէմ սկսաւ տիրասլետել :

Հ . Պիսիատրատի կառավարութիւնը ինչ պէս էր .

Պ . Մեծ զգուշութեամբ թագաւորեց , և Աթենացւոց սիրտը շահեցաւ :

Հ . Պիսիատրատայ ո՞վ յաջորդեց .

Պ . Իր որդիքը Իպպարքոս և Իպպիաս :

Հ . Իպպարքոս և Իպպիաս իրենց հօրը զգուշութիւններն ըրին .

Պ . Ինչուան տասնըջորս տարի իրենց հօրը հետևեցան . բայց ետքը այլ և այլ գործքերով ատելի եղան Ժողովրդեան :

Հ . Իպպարքոս ինչպէս մեռաւ .



Պ . Արմոգիտս և Արիատողիտուն երկու  
աթենացի երիտասարդներ՝ հանդիսի մը մէջ  
զարկին սպաննեցին Իսպաղաքոսը , որ իրենց  
քրոջը նախաստինք ըրեր էր :

Հ . Իսպաղիաս ի՞նչպէս ատելի եղաւ , և  
վերջը ի՞նչ եղաւ .

Պ . Իսպաղիաս իր եղբօրը սպանուածները  
վրայ սրդողած՝ անգթութիւններ ըրաւ և  
ատելի եղաւ ամենուն : Ժողովուրդը ազա-  
տութեան սիրով նորէն վառուեցաւ , և  
Իսպաղիասը Աթէնքէն քշեց . անիկայ վրէժ-  
խնդրութեան համար գնաց Արտափեռնե-  
սին ապաւինեցաւ՝ որ Պարսից Դարեհ թա-  
գաւորին նախարարն էր :

Հ . Մարաց սպտերազմներուն ժամանա-  
կը ի՞նչ վիճակ ունեցաւ Աթէնքի կառավա-  
րութիւնը .

Պ . Ան ատենի կառավարութիւնը ռամ-  
կապետական էր :

Հ . Կղիսթենէս Աթէնքի կառավարու-  
թեան մէջ ի՞նչ փոփոխութիւններ ըրաւ .

Պ . Կղիսթենէս՝ ցեղերուն թիւը տասը  
որոշեց , աւաններուն բնակիչներն ալ քաղա-  
քացւոց սէս ժողովներուն մէջ մտցուց , և  
Ժողովրդեան իշխանութիւնը խեցեկոյտ  
վճռոյն հաստատուելովը շատ մեծցաւ :

Հ . Խեցեկոյտ վճիռը ի՞նչ բան էր .

Պ . Որովհետեւ ամէն մարդ իր վճիռը խե-



ցիւ աշխնքն խեցեմորթի պատենին վայ  
կը գրէր՝ Խեղեկոյ՝ Ըն ըսուեցաւ . և աս  
վճիռն էր տասը տարուան աքսորանք , որով  
քաղաքացւոց մէջ մեծերը կը դատասպար-  
տուէին :

Հ . Ան ատենները Աթէնքի մէջ ի՞նչ  
էրևելի մարդիկ կային .

Պ . Միլտիադէս և Թեմիստոկղէս սկսեր  
էին անուն հանել . Միլտիադէս գնաց ա-  
ռաւ Քերսոնիսոն Թրակիոյ , Եւբէա ,  
Լեմնոս և Վիւկղադայք ըսուած կղզիները .  
Իսկ Թեմիստոկղէս երկու հարիւր նաւով  
նաւատորմիլ մը հանեց՝ որ անոնցմով բոլոր  
Յունաստանը ազատէ :





ՊԱՏՄՈՒԹԻԷՆ

Ս Պ Ա Ր Տ Ա Յ Ի Ո Յ

Սպարփացոց կառավարութիւնը: — Լինո-բո-  
սի օրենսդրութիւնը: — Մեսսենիացոց պափե-  
րազմեցը: — Պեղոպոնեսի վիճակը Մարաց  
պափերազմեցուն ժամանակը:

Հ. ՄԻԿԷՆՔ քաղաքին մէջ Ագամեմնո-  
նի ուլ յաջորդեց.

Պ. Իր որդին Ովրեստէս, որ իր մայրը  
սպաննելուն, և ան սպառնալու խղճմտան  
քէն չարչարուելուն համար երևելի է:

Հ. Ովրեստէս թագաւորութիւնը ում  
թողուց.

Պ. Իր Տիսամեն և Պէնթիդոս որդւոցը:

Հ. Տիսամենի և Պէնթիդոսի ինչ հանգի-  
սեցաւ.

Պ. Դորացի հերակլէանք զերէնք հալա-  
ծեցին:



Հ . Հերակլեանցմէ որո՞նք եղան Սպարտայի առջի երկու թագաւորները .

Պ . Եւրիսթենէս և Պրոկղէս , և ասոնցմէ սկսան Սպարտայի վրայ երկերկու թագաւոր մէկտեղ թագաւորել :

Հ . Սպարտացիք Լակոնացւոց հետ ի՞նչ պէս վարուեցան .

Պ . Սպարտացիք Լակոնացւոց վրայ տուրք ձգեցին , և անոնցմէ զինուոր կ'առնէին :

Հ . Լակոնիոյ ո՞ր քաղաքը ուզեց ասոնց դէմ կենալ , և բնակիչքը ի՞նչ եղան .

Պ . Եղոս , և ասոր բնակիչները՝ այսինքն Եղոսացիք Սպարտացւոց ծառայ կամ գերի եղան :

Հ . Լիկուրգոսի ատենները Սպարտա ի՞նչ վիճակի մէջ էր .

Պ . Գրեթէ ամէն իշխանութիւն քանի մը մեծերու ձեռքն էր . ինչուան թագաւորական իշխանութիւնն ալ կործանելու վրայ էր :

Հ . Լիկուրգոսի վրայ ի՞նչ գիտելիք կայ .

Պ . Լիկուրգոս Պրոկղէանց ցեղէն էր , և իր Քարիլաոս եղբորորդւոյն խնամակալ ընտրուած էր . աս պաշտօնը վեհանձնութեամբ ու առանց իր շահը փնտուելու կատարեց . հմտանալու համար ձամբորդութեան ելաւ , ու երբոր դարձաւ Սպարտայնալիսի օրէնքներ դրաւ , որ Սպարտացիք



որչափ ատեն որ ան օրէնքները պահեցին՝  
իրենց տէրութիւնն ալ հաստատ մնաց :

Հ . Աիկուրդոսի օրէնքներովը ի՞նչ կարգ  
գրուեցաւ Սպարտացւոց մէջ .

Պ . Միայն Սպարտացիք Քաղաքացի ը-  
սուեցան . Ապոնացիք միճակով բաժնուած  
երկիրներ ունեցան . Եղոսացիք գերի մնա-  
ցին :

Հ . Աիկուրդոս Սպարտայի Թագաւո-  
րութեանը ի՞նչ կարգ դրաւ .

Պ . Հերակլէանց ցեղին կրկին Թագաւո-  
րութիւնը , որ Եւրիսթէնէսէն և Պրոկղէ-  
սէն սկսած էր՝ հաստատեց . և Թագաւորնե-  
րուն իշխանութիւնն էր՝ պատերազմի ատեն  
սպարապետ ըլլալ և խաղաղութեան ատեն  
տէրութիւնը կառավարել :

Հ . Թագաւորաց իշխանութիւնը ի՞նչ  
օրէնքներով չափաւորեց .

Պ . Իրէք տեսակ կարգադրութեամբ՝ որ  
ասոնք էին . *ἰσ* , Ժողովրդէն ընտրուած  
քսանութը ծերոց ծերակոյտ մը . *բ* , Քա-  
ղաքական Ժողովներ՝ որ կարող էին ծերա-  
կուտին առաջարկութիւնները հաստատել  
կամ մերժել . *գ* , Եփորոս անունով հինգ  
իշխան , որ տարուան մը համար կ'ընտրուէ-  
ին . ասոնց իշխանութիւնը առջի բերան  
պղտիկ էր , բայց երթալով այնչափ մեծցաւ  
որ տէրութեան մէջ առջինը եղաւ , և ին-  
չուան Թագաւորներն ալ բանտ կը դնէին :



Հ . Ախկուրդոսի օրէնքները ի՞նչ կերպով  
քաղաքացւոց մէջ հաւասարութիւն կը պա-  
հէին .

Պ . Իրէք կերպով . Խ , Պատիժները և  
զուարճութիւնները ամենուն հաւասար  
սահմանած ըլլալով . Բ , Ծնողաց և որդւոց  
օգուտը հասարակաց օգուտէն վար սեպե-  
լով . Գ , Մարմնոյ ոյժը , և սլաութեան զմեծական  
քաջութիւնը հարկաւոր համարելով :

Հ . Ընդհանրապէս աս օրէնքներուն դիտ-  
մունքը ի՞նչ էր .

Պ . Սպարտացիքը քաջասիրտ զինուոր ու  
հայրենասէր քաղաքացի ընէլ :

Հ . Ախկուրդոս ի՞նչ կարգ դրաւ դրամներ  
րու , կերակուրներու , նոր ծնած տղոց և  
անոնց կրթութեանը վրայ .

Պ . Ոսկիէ և արծրթէ ստակներուն տեղը  
երկրթէ ստակներ հանեց ծանր կշիռքով :  
Կերակուրները հասարակաց էին , և ամէնքը  
մէկտեղ կ'ուտէին : Նոր ծնած տղաքը թէ որ  
պակասաւոր ըլլային կը սպաննուէին՝ իբրև  
թէ տէրութեան անօգուտ պիտի ըլլային ա-  
տենով : Տղաք եօթը տարուրնէ ինչուան քը-  
սանը հասարակաց վարժապետներու ձեռ-  
քը՝ աշխատութեան , նեղութեան և կատա-  
րեալ հնազանդութեան կը վարժէին :

Հ . Ի՞նչ կարգադրութիւններ կային զի-  
նուորաց ծառայութեը ժամանակին վրայ ,  
և զինուորին սպարաքը ի՞նչ էր .



Պ . Ինչուան վաթսներորդ տարին զե-  
նուոր սխախ ըլլային , և պատերազմի ատեն  
անկէ ալ աւելի : Պատերազմական օրէնքնե-  
րուն առաջինն էր ոչ երբէք փախչիլ , կե-  
ցած տեղէն չհեռանալ , զէնքերը չթողուլ ,  
կամ վահանով և կամ վահանին վրայ դառ-  
նալ , այսինքն կամ յաղթել և կամ մեռնիլ :  
Աս բաներովս Սպարտացոց քաջութիւնը  
այնչափ անուանի եղաւ :

Հ . Լիկուրգոս իր օրէնքները երկար ա-  
տեն պահել տալու համար ի՞նչ հնարք բա-  
նեցուց .

Պ . Լիկուրգոս ձայն հանեց՝ թէ կ'ուզեմ  
Դեղփիս երթալ պատգամ հարցնել՝ օրէնք-  
ներուս աղէկ կամ գէշ ըլլալուն համար .  
երգուրնցուց Սպարտացիքը որ ինչուան ին-  
քը դառնայ ամենևին բան մը չփոխեն , ա-  
սանկով ելաւ Սպարտայէն , ու մէյմըն ալ  
չդարձաւ :

Հ . Լիկուրգոսի օրէնքներուն լնասները  
ի՞նչ եղան .

Պ . Սպարտացիք թէպէտև աս օրէնքնե-  
րով շատ զօրաւոր եղան , բայցնաև հպարտ ,  
անիրաւ և անդուլթ :

Հ . Մեսսենիա ո՞ւր կ'իյնար .

Պ . Մեսսենիան Լակոնիոյ արևմտեան  
կողմն էր :

Հ . Սպարտացիք ի՞նչ մտքով Մեսսենիա-  
ցոց դէմ պատերազմ բացին .



Պ . Անոնց բարերեր գաւառին տիրելու մտքով :

Հ . Սպարտացիք ինչ պատճառանքով աս ժողովրդեան դէմ պատերազմ բացին .

Պ . Մասնաւոր մարդու մը հանդիպած անիրաւութեան վրէժը առնել ուղեցին :

Հ . Մեասենիացւոց առջի պատերազմը որչափ ատեն քշեց .

Պ . Քսան տարի . 744էն ինչուան 724 :

Հ . Մեասենիացւոց առաջին պատերազմին գլխաւոր դիպուածները որոնք են .

Պ . Մեասենիացիք առաջ երկու անգամ ժանտախտէ ջարդուեցան . Արիստոդէմ որ իրենց մեծերէն մէկն էր՝ Գեղփիսի պատգամին հնազանդելով իր աղջիկը զոհեց . իր քաջութեանը համար թագաւոր ընտրուեցաւ , որ իրեք տարի յաջողութեամբ բայց նաև անգթութեամբ Մեասենիացիքը Սպարտացւոց դէմ պաշտպանեց : Ետքը պատգամախօսին հրամանովը ինքզինքը մեռցուց՝ իր աղջկանը գերեզմանին վրայ : Արիստոդէմին մեռած ատենը սաստիկ սով ալ ընկած էր Մեասենիա . ուստի բոլորովին յուսահատեցան Մեասենիացիք ու Սպարտացւոց հարկատու եղան :

Հ . Սպարտացիք Մեասենիացւոց հետ ինչպէս վարուեցան .

Պ . Քառսուն տարիի չափ սաստիկ խրատութեամբ վարուեցան :



Հ . Մեասենիացիք Սպարտացւոց հնազանդ մնացին .

Պ . Արիստոմենի առաջնորդութեամբը ասպտամբեցան . Եղիա , Արգոս , Սիկիոն և Արկադիա անոնց հետ միացան :

Հ . Մեասենիացւոց երկրորդ պատերազմը ո՞րչափ ատեն տևեց .

Պ . Տասնուվեց տարի . 684էն ինչուան 668 :

Հ . Առաջ ո՞ր կողմը յաղթուեցաւ .

Պ . Նախ Սպարտացիք քանի մը անգամ ջարդուեցան :

Հ . Տիրտէոսի պատմութիւնը ո՞րն է , և Լակեդեմոնացիք իրեն առաջնորդութեամբը ի՞նչ յաղթութիւններ ըրին .

Պ . Տիրտէոս քանաստեղծ մըն էր կազ, որ տղոց վարժապետութիւն կ'ընէր . Աթենացիք Սպարտացիքը ծաղր ընելու համար անոնց զօրավար Տիրտէոսը խաւրեցին . Սպարտացիք ասոր առաջնորդութեամբը իրեք անգամ յաղթուելով՝ ուղեցին ետ դառնալ, բայց Տիրտէոս դէմ կեցաւ , և չորրորդ անգամուն Մեասենիացւոց յաղթելով զանոնք Իդա լեռը քշեցին :

Հ . Արիստոմեն ի՞նչպէս քաջութեամբ պաշտպանեց իր հայրենիքը .

Պ . Արիստոմեն տասնըմէկ տարի քաջութեամբ պաշարման դիմացաւ . բայց Սպար-



տացիք փախստական զինուորի մը առաջնորդութեամբը առին քաղաքը մըրկի մը ժամանակ որ իրեք օր քշեց :

Հ . Մեասենիացիք վերջապէս ի՞նչ վիճակի մէջ ընկան .

Պ . Եղոսացւոց պէս գերի եղան , ու միայն քիչ հոգի յանձն առին Սիկիլիա աքսորուիլ և Չանկլէ քաղաքը բնակեցան , ահունն ալ գրին Մեասանա :

Հ . Սպարտացիք Մեասենիոց տիրելէն վերջը՝ Պեղոսպոնեսի օր ժողովրդեան դէմ պատերազմ բացին .

Պ . Արկադացւոց դէմ որ իրենց դաշնակից էին . ետքը Արգիացւոց վրայ յարձակեցան :

Հ . Արգիացւոց պատերազմին մէջ ի՞նչ արժանի յիշատակի գործք կը պատմուին .

Պ . Երեքհարիւր Արգիացւոց և երեքհարիւր Սպարտացւոց պատերազմը , որ երկու կողմէն ալ անպարտելի մնաց :

Հ . Սպարտացիք ի՞նչ յաղթութեամբ նրաւաճեցին Արգոսը .

Պ . Լակեդեմոնացւոց Աղէոմէն թագաւորին յաղթութեամբը (Յ14) :

Հ . Պեղոսպոնեսի պատմութիւնը քանի՞ դար կրնայ բաժնուիլ՝ հերակլեանց յարձակմանէն մինչև Պարսից յարձակումը .



Պ . Չորս մասն . Թ , Քրիստոսէ 800 կամ 700 տարի առաջ թագաւորութեան վերցուիլը . Բ , Քրիստոսէ 600 տարի առաջ Սաղաւապետաց ժամանակը . Գ , Քրիստոսէ 500 և 400 տարի առաջ՝ բռնաւորաց ժամանակը . Դ , Քրիստոսէ 400 և 300 տարի առաջ ազնուապետաց և ռամկապետաց ժամանակը :

Հ . Ո՞ր դարուն Արդոսի թագաւորութիւնը վերցուեցաւ .

Պ . Փիղոնի որդւոյն Երատոսի մեռնելէն վերջը՝ որ Հերակլեան ցեղէն էր (820) :

Հ . Աբայիոյ թագաւորութիւնը ե՞րբ վերցուեցաւ .

Պ . Ովգիդեայ իշխանութեան ժամանակը որ Պեղոսեանց ցեղէն էր :

Հ . Եղիս դաւառին թագաւորութիւնը ե՞րբ վերցուեցաւ .

Պ . Իսիատոսի յաջորդներէն մէկուն ժամանակը (780) :

Հ . Կորնթացւոց և Արկադացւոց թագաւորութիւնները ե՞րբ վերցուեցան .

Պ . Կորնթացւոցը Տելեսոսի մահուրնէն վերջը , որ Հերակլեան ցեղէն Աղետասի տասներորդ յաջորդն էր (747) . Արկադացւոցը Արիստոկրատ երկրորդին մահուրնէն վերջը որ Մեսսենացիքը մատնեւ էր Մեսս-



սենիոյ երկրորդ պատերազմին ժամանակը  
(668):

Հ. Ասդաւառներուն թագաւորութիւն  
ները վերջանալէն ետքը ի՞նչ կառավարու  
թիւն ունեցան .

Պ. Սահաւապետութիւն :

Հ. Անկէ ետքը ի՞նչ կառավարութիւն  
ունեցան .

Պ. Բռնաւորաց իշխանութիւնը :

Հ. Յունաց մէջ բռնաւոր ըսուածները  
ի՞նչ մարդիկ էին .

Պ. Բռնաւոր ըսուածները այնպիսի մար  
դիկ էին որ ժողովուրդը կ'ընտրէր՝ մեծերը  
նուաճելու համար, և ասոնք ժողովրդեան  
իրենց տուած իշխանութիւնը սկսան ժողո  
վրդեան վրայ բանեցրնել :

Հ. Բռնաւորութեան ջնջուելէն վերջը  
Մարաց պատերազմին ժամանակը Յունաս  
տան ի՞նչ տեսակ կառավարութիւն ունե  
ցաւ .

Պ. Ազնուապետութիւն և ռամկապե  
տութիւն :

Հ. Բռնաւորութենէն վերջը որ տէրու  
թեանց մէջ հաստատուեցաւ ազնուապե  
տութիւնը .

Պ. Գորացւոց և Թեսալացւոց մէջ :



Հ. Ռամկապետութիւնը որոնց մէջ հաստատուեցաւ .

Պ. Արկադացոց, Աքայեցոց, Յոնիացոց և այլն :

Հ. Թագաւորութիւնները որ դարուն մէջ կործանեցան .

Պ. Իններորդ և ութերորդ դարուն, այսինքն Քրիստոսէ 800 և 700 տարի առաջ :

Հ. Սակաւապետութիւնը որ դարուն հաստատուեցաւ .


Պ. Եօթներորդ դարուն :

Հ. Բռնաւորաց երկու դարերը որոնք են .

Պ. Վեցերորդ և հինգերորդ դարերը, այսինքն Քրիստոսէ 500 և 400 տարի առաջ :

Հ. Ազնուապետութեան և ռամկապետութեան դարերը որոնք են .

Պ. Հինգերորդը և չորրորդը :







# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## Յ Ո Ւ Ն Ե Յ

ԵՒ

### Պ Ա Ր Ս Ի Ց

Մարաց պատերազմին ժամանակը :

Հ. ՊԱՐՍԻՑ Յունաց հետ ըրած պատերազմին պատճառը ի՞նչ էր .

Պ. Յոնիացւոց ապստամբութիւնը Պարսից դէմ :

Հ. Ո՞ր սկսաւ աս ապստամբութիւնը .

Պ. Նաքսոս կղզին, որ Ալեկղաղայց մէկն է :

Հ. Աթենացիք ան դործողութեան մէջ ի՞նչ ըրին .

Պ. Յոնիացւոց հետ միացան Պարսից դէմ. վասն զի Պիսիատրատի որդին Իպսիաս՝ որ իրենք աքսորեր էին՝ Պարսիցմէ օգնութիւն գտեր էր :



Հ. Ան պատերազմին սկիզբը ինչ մեծ դիւ-  
սուած պատահեցաւ .

Պ. Սարգիսէ քաղաքին կրակը որ Յոնիա  
ցիք տուին :

Հ. Դարեհ Սարգիսէի հրդեհին վեժը  
ինչպէս առաւ .

Պ. Դարեհ զՅոնիան նուաճեց , և երկու  
տարի վերջը սկսաւ Մարական պատերազմը :

Հ. Դարեհ ինչպէս սկսաւ Յունաստան  
արշաւել .

Պ. Մարդոնիոս Դարեհին փեսան Յու-  
նաստանի հիւսիսային կողմը յաղթուեցաւ  
ու փոթորիկով մը դրեթէ բոլոր նաւերն ըն-  
կրղմեցան : Թրակացիք յարձակեցան ցամա-  
քային զօրացը վրայ և շատ նեղը ձգեցին  
Պարսիկները : Աերջապէս Դատ նախարարը  
անթիւ զօրքով ինչուան Ատտիկէ հասաւ , և  
հոն եղաւ Մարաթոնեան պատերազմը  
(430) :

Հ. Մարաթոնեան պատերազմը ինչպէս  
եղաւ .

Պ. Պատերազմին օրը Արիստիդէս վէհանձ  
նութեամբ Միլտիադեսին ձգեց սպարապե-  
տուծիւնը . Աթենացիք չսպասեցին Պարսից  
յարձակելուն . առջինչան տալուն բոլոր ու-  
ժովը վազեցին անոնց վրայ ու սաստիկ պա-  
տերազմէ ետքը Պարսից բազմուծիւնը չդի-  
մացաւ Յունաց քաջուծեանը դէմ . Պար-  
սիկք բանակը թողուցած՝ նաւերը փախան ,



որ ազատին : Պարսից յաղթուելուն ատենը  
անուանի եղաւ Աինեգիրոս յոյն զինուորը  
որ Պարսից ետևէն ընկած կը լողար քաջու-  
թեամբ , ինչուան որ ձեռքը չկտրեցին՝ բռու-  
նած նաւը չթողուց , անկէ ետքն ալ ակուա-  
ներովը խածաւ նաւը , ինչուան որ գլուխն  
ալ կտրեցին :

Հ . Իպսլիաս մատնիչը ինչ վերջ ունեցաւ .

Պ . Պարսից պատերազմին մէջ մեռնելով  
իր մատնութեան պատիժը դոտաւ :

Հ . Աթենացիք Մարաթոնեան պատե-  
րազմին համար Միլտիադեսին ինչ փոխա-  
րէն ըրին .

Պ . Միլտիադէսը խրկեցին որ երթայ  
պատժէ Յունաց ան կղզիները՝ որոնք յօժա-  
րութեամբ օգնէր էին Պարսից . անիկայ ալ  
Պարոս կղզիին քով յաղթուեցաւ : Փոփոխա-  
միտ ժողովուրդը վրան կասկածի երթալով  
ծանր տուգանք դրաւ . ան ալ վճարել չկրնա-  
լով բանտ դրուեցաւ ու հոն մեռաւ :

Հ . Արիստիդեսի ինչ պատահեցաւ .

Պ . Արիստիդէս խեցեկոյտ վճռով աքսու-  
րուեցաւ , և պատճառը իր արդարութեանը  
համար ունեցած համարումն ու համբաւն  
էր :

Հ . Թեմիստոկղէս ինչ զգուշութիւն  
ընել տուաւ քաղաքացւոց ասպադայ յար-  
ձակմանց դէմ .



Պ . Թե՛ միտո՞ղկէս նայեցաւ որ Աթե՛նացւոց նաւերը շատցընէ , մէկ կողմանէ ալ իր փառքը , իշխանութիւնը աւելցընէ . ուստի սովորութիւն ըրած էր ըսելու թէ « Յաղթանակք Միլաթիադեայ չտան ինձ ննջել » :

Հ . Ի՞նչ սպասատութեան հետ էր Դարեհ իր մեռած ժամանակը .

Պ . Կը սպասատուէր նորէն Յունաստան յարձակելու :

Հ . Դարեհի ո՞վ յաջորդեց .

Պ . Իր որդին Քսերքսէս :

Հ . Քսերքսէսի առաջին գործքը ո՞րն եղաւ .

Պ . Աստամբած Եգիպտացիները նուաճեց :

Հ . Քսերքսէս Յունաց գէմ ի՞նչ մեծամեծ սպասատութիւններ ըրաւ .

Պ . Զօրքը իրեք միլիոն էր , տասուերկու հազարի չափ եռաթի նաւ , իրեք հազար պաշար տանող նաւ , և անոնց մէջ երկու հարիւր քառասուն հազար զինուոր :

Հ . Քսերքսէս իր բանակը ի՞նչպէս Եւրոպա անցուց .

Պ . Նաւակամուրջ մը շինեց Հելլէսպոնտոսին վրայ , և անկէ անցուց բանակը Յունաստան :



Հ. Յունաստանի ո՞ր գաւառները իրեն  
անձնատուր եղան .

Պ. Թեսսաղիա, Դորիս և գրեթէ բոլոր  
Բէուլտիա :

Հ. Ո՞ր ժողովուրդները քաջութեամբ  
դէմ կեցան .

Պ. Սպարտացիք, Աթենացիք, Պլատէա-  
ցիք, Լոկրացիք և այլն :

Հ. Լէոնիդաս Թերմոպիլէի մէջ ի՞նչ քա-  
ջութիւն ըրաւ .

Պ. Լէոնիդաս իրեք հարիւր սպարտացի  
զօրքով Թերմոպիլէ ըսուած կրճին մէջ դէմ  
դրաւ Պարսից, ու հոն ընկաւ ընկերներովը,  
մեռաւ :

Հ. Յունաց և Պարսից նաւատորմիղները  
առջի անգամ ո՞ր զարնուեցան .

Պ. Արտեմիսիոն ըսուած հրուանդանին  
քով :

Հ. Քսերքսէս Սաղամինայի քով ի՞նչպէս  
յաղթուեցաւ .

Պ. Քսերքսէսի այնչափ նաւերը գնացին  
սեղմուեցան Սաղամինայի նեղուցին մէջ .  
Թեմիստոկղէս մեծ ջարդ մը տալով յաղ-  
թեց անոնց : Քսերքսէս ստիպուեցաւ ձգե-  
լու փախչելու վատութեամբ, և ցամաքային  
զօրքը իր Մարդոնիոս տեղապահին թողուց  
(480) :



Հ . Թեմիատողէս պատերազմէն առաջ  
ի՞նչ նշանաւոր խօսք զուրցեր է Եւրիբիա-  
դեսին .

Պ . Պարսից տորմիզը երբոր Սաղամինայի  
նեղուցին մօտեցաւ , Եւրիբիադէս սպար-  
տացին կ'ուզէր ետ քաշուիլ , իսկ Թեմիա-  
տողէս կ'ուզէր պատերազմ քանալ . Եւրի-  
բիադէս երբոր սրդողած ձեռք վերուց  
վրան , Թեմիատողէս անշփոթ ըսաւ անոր  
« Հար , այլ անսա » :

Հ . Թեմիատողէս ի՞նչ հնարք բանեցուց  
որ Յոյները պատերազմի ստիպուին .

Պ . Թեմիատողէս ձեռաց տակէն իմա-  
ցուցեր էր Քսերքսեսի թէ Յունաց զօրքը  
ցրուելու միտք ունի . ան ալ դիմացնին առ-  
նել ուզելով յարձակեցաւ ու պատերազմը  
ինքը բացաւ :

Հ . Քսերքսեսի փախչելէն վերջը ցամա-  
քային զօրքն ի՞նչ եղաւ .

Պ . Մարդոնիոսի առաջնորդութեամբը  
Պարսիկները ( որ իրեքհարիւր հազար էին )  
յաղթուեցան Պլատէայի քով , ու գրեթէ  
բոլորովին ջարդուեցան :

Հ . Մնացած նաւերը որ նաւական սպա-  
տերազմին մէջ խորտակեցան .

Պ . Միգադէի քով Նէոգիկիդեսի քաջու-  
թեամբը ջարդուեցան նոյն Պլատէայի սպա-  
տերազմին օրը ( 475 ) :



Հ. Աթենացւոց ու Սպարտացւոց իրարու  
դէմ ունեցած նախանձը էրբ ու ինչէն սկը-  
սաւ .

Պ. Աթենացիք Թեմիստոկղէսի խորհրդու-  
 վը Պիրէոնի նաւահանգիստը շինեցին ու ա-  
 մուր պարսպով մը պատեցին . բարձրացու-  
 ցին նաև Աթենքի պարիսպը , ասոնց վրայ  
գալով Սաղամինայի և Մարաթոնի յաղթու-  
 թիւնները՝ Սպարտացւոց նախանձը շար-  
 թեցին :

Հ. Պաւսանիասին ըրած մատնութիւնը  
որն է , և ինչպէս աքսորուեցաւ Թեմիս-  
 տոկղէս .

Պ. Պաւսանիաս հարստութեամբ թուլ-  
 ցած և յաջողութեանցը վրայ հպարտա-  
 ցած՝ Պարսից գերիները ետ դարձուց , և ա-  
 նոնց հետ թագաւորին թուղթ մըն ալ խըր-  
 կեց , որուն մէջ կը խոստանար որ ձեռքը  
մատնէ Սպարտան և բոլոր Յունաստանը ,  
 աս դաշամբ որ Քսերքսէս իր դուստրը իրեն  
կնութեան տայ : Սպարտացիք իմացան աս  
դաւը գերիի մը ձեռքով . Պաւսանիաս Աթե-  
 նասայ տաճարը փախաւ . Սպարտացիք դու-  
 ուր գոցեցին մեծամեծ քարերով , և կ'ըսեն  
թէ առջի քարը իր մայրը դրաւ . հոն անօ-  
 թի մեռաւ : Թեմիստոկղէս ալ ամբաստա-  
 նուեցաւ իբրև խորհրդակից Պաւսանիասին ,  
 ուստի պէտք եղաւ որ Պարսից թագաւորին  
ասպաւինի :

Հ. Թեմիստոկղէս ինչպէս մեռաւ .



Պ. Թեմիատողէս Պարսից Արատչէս  
Թագաւորին քով փախեր էր, որ Քսերք-  
սեսին յաջորդն էր, և որպէս զի աղափ  
ըրած անխոհեմ խոստմունքէն որ ըրեր էր՝  
Թագաւորին հետ Յունաց դէմ պատերազմի  
ելլելու՝ ինքզինքը Թունաւորեց:

Հ. Ան ժամանակները ի՞նչ անուանի  
մարդիկ ելան Աթենքի մէջ.

Պ. Պերիկղէս Յունաց երևելի ճարտա-  
սանը. ասիկայ ժողովրդեան կողմը բռնելով  
Վիմոն զօրավարին դէմ գրգռեց:

Հ. Վիմոն Միլտիադեսի որդին ալ աքսո-  
րուեցա՞ւ.

Պ. Վիմոն Սպարտացւոց օգնելու գնաց,  
անոնք զինքը չընդունեցան. Աթենացիք աս  
Սպարտացւոց ըրած նախատանացը պատ-  
ճառ Վիմոնը գնելով աքսորեցին զինքը:

Հ. Ինչ պատճառաւ ետ կանչուեցաւ  
Վիմոն, և ի՞նչ կերպով Յունաց փառքը ա-  
ւելցուց.

Պ. Երբոր Աթենացւոց ու Սպարտացւոց  
մէջ պատերազմ բացուեցաւ, Պերիկղէս ստի-  
պուեցաւ ետ դարձնելու իր նախանձոր-  
դը: Վիմոն ջանք ըրաւ որ Աթենացիքը Պար-  
սից դէմ պատերազմելու զբաղեցրնէ. Ե-  
գիպատսի ասպտամբներուն օգնեց, և փա-  
ռաւոր յաջողութեամբ մը ստիպեց զՊար-  
սից Թագաւորը որ հաշտութիւն ընէ:



Հ. Արտաշէս ի՞նչ դաշնագրութեամբ  
վերջացուց Մարական պատերազմը .

Պ. Խօսք տուաւ որ Յունաց փոքր Ասիոյ  
մէջ ունեցած ամէն քաղաքներն ալ աղատ  
ըլլան իր իշխանութենէն (449) :

Հ. Մարական պատերազմը որչափ ժա-  
մանակ տևեց .

Պ. Յիսուս տարի :

Յոռասպանի ներքին պայերազմերը ինչուսան  
Պեղոպոնեասիան պայերազմի վերջը :

Հ. Ո՞րն է Պեղոպոնեասիան պատերազմը .

Պ. Մարական պատերազմէն վերջը Աթե-  
նացւոց և Սպարտացւոց մէջ եղած պատե-  
րազմն է :

Հ. Աս պատերազմը որչափ ժամանակ  
տևեց .

Պ. Քսանուէօթը տարի , 431էն մինչև  
404 :

Հ. Պեղոպոնեասիան պատերազմին գլը  
խաւոր պատճառն ի՞նչ եղաւ .

Պ. Սպարտացւոց Աթենացւոց դէմ ու-  
նեցած նախանձը : Պերիկղէս իր հայրենիքը  
ներսէն շէնցընելէն զարգարելէն ետքը՝  
գրսեցւոց առջևն ալ անուանի ըրեր էր .



Քերտոնիսոն թրակիոյ և Պեղոպոնեսի ծովային քաղաքները, Ահառնանիա դաւառը, բոլոր ծովերը ինչուան Պոնտոսի թագաւորութիւնը՝ Աթենացւոց իշխանութեանը տակն էր. դաշնակիցք բողոքեցին աս բանիս դէմ. Պերիկղէս ալ ստիպուելով հաշիւ ցուցրնել իրեններուն, դրդուեց իր հայրենիքը Սպարտացւոց դէմ պատերազմի:

Հ. Սպարտացւոց և Աթենացւոց մէջ դրդուած պատերազմը ո՞ր տարին սկսաւ.

Պ. Քրիստոսէ 431 տարի առաջ:

Հ. Ո՞ր ժողովուրդը Սպարտացւոց հետ դաշնակից ըլլալով՝ սկսաւ թշնամութիւն ցուցրնել.

Պ. Թեբացիք, որ Պղատիէս քաղաքը պաշարեցին:

Հ. Ան պատերազմին առջի դիպուածները ո՞րոնք էղան.

Պ. Պղատիէսի պաշարումը, Սպարտայի Արքիդամոս թագաւորին Ատտիկէի մէջ ըրած ասպատակութիւնը, Պերիկղէսին Պեղոպոնեսի մէջ ըրած կոտորածները, Ժանտամահը, Իպոկրատեսի հայրենասիրութիւնը, Պերիկղէսի մահը, Պոտիդէա և Պղատիէս քաղաքներուն պաշարման վերցուիլը, Տանակրայի և Դեղիոնի պատերազմները, Կղէոնի մահը՝ որ Աթենացւոց ճարտասանն էր, և Բրասիդասին մահը՝ որ անոր հակառակորդն էր:



Հ . Աս երկու կողմէն ալ եղած վնասներէն ետքը ինչ զինադադարումն եղաւ .

Պ . Յիսուն տարի զինադադարումն ըրին միջնորդութիւն Նիկիասայ և Պղիստոնաքսայ :

Հ . Աս զինադադարումը իրօք ո՞րչափ ժամանակ տևեց .

Պ . Ինը տարի միայն , իրենց անմիաբանութեան պատճառաւ :

Հ . Ան միջոցին գէսպ 'ի Սիկիլիա դրժբադդ արշաւանքը ինչպէս եղաւ .

Պ . Աղկիբիադ ան միջոցին համոզեց Աթենացիքը Սիկիլիոյ վրայ երթալու . նաւերը ճամբայ ելան . բայց Աղկիբիադ ամբաստանուեցաւ իբրև Հերմեսի արձաններուն կոտորուածներուն պատճառ , ու մէկէն ետևանչուեցաւ : Նիկիաս երկար խորհուրդներէն վերջը Սիրակուսա քաղաքին վրայ գնաց պաշարեց . բայց Գիլիսպոս սպարտացին քսան ցուկանաւով քաղաքը մտաւ , պաշարեց զՆիկիաս և յաղթեց անոր , զօրացր մեծ մասն ալ ջարդեց , մնացածները բռնեց աքսորեց մետաղ հանելու :

Հ . Աղկիբիադի վրայ ինչ դիտելիք կայ .

Պ . Յունաց մէջ ամենէն տեսքովն էր , Աթենացւոց մէջ ալ ամենէն հարուստը , մեծ անէ և կարգէ դուրս տաղանդի տէր , ամէն տեսակ ախտ և ձիրք ունէր . անոր համար ժողովուրդը շատ մեծ համարում ունէր վրան :



Հ . Աղկիբիադ ի՞նչ պատճառաւ Աթենքէն քէն աքսորուեցաւ և ո՞ւր քաշուեցաւ :

Պ . Աղկիբիադ հազիւ թէ Սիկիլիա հասեր էր՝ Աթենացիք զինքը ետ կանչեցին որ վրան եղած ամբաստանութեանցը համար պատասխան տայ . վասն զի կ'ըսէին թէ ճամբայ ելլելուն նախընթաց գիշերը բոլոր շերմեսի արձանները կոտորտեր ու կործաներ էր . իսկ ինքը չուղելով դատաստանի կանչուիլ, Սպարտա քաշուեցաւ :

Հ . Աղկիբիադ Սպարտայի մէջ ի՞նչպէս վարուեցաւ :

Պ . Առջի բերան չափաւորեալ կեանք մը ունեցաւ , մանաւանդ թէ Սպարտացիներէն ալ աւելի չարքաշութիւն ցըցուց . բայց ախտերուն համար շուտով զոուելի եղաւ ու վարնտուեցաւ :

Հ . Աղկիբիադ Սպարտայէն ո՞ւր գնաց .

Պ . Տիսափեռնեսի քով՝ որ Դարեհին կողմանէ Սարգիկէի քաղաքապետ էր :

Հ . Աղկիբիադ աքսորանաց ատենը իր հայրենեացը մէկ ծառայութիւն մը ըրաւ .

Պ . Իր աքսորանաց ժամանակը ճամբայ բացաւ Աթենացւոց զօրքերուն Սամոս երթալու . Աթենացիք աքսորանքէն ետ կանչեցին ու սպարապետ ըրին զինքը և շատ անգամ յաղթութիւններ ըրաւ Սպարտացւոց դէմ :



Հ . Աղկիբիադ Աթէնք դառնալէն ետքը  
ի՞նչ յաջողութիւններ ունեցաւ .

Պ . Ծովու և ցամաքի վրայ հինգ սատե-  
րազմի մէջ յաղթող ելլելէն ետքը՝ Աղկիբիադ  
այնպէս ըրաւ որ Աթէնացիք բոլոր ծովե-  
րուն տիրեցին . Պարսից նախարարները իր-  
մէ սատկառեցան , Սպարտացիք ալ ստի-  
պուեցան հաշտութիւն խնդրելու . Աթէ-  
նացիք յանձն չառին , և Աղկիբիադ նոր նոր  
յաղթութիւններ ընելէն ետքը՝ փառաւո-  
րապէս դարձաւ մտաւ Պիրէոնի նաւահան-  
գիստը :

Հ . Սպարտացիք Աղկիբիադին դէմ զո՞վ  
ծովապետ ընտրեցին .

Պ . Լիւսանդրը , որ խորագէտ ու խորա-  
մանկ զօրավար մըն էր :

Հ . Արգինուսայ սատերազմը ի՞նչ սատ-  
ճառաւ բացուեցաւ .

Պ . Աղկիբիադի տեղասպահներէն մէկը ա-  
նոր հրամանին դէմ Լիւսանդրի հետ սա-  
տերազմեցաւ , ու յաղթուելով՝ Աղկիբիադ  
սպարասպետութենէն ձգուեցաւ . իրեն տե-  
ղը տասը զօրավար ընտրուեցաւ որ Արգի-  
նուսայի քով մեծ յաղթութիւն մը ըրին  
Կալլիկրատիդասին դէմ :

Հ . Աթէնացիք տասնպետաց յաղթու-  
թեանը ի՞նչ փոխարէն ըրին .

Պ . Ոմանք ի մահ ոմանք ալ յաքսորս դա-  
տասպարտեցին , որովհետև սատերազմին մէջ



մեռնողներուն յուղարկաւորութիւն չէին  
ըրած :

Հ . Լիւսանդրի ո՞ր յաղթութեամբը Ա  
թէնք Լակեդեմոնացոց ձեռք անցաւ :

Պ . Եղոս գետին մէջ ըրած նաւական  
յաղթութեամբը :

Հ . Սպարտացիք Աթէնքը առնելով ի՞նչ  
փոսաներ ըրին իրենց և Աթենացոց .

Պ . Լիւսանդր Աթէնք եղած հարստու-  
թիւնը բոլոր Սպարտա տարաւ . և ասով  
աւելի մեծ փոսա հասուց իր հայրենեացը  
քան թէ Աթենացոց :

Հ . Լիւսանդր Աթէնքի մէջ ի՞նչ տեսակ  
կառավարութիւն հաստատեց .

Պ . Երեսուն բունաւորաց իշխանութիւնը :

---

Պեղոպոնեասիան պատերազմէն ետք Յունաց և  
Պարսից մէջ եղած պատերազմէրէ ինչուսան Աղեւ-  
սանդրի հօրը Փիւլիպպոսի ժամանակը :

Հ . Երեսուն բունաւորներուն կառավա-  
րութիւնը ի՞նչպէս առաջ գնաց .

Պ . Աթէնքի առնուելէն ետքը խաղաղու-  
թեան ատեն ութ ամսուան մէջ այնչափ  
մարդ սպաննեցին քաղաքացիներէն , որ  
քսանուեօթը տարուան պատերազմին մէջ



այնչափ կոտորած չէր եղած . ուստի օրէ օր  
անասաւ կը դառնար Աթէնք քաղաքը  
սպանութիւններէն ու կամայ և ակամայ  
փախչողներէն :

Հ . Ո՞ր աթենացին աղատեց իր հայրե-  
նիքը երեսուն բռնաւորաց ձեռքէն .

Պ . Թրասիբուղ , և իրեն հետ Թեբէ ե-  
ղած աքսորուած ու փախստական աթե-  
նացիները :

Հ . Երեսուն բռնաւորաց որոնք յաջոր-  
դեցին .

Պ . Տասն բռնաւորք :

Հ . Ասոնց կառավարութիւնը ի՞նչպէս էր .

Պ . Որովհետև ասոնք ալ առջի բռնաւոր-  
ներէն վար չէին մնար , անոնց պէս վերցը-  
ւեցան :

Հ . Ի՞նչ աւթով Յոյնք նորէն Պարսից  
գործքերուն մէջ խառնուեցան .

Պ . Կիւրոսի իր եղբօրը Արտաշէս Ուշե-  
ղին գէմ ըրած պատերազմին մէջ :

Հ . Աս միջնորդութեան վախճանը ի՞նչ-  
պէս եղաւ .

Պ . Կիւրոս Կրոսեր յաղթուեցաւ Կու-  
նաքսայի մօտ . իրեն օգնական Յոյները շատ  
նեղութեամբ ու Քսենոփոն զօրավարին  
առաջնորդելովը ետ դարձան , և աս դարձը  
ըսուեցաւ Նահանջ Բիւրսան :



Հ . Ան ատենները Աթէնքի մէջ ի՞նչ բան պատահեցաւ .

Պ . Սոկրատ ճշմարտութիւնը սլաշտպանելուն համար՝ անիրաւ տեղը դատաւարտուեցաւ , ու մոլախինգ խմելով մեռաւ :

Հ . Սպարտացիք ան ժամանակները Պարսից դէմ ի՞նչ յաջողութիւններ ունեցան .

Պ . Ագեսիդայոս շատ յաղթութիւններ ընելով ինչուան փոքր Ասիա հասաւ , ու Պարսից թագաւորը սարսափեցուց :

Հ . Ո՞ր քաղաքները ան ատեն Սպարտացւոց դէմ միացան .

Պ . Կորնթոս , Թեբէ , Արգոս և Աթէնք :

Հ . Լիւսանդրի վախճանը ի՞նչպէս եղաւ .

Պ . Լիւսանդր հազիւ թէ Բիովաիա մտեր էր՝ սպաննուեցաւ :

Հ . Լակեդեմոնացւոց Ագեսիդայոս թագաւորին և Կոնոն աթենացւոյն ըրած քաջութիւնները որո՞նք են .

Պ . Կոնոն Պարսից Փառնաւազ նախարարին հետ միաբանելով՝ Կնիդեայ մօտ Լակեդեմոնացւոց նաւատորմին յաղթեց : Ագեսիդայոս յաղթութիւն մը ըրաւ դաշնակցաց վրայ Կորոնէայի մօտ , բայց Կոնոն Պարսից նաւերովը Լակոնիոյ ծովեզերքները զարկաւ , Սպարտացւոցմէ յափշտակած աւարներովը Աթէնքի և Պիրէոնի պարիսպները կանգնեց :



Հ. Յոյնք Սպարտացւոց դրդուելովը Արտաշէսի հետ ի՞նչ դաշինք դրին .

Պ. Անտաղկիդասի վատ դաշնագրու թիւնը (387) :

Հ. Անտաղկիդասի դաշինքովը ի՞նչ պարտքի տակ ընկան Յոյնք .

Պ. Յոյնք ան դաշնագրու թեամբ փոքր Ասիոյ մէջ ունեցած բոլոր քաղաքները Պարսից տուին :

Հ. Անտաղկիդասի դաշնագրու թիւնը երբ եղաւ .

Պ. Քրիստոսէ 387 տարի առաջ :

Հ. Աս դաշինքը Յունաստանի ի՞նչ վնաս ըրաւ .

Պ. Անով բոլոր Յոյները իրարմէ զատուեցան :

Հ. Սպարտացիք անկէց ի՞նչ բանի կը յուսային .

Պ. Կը յուսային որ Յոյնք տկարանան և իրենք մեծնան :

Հ. Սպարտացիք ի՞նչպէս տիրեցին Թեբէի միջնաբերդին .

Պ. Փեբիդաս նենդու թեամբ առաւ Թեբէն, ու ազնուական քաղաքացիները մէջէն աքսորելով իր ուղած մարդիկը անոնց տեղը դրաւ (382) :



Հ. Պեղոսիդաս ի՞նչպէս ազատեց իր հայրենիքը Սպարտացի իշխաններէն .

Պ. Պեղոսիդաս թեբացին աքսորեալներէն մէկն էր . դադառուի մտաւ թեբէ ու Սպարտացի բռնաւորները ջարդելով իր հայրենիքը ազատեց :

Հ. Պեղոսիդասի ու Եպամինոնդի ըրած յաղթութիւնները որո՞նք են .

Պ. Աս երկուքին քաջութեամբը յանկարծ զօրացան թեբացիք ու Աթենացւոց հետ միացան Սպարտայի դէմ : Լեւկտրա քաղաքին քովը զարնուեցան յաղթեցին Լակեդեմոնացւոց . անկէ գնացին թեբացիք Սպարտան սլաշարեցին . բայց Ագեսիդայոս քաջութեամբ սլաշտպանեց քաղաքը : Թեբացիք միացան Մեսսենացւոց հետ , ու երկրորդ անգամ կոտորեցին զՍպարտացիքը Մանտինէա քաղաքին քով Արկադիոյ մէջ :

Հ. Եպամինոնդ ի՞նչպէս մեռաւ .

Պ. Մանտինէայի քով Սպարտացւոց դէմ մեծ յաղթութիւն մը ընելէն վերջը մեռաւ :

Հ. Իր մահուրնէ վերջը թեբէի զօրութիւնը ի՞նչ վիճակի մէջ մնաց .

Պ. Եպամինոնդայ հետ թեբէի զօրութիւնն ալ ընկաւ :

Հ. Եպամինոնդայ մեռնելէն ետքը ի՞նչ սլատահեցաւ Յունաստանի մէջ .

Պ. Սպարտացիք տասը հազար զօրք խըր-




կեցին Եգիպտոս Ագեսիդայոսի առաջնոր  
դուժեամբը Պարսից Արտաշէս թագաւո-  
րին դէմ պատերազմելու . Ագեսիդայոս հոն  
գնաց մեռաւ . Քիոս, Կով, Հռոդոս կղզի-  
ները և Բիւզանդիոն Աթենացւոց հպատա-  
կութենէն ելան . Սպարտայի և Աթէնքի  
փառաւոր ժամանակներն ալ անցան :

Հ . Աթենացւոց և Սպարտացւոց մեծ ու-  
թեանը իյնալէն ետքը ի՞նչ նոր տէրութիւն  
պայծառացաւ .

Պ . Մակեդոնացւոց տէրութիւնը, ուր  
թագաւորեց Փիլիպպոս մեծին Աղէքսանդրի  
հայրը :







## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՄԱԿՆԻՒՆԸ ՅԻՈՅ



Մահեդոնիոյ պատմութիւնը ինչո՞ւն փլէխո՞ւսի  
Լագանորութիւնը :

Հ. ՄԱԿԵՒՈՆԻՍԱՆ Փիլիպպոսէն առաջ  
վերաբերութիւն մը ունէր Յունաց հետ .

Պ. Ինչո՞ւն փիլիպպոսի թագաւորութիւնը  
Յունաց գործողութիւններուն հետ  
վերաբերութիւն մը չունէր :

Հ. Մահեդոնիա անունը ուսկի՞ց առ-  
նուած է .

Պ. Դեւիպալիոնի ցեղէն Մահեդոն անու-  
նով մէկը Բորացոց հետ հիւսիսային կող-  
մերը գնացեր էր . ուստի երկիրն ալ Մահե-  
դոնիա ըսուեցաւ :

Հ. Մահեդոնի գլխաւոր յաջորդները  
որո՞նք եղան .



Պ . Իր յաջորդներուն մէջ անուանի եղաւ Պեղագոն և իր որդին Ասաերովակ որ Տրոյիոյ պատերազմին մէջ Պրիամոսին օգնութիւն գնացողներէն մէկն էր :

Հ . Քրիստոսէ 793 տարի առաջ ո՞ր յոյն գաղթականներ գնացին բնակեցան Մակեդոնիա .

Պ . Կարանոս՝ Տեմենոսի ցեղէն Հերակլի մետասաներորդ յաջորդը, Արգոսէն գաղթականներ բերաւ Մակեդոնիա բնակեցուց, և հոն թագաւորեց :

Հ . Մակեդոնիան երբ սկսաւ ծաղկիլ .

Պ . Փիլիպպոսի թագաւորութեան ժամանակը, որ Ամինտասի որդին էր և Աղէքսանդրի հայրը (360) :

Հ . Փիլիպպոս քանի՞ տարեկան էր թագաւորած ատենը .

Պ . Երեսուցուրեք տարեկան :

Հ . Անկէ առաջ ո՞ւր էր և ի՞նչ կ'ընէր .

Պ . Առաջ թեքէ քաղաքը պատանդ զըրկուած էր, ետքը իր Ամինտաս եղբորորդւոյն խնամակալութիւնը ձեռք ձգեց . բայց քիչ ատենէն թագաւորութիւնն ալ առաւ :

Հ . Փիլիպպոս ի՞նչ զինուորական գումդ հաստատեց .

Պ . Փիլիպպոս հաստատեց այն անուանի



Էազան՝ Գը որ Մակեդոնացւոց մեծամեծ յաղթութեանց պատճառ եղաւ :

Հ . Ի՞նչ ազդերու տիրեց Փիլիպպոս առջի բերանը .

Պ . Լիւրիկեցւոց և Թրակացւոց :

Հ . Փիլիպպոսի կինն ո՞վ էր , և Աղէքսանդրի ծնած օրը ի՞նչ աւետիս առաւ .

Պ . Փիլիպպոսի կինն էր Ռղիմալիա Եսիււացւոց Նէոպոլիտմէոս թագաւորին դուստրը : Աղէքսանդրի ծնած օրը Փիլիպպոս իրեք աւետիս առաւ . այսինքն Աղէքսանդրի ծնունդը , յաղթութիւն մը ողիմպիական խաղերուն մէջ , և Պարմենիոնի յաղթութիւնը Լիւրիկեցւոց դէմ :

Հ . Աղէքսանդրի դաստիարակ ո՞վ եղաւ .

Պ . Արիստոտէլ փիլիսոփան . Փիլիպպոս աս նամակը գրեց Արիստոտէլին . « Շնորհակալ եմ աստուածոց որ ինձի որդի մը տուին . բայց աւելի շնորհակալ եմ իրենց որ Արիստոտէլի ժամանակը տուին . տարակոյս չունիմ որ զինքը մեզի արժանի յաջորդ կ'ընես և Մակեդոնիոյ արժանի թագաւոր » :

Հ . Յոյնք ան ատենները մէկմէկու դէմ ի՞նչ պատերազմ բացեր էին .

Պ . Մեհենական պատերազմը . և ասոր պատճառն այն էր որ Փովկիսացիք դեղփեան Ապոլլոնի նուիրուած երկիրները վարուցան ըրեր էին :



Հ . Փիլիպպոս ի՞նչ արշաւանքներով սկսաւ Յուդաստանի տիրել .

Պ . Փիլիպպոս նախ Թրակիոյ Մեթոն քաղաքին տիրեց և իր մէկ աչքը ասոր պաշարման ժամանակը կորսընցուց : Երկու անգամ Փասիւղոսի յաղթեց , և Լիկոփրոնի փախչելովը Թեսսաղացոց հեծելազօրքը իրեն անձնատուր եղան : Քիչ ատենէն ուղեց Թերմոպիլէն ալ առնել , բայց չկրցաւ :

Հ . Նոյն ատենները Աթենքի մէջ ի՞նչ ճարտասաններ կային , և ի՞նչ մտքի վրայ էին .

Պ . Դեմոսթենէս և Փոկիոն անուանի ճարտասանները . ասոնց մէկը պատերազմ կ'ուղէր , մէկալը խաղաղութիւն :

Հ . Եսքինէս ի՞նչ խորհուրդ տուաւ ամ փիլիսոփոնեան ժողովոյն մէջ .

Պ . Եսքինէս՝ որ Դեմոսթենէսի ոսոխն էր ու Փիլիպպոսին կողմը կը բռնէր , յորդորեց ամփիլիսոփոնեան ժողովը որ Փիլիպպոսի առաջնորդութեամբը նորէն մեհենական պատերազմ բացուի Ամփիսա քաղաքին լուկրացի բնակիչներուն դէմ , որ Դեղփեան մեհենին նուիրած Աիուեան դաշտերը հերկեր էին :

Հ . Աթենացիք որո՞նց հետ դաշնագրեցան , և Փիլիպպոս ի՞նչ քաջութիւն ըրաւ Բիովաիոյ մէջ .

Պ . Աթենացիք Թեբացոց հետ դաշնա



դրութեամբ միաբանեցան . Փիլիպպոս Ե-  
ղատէայի տիրեց՝ որ Փովկիսի և Բիովտիոյ  
դուռը կը սեպուէր . Ետքը երևելի յաղթու-  
թիւն մը ըրաւ Քերովնիա քաղաքին մօտ :

Հ . Փիլիպպոս իր յաղթութիւններովը  
լինչ պատիւ առաւ .

Պ . Յունաց Պարսից դէմ ըրած պատե-  
րազմին սպարապետ ընտրուեցաւ :

Հ . Աս արշաւանքին ինչ բան արդէլք  
եղաւ .

Պ . Փիլիպպոս երբոր կը պատրաստուէր  
Պարսից վրայ երթալու , Պաւսանիաս ա-  
նունով իր թիկնապահէն սպաննուեցաւ  
(336) :

Հ . Աղէքսանդր երբոր թագաւորեց քա-  
նի՞ տարեկան էր . և ան ժամանակը Պարս-  
կաստան ինչ վիճակի մէջ էր .

Պ . Քսան տարեկան էր Աղէքսանդր եր-  
բոր իր հօրը յաջորդեց . նոյն ատենները  
Պարսկաստանի մէջ թագաւորեց Գարեհ  
Կողոմանոս :

Հ . Աղէքսանդր առջի արշաւանքն ո՞ւր  
ըրաւ .

Պ . Ապստամբած Թրակացւոց , Տրիքա-  
ղացւոց և Գետաց վրայ , և զանոնք նուաճեց .  
նոյն ժամանակը սուտ լուր մը տարածուե-  
ցաւ թէ Աղէքսանդր մեռեր է :



Հ. Թեբացիք Աղեքսանդրի մահուան սուտ լուրը լսելով ի՞նչ ըրին .

Պ. Մակեդոնացի զորաց մէկ մասը ջարդեցին . Աղեքսանդր աս բանիս վրայ կատաղած՝ Թեբէ քաղաքը կործանեց , ու միայն Պինդարոս բանաստեղծին տունը չթողուց որ քակուի :

Հ. Աղեքսանդր որչափ զօրքով և ի՞նչ պատրաստութեամբ գնաց Պարսից վրայ .

Պ. Երեսունուհինգ հազար հեռեակ , և չորս հազար հինգ հարիւր ձիաւոր զօրքով . հարիւր վաթսուն ցուկանաւով , եօթանասուն տաղանդով ու քառասուն օրուան պաշարով :

Հ. Գրանիկոնի պատերազմը որն է .

Պ. Գրանիկոն գետին եղերքը եղած պատերազմին ժամանակը Աղեքսանդր իրեն ներովը թշնամեաց նետերուն տակէն գետին միւս կողմը անցաւ ու Պարսիկները ցրուեց . Պարսից զորավարն էր Մեմնոն Հըռոդացին :

Հ. Ասյալթութէս պտուղը ի՞նչ եղաւ .

Պ. Մակեդոնացիք Փոքր Ասիոյ տիրեցին :

Հ. Գորդիոնի կծիկին պատմութիւնը ի՞նչ է .

Պ. Աղեքսանդր երբոր Գորդիոն քաղաքը հասաւ , հոն լսեց թէ պատգամ մը կար որ ո՛վ որ Միդասայ սայլին կծիկը քակէ՝ բոլոր



Ասիոյ սիսի տիրէ . Աղէքսանդր շատ աշխատելէն ետքը երբոր չկրցաւ քակել, « Ի՞նչ փոյթս է ինչպէս քակուիլը » ըսաւ, ու թրովը կտրեց քակեց :

Հ . Մեմնոն Հռոդացին Գարեհի ի՞նչ խորհուրդ տուեր էր .

Պ . Աղէքսանդրը իր արշաւանքէն ետ դարձնելու համար խորհուրդ տուաւ Գարեհի որ Մակեդոնիոյ վրայ վազէ, և Ասիոյ մէջ չպատերազմի հետը, Աղէքսանդր ալ ստիպուի իր երկիրը դառնալու :

Հ . Տարսոնի մէջ Աղէքսանդրի ի՞նչ պատահեցաւ .

Պ . Աղէքսանդր երբոր Տարսոն հասաւ, անդգուշութեամբ Աիւզնոս գետին մէջ լուացուեցաւ, ջուրը պաղ ըլլալով մեծ հիւանդութիւն եկաւ վրան ու իր Փիլիպպոս բժշկին գեղերովը հազիւ առողջացաւ :

Հ . Իսսոսի պատերազմը ի՞նչ է .

Պ . Գարեհ վեցհարիւր հազար զօրքով ելաւ Աղէքսանդրի դիմացը, և Իսսոս դաշտին մէջ անյարմար տեղ բանակած ըլլալուն համար չարաչար յաղթուեցաւ, իր ընտանիքն ալ գերի ընկան :

Հ . Աղէքսանդր Իսսոսի յաղթութեամբը ի՞նչ ստացաւ .

Պ . Դամասկոս քաղաքը եղած Գարեհի գանձուն տիրեց :



Հ. Աբգողոնիմոսի պատմութիւնը ի՞նչ է.

Պ. Աբգողոնիմոս թագաւորական ցեղէ վեհանձն իշխան մըն էր, բայց այնչափ աղքատ որ երբոր Մակեդոնացիք Աղեքսանդրի հրամանովը գնացին զինքը Սիգոնացւոց վրայ կուսակալ դնելու՝ տեսան որ իր սարտիզին մէջի գէշ խոտերը կը փրցընէր, ու շատ դժուարութեամբ յանձն առաւ ան իշխանութիւնը:

Հ. Աղեքսանդր ի՞նչպէս առաւ Տիւրոս քաղաքը.

Պ. Եօթն ամիս պաշարելէն վերջը՝ ծովուն մէջը թուամբ շինեց որով Տիւրոս կղզին ցամաքին հետ միացուց, ու անանկով առաւ քաղաքը:

Հ. Յագդոս քահանայապետը ի՞նչպէս ելաւ Աղեքսանդրի դիմացը.

Պ. Հրեայք չէին ուղած Աղեքսանդրի օգնել Պարսից գէմ, անոր համար Աղեքսանդր քարկացած՝ Երուսաղեմի վրայ գնաց. Յագդոս անոր դիմացն ելաւ սիրտը առաւ, և Դանիէլ մարգարէին իրեն յաղթութեանցը համար ըրած մարգարէութիւնները ցըցուց:

Հ. Աղեքսանդր Եգիպտոսի մէջ ի՞նչ գործքեր ըրաւ.

Պ. Հրէաստանէն Եգիպտոս որ գնաց, Մեմփիսի մէջ ան երկրին աստուածներուն զոհ մատոյց. Աղեքսանդրիա քաղաքին հիմը



գրաւ, և Վիբիա գնաց որ հոն հրատարակէ  
թէ ինքը Արամազդայ Ամիննի որդին է :

Հ . Դարեհ չուզէց հաշտութիւն ընել  
Աղէքսանդրի հետ .

Պ . Դարեհ երկու անգամ գեսպան ղըր-  
կեց հաշտութիւն ընելու, բայց Աղէքսանդր  
յանձն չառաւ :

Հ . Ի՞նչ պատերազմով Աղէքսանդր վեր-  
ջապէս տիրեց Ասիոյ մեծ մասին .

Պ . Արբեղայի քով եղած պատերազմէն  
ետքը :

Հ . Արբեղա քաղաքը ո՛ւր կ'իյնայ .

Պ . Ասորեստանի մէջ քաղաք մըն էր՝ Նի-  
նուէէն քիչ մը հեռու, Բաբելոնի հիւսի-  
սային կողմը . հիմակուան Էրսիլ ըսուած  
քաղաքն է կ'ըսեն :

Հ . Արբեղայի պատերազմը ի՞նչպէս ե-  
ղաւ .

Պ . Դարեհ և Աղէքսանդր Արբեղայի  
քով զարնուեցան . Պարսիկք յաղթուե-  
ցան, Դարեհ ալ հազիւ փախաւ ազատե-  
ցաւ :

Հ . Աղէքսանդր Արբեղայի յաղթու-  
թեամբը ի՞նչ բան ձեռք ձգեց .

Պ . Պարսից հին տէրութիւնը կործանե-  
լէն ետքը գրեթէ բոլոր Ասիոյ ալ տիրեց :



Հ . Դարեհ ինչպէս մեռաւ .

Պ . Դարեհի Բեասոս անուանով նախարարը զինքը սպաննեց . քիչ ատենէն վերջը զինքը բռնեց Աղեքսանդր , ու ձիու սրոջին կապելով կտոր կտոր ըրաւ՝ Դարեհի մահուան վրէժը առնելու մտքով :

Հ . Աղեքսանդր ինչպէս տիրեց Հայաստանի .

Պ . Մեր Հայկազանց վերջի Թագաւորը Վահէ Աղեքսանդրի դէմն ելաւ , ու պատերազմին մէջ ընկաւ մեռաւ . իր երկիրն ալ Աղեքսանդրի ձեռքն անցաւ :

Հ . Աղեքսանդր Ասիոյ հիւսիսային կողմերը ինչուան ուր տիրեց , և Յաքսարդ գետին եզերքը ինչ քաղաք շինեց .

Պ . Աղեքսանդր ինչուան Սոգդիանա ըսուած երկիրը գնաց , անցաւ Ոքսոս գետը , և Սկիւթացոց սահմանագլուխը շինեց Աղեքսանդրիա վերջին անուանով քաղաքը :

Հ . Աղեքսանդր ան ատենները ինչ սլարսաւելի գործք ըրաւ .

Պ . Իր ձեռքովը Աղիտոսը սպաննեց , ու Կալիսթենէս փիլիսոփան մեռցրնել տուաւ :

Հ . Տաքսիղոս ինչպէս հնազանդեցաւ Աղեքսանդրի և Պոլսոս ինչպէս դէմ կեցաւ .

Պ . Աղեքսանդր Հնդկաստան մտնելուն պէս՝ Տաքսիղոս անձնատուր եղաւ : Իսկ Պոլսոս դէմ կեցաւ քաջութեամբ , Աղեք-



սանդր յաղթեց անոր, բռնեց զինքը ու հար-  
ցուց թէ « Ինչպէս կ'ուզես որ հեադ վա-  
րուիմ » . սատասխան տուաւ Պովրոս թէ  
« Ինչպէս որ կը վայելէ թագաւորի մը հեա  
վարուիլ » : Աղէքսանդր զարմացաւ անոր  
մեծասրտութեանը վրայ, և նորէն երկիրը  
իրեն յանձնեց :

Հ . Աղէքսանդր Աքսիդրակացւոց քա-  
ղաքը սաշարելու ժամանակ ինչ յանդրդ-  
նութիւն ըրաւ .

Պ . Քաղաքին սաշարման ատենը սարրու-  
պին ներսի կողմը ցաօքեց, թշնամիներէն  
սաստիկ վէրք մը առաւ, և իր զօրաց քա-  
ջութեամբը հազիւ մահուրնէ ազատեցաւ :

Հ . Աղէքսանդր ինչպէս ետ դարձաւ .

Պ . Ինքը ցամաքէն Բաբելոն եկաւ . Նէար-  
քոն ալ նաւատորմիդը ծովով հոն բերաւ :

Հ . Աղէքսանդր ինչպէս մեռաւ .

Պ . Մեծն Աղէքսանդր երեսուցուեր-  
կու տարեկան մեռաւ Բաբելոնի մէջ . ու  
մանք կ'ըսեն թէ թոյն տուին իրեն Անտի-  
պատրոսի հրամանաւը, ոմանք ալ թէ չա-  
փազանց կերութեամբն ինասուեցաւ ու մե-  
ռաւ :

Հ . Քանի տարի թագաւորեր էր .

Պ . Տասուերկու տարի . այսինքն Քրիս-  
տոսէ առաջ 336էն ինչուան 323 :



Հ. Ի՞նչ պատճառներով Աթենացիք Յունաստանի մէջ այնչափ զօրաւոր եղան .

Պ. Աթենացւոց այնչափ զօրանալուն պատճառներն էին , նախ՝ Պիսիաւորասի և իր որդւոցը լաւ կառավարութիւն որով ծաղկեցան Աթենքի մէջ երկրագործութիւնը , ճարտարութիւնը և վաճառականութիւնը :

Երկրորդ՝ Աթենացւոց ըրած յաղթութիւնները , և բազմաթիւ դաղթականներ ասպիս անդին զրկելը :

Երրորդ՝ ծովային զօրութեան շատնալը :

Չորրորդ՝ ան փառաւոր յաղթութիւններն որ ըրին Մարաթոնի , Սաղամիսայի և Պղատէայի պատերազմներուն մէջ :

Հ. Սպարտացւոց Յունաստանի մէջ զօրանալուն պատճառն ի՞նչ եղաւ .

Պ. Լիկուրգոսի օրէնսդրութիւնը , որով Սպարտացւոց հայրենասիրութիւնը և պատերազմական ոգին վառեցաւ , և անով ու տիրապետութեան սիրով առաջ Պելոպոնեսի , ու ետքը բոլոր Յունաստանի մէջ զօրաւոր աղդ մը եղան :

Հ. Թեբացւոց զօրանալուն պատճառները որո՞նք եղան .

Պ. Սպարտացիք երբոր Աթենքը առին բոլոր Յունաստանի իշխանունին ալ ձեռք առին . ինչուան Թեբէ քաղաքին մէջ ալ Սպարտացիք պահապան զօրք դրին . բայց քիչ ատենէն երկու քաջ զօրավարներ ոչ միայն ա .



զատեցին թերէն Սպարտացւոց բռնութե-  
նէն, այլ և թերացւոց իշխանութիւնը  
Սպարտացւոց իշխանութեանէն աւելի մեծ-  
ցուցին, ու Լեւկորայի և Մանտինէայի  
յաղթութեամբք քիչ մնաց որ Սպարտան  
սլիտի կործանէր: Բայց աս թերացւոց զօ-  
րութիւնը ինչպէս որ Եպամինոնդէն և  
Պեղոսպիդասէն սկսած էր՝ անոնց հետ ալ  
ընկաւ:

Հ. Մակեդոնացւոց մեծնալուն պատճա-  
ռը ի՞նչ եղաւ.

Պ. Փիլիպպոսի ճարտար քաղաքականու-  
թիւնն ու զինուորական քաջութիւնները,  
որով Յունաց իրարու դէմ ունեցած թըշ-  
նամութիւնները իր շահուն գործածեց,  
մէկ կողմանէ ալ Մակեդոնիան զարմանալի  
կարգադրութիւններով զարդարեց. Մա-  
կեդոնական փաղանգը հնարեց, թեսա-  
ղացւոց հեծելագունդը իրեններուն հետ  
միացուց, նաւեր շինեց, թրակիան ու Լիւ-  
րիկէն առնելով՝ Մակեդոնիան ընդարձա-  
կեց, Յունաստանի մէջ ալ այնչափ յաղ-  
թութիւններ ըրաւ:

Հ. Եւրոպացի Յունաց՝ Ասիոյ մէջ զօրա-  
նալուն պատճառը ի՞նչ էր.

Պ. Հին ատենները Յունաց Փոքր Ասիոյ  
մէջ գաղթականներ հաստատելը. թերևս  
նաև Տրոյիոյ պատերազմը և Արգոնաւոր-  
դաց արշաւանքը. բայց անոնցմէ ալ աւելի՝  
Վիսոնի ու Ագեսիդայոսի մեծամեծ յաղ-



Թուժիւնները որ ըրին Ասիոյ մէջ Մարա-  
թոնի Սաղամինայի և Պղատէայի պատե-  
րազմներէն ետքը, և իրենց քաջութեամբը  
բոլոր Ասիան դողացուցին. նմանապէս Նա-  
հանջ բերուն, որ թէպէտ ետ քաջուիլ մըն  
էր՝ բայց Յունաց փառքը աւելցուց: Բայց  
աս ամենէն ալ աւելի Աղեքսանդրի աշխար-  
հակալութեամբն էր որ Յոյիք Եգեան ծո-  
վէն ինչուան Հնդկաստան տարածեցին ի-  
րենց զօրաւոր իշխանութիւնը և անունը:







## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# Յ Լ Ջ Ո Ր Դ Ե Յ Ն

## Ե Գ Ն Ք Ս Ե Ն Դ Ր Ի

Ազեփանդրի յաջորդաց իտիները ինչո՞ւն իսպառ-  
 «ի պատերազմը: — Մտիեդոնիոյ և Յունաստանի  
 երբի պատմութիւնները՝ ինչո՞ւն համըմայեցո՞ց  
 քիբայեփութիւնը:

Հ. ԱՆՔՍԱՆԴՐ Մեռնելու ատենը որո՞ւ  
 թողուց իր տէրութիւնը.

Պ. Մեռնելու ատենը զօրավարները հար-  
 ցուցին իրեն թէ որո՞ւ կը ձգես տէրու-  
 թիւնդ. «Արժանագունին, ըսաւ, բայց վա-  
 խեմ թէ թաղումս առանց արիւնհեղութե  
 պիտի չըլայ»:

Հ. Աղեքսանդրի տէրութիւնը որ զօրա-  
 վարաց մէջ բաժնուեցաւ, և ամէն մէկուն  
 ինչ գաւառ ընկաւ.



Պ . Անտիպատրոսի բաժինն ընկաւ Մակեդոնիա , Եպիւռոս և Յունաստան . Լիւսիմաքոսի Թրակիան . Ղազոսի որդւոյն Պտղոմէոսի Եգիպտոս . Անտիգոնոսի Պամփիլիա , Լիկիա և Փոլւզիա . Պիթոնի Մարաց Էրկիրը . Եւմենէսի Կասպագոլկիան , և այլն :

Հ . Աղէքսանդր իրեն զով Ժառանգ թողուց անուսով .

Պ . Իր Էղբայրը Արիդէոս և Հռոքսանէին նորաժին սղան :

Հ . Ո՞վ Էղաւ անոնց խնամակալ .

Պ . Պերդիկկաս՝ Աղէքսանդրի մատնին առնողը :

Հ . Սելէւկոս և Կասանդր ի՞նչ իշխանութիւն առին .

Պ . Սելէւկոս Էղաւ բոլոր ձիաւոր զօրաց սպարապետ . Իսկ Կասանդր Թագաւորին թիկնապահներուն զօրավար :

Հ . Պերդիկկաս ի՞նչ իշխանութեան Էտեէ Էղաւ , և ի՞նչ վերջ ունեցաւ .

Պ . Պերդիկկաս Անտիպատրոսի աղջիկն որ կին առեր էր՝ արձրկեց , և Թագաւորութեան Էտեէ ըլլալով՝ Աղէքսանդրի Կղէոպատրա քոյրը կին առնել ուզեց . բայց իրեն դէմ Անտիգոնոս իր հետը միաբանեց Անտիպատրոսը , Կրատերը և Պտղոմէոսը . Իսկ Պերդիկկաս Մեմփիսի քով յաղթուէլէն Էտքը , իր զօրքերէն սպաննուեցաւ :



Հ . Ո՞ր զօրավարը Աղեքսանդրի ցեղին  
հաւատարիմ մնաց .

Պ . Քաջն Եւմենէս :

Հ . Պերդիկկասայ մեռնելէն վերջը որո՞նք  
եղան ետեւէ ետեւ խնամակալ .

Պ . Պիթոն , Անտիպատրոս և Պողիսպեր-  
քոն :

Հ . Ողիմպիա ի՞նչպէս մեռաւ .

Պ . Որովհետեւ Ողիմպիա սպաննել տուեր  
էր Արիգէոսը , անոր Եւրիդիկէ կինը և Ան-  
տիպատրի երկրորդ որդին Նիկանովը , Վա-  
սանդր աս անգթութեանցը վրայ բարկա-  
ցաւ ու սպաննեց զինքը :

Հ . Եւմենէսին Անտիգոնոսի հետ ըրած  
պատերազմները ի՞նչ վերջ ունեցան .

Պ . Եւմենէս Անտիգոնոսի զօրութեանը  
չկրնալով դէմ դնել՝ Արծաթասպարըսուած  
խռովարար հին գունդը հետը առաւ ու  
վերին Ասիա քաշուեցաւ , հոն Պասիտիգրիա  
գետին եզերքը զարնուեցաւ ու յաղթեց  
Անտիգոնոսին . բայց իր զօրքերը մասնեցին  
զինքը թշնամւոյն ձեռքը՝ իրենց կորսընցու-  
ցած կահարասեաց տեղը :

Հ . Եւմենէսի բռնուելովը ի՞նչ խռովու-  
թիւն ելաւ Անտիգոնոսի դէմ .

Պ . Սելէւկոս , Պալլոմէոս , Ալեքսիմաքոս  
և Վասանդր միաբանեցան ու անոր դէմ  
եղան :



Հ. Ասիոյ և Յունաստանի մէջ աս սլա-  
տերագմները ի՞նչ վերջ ունեցան .

Պ. Անտիգոնոս իր տեղապահներուն  
ձեռքովը Յունաստանի մէջ, անձամբ ալ Ա-  
սիոյ մէջ յաղթող ելաւ : Պողոտէոս Գաղայի  
քով յաղթութիւն մը ընելէն վերջը կորսըն-  
ցուց Ասորիքը, Փիւնիկէն և Պաղեստինը :  
Սելեւկոս անկէ բաղգաւոր գտնուելով ա-  
թորը հաստատեց Բաբելոնի մէջ և ան ա-  
տեն սկսաւ Սելեւկեանց հռչակաւոր թուա-  
կանը (311) :

Հ. Հռոքսանէ և իր որդին ի՞նչպէս մեռան .

Պ. Կասանդր երկուքն ալ սպաննեց :

Հ. Աղեքսանդրի վերջի որդին ի՞նչպէս  
մեռաւ .

Պ. Աղեքսանդրի ցեղէն վերջի արու ժա-  
ռանդն էր Հերակղէս՝ Բարսենայի և Աղեք-  
սանդրի որդին . Պողիսպերքոն ասիկայ իր  
քովը կանչեց որ Հռոքսանէի մահուան  
վրէժը առնէ, բայց Հերակղէս ալ քիչ ա-  
տենէն Կասանդրի ձեռքն ընկաւ ու սպան-  
նուեցաւ :

Հ. Ի՞նչ նոր միաբանութիւն եղաւ ան  
ատեն Անտիգոնոսի և իր որդւոյն դէմ .

Պ. Չորս զորավարներն ալ թաղաւորի  
անուն առած անոնց դէմ միաբանեցան :

Հ. Դեմեարիոս Պողիսրկեսա կամ Պաշա-  
րիչ ո՞վ էր և վրան ի՞նչ կը պատմուի .



Պ . Դեմեարիոս Անտիգոնոսի որդին էր .  
չորս զօրավարներուն ալ յաղթեց ծովու և  
ցամաքի վրայ : Տարի մը Հռոմոս կենալէն  
էտքը՝ Յունաստան անցաւ , և անանկ սար-  
սափեցուց չորս զօրավարներն որ էրրորդ  
անգամ միաբանեցան անոնք իրեն գէմ :

Հ . Աս չորս զօրավարներուն և Անտիգո-  
նոսի ու որդւոյն մէջ ի՞նչ մեծ պատերազմ  
եղաւ .

Պ . Իպսոսի պատերազմը 301ին :

Հ . Իպսոս ո՞ւր կ'իյնար .

Պ . Փռիւզիոյ մէջ՝ Փոքր Ասիոյ մէջտե-  
ղուանքը :

Հ . Անտիգոնոսի մահուընէն վերջը իր  
տէրութիւնը ի՞նչ եղաւ .

Պ . Չորս զօրավարները այսինքն Պտղո-  
մէոս , Սելէւկոս , Կասանդր և Լիւսիմաքոս  
մէջերնին բաժնեցին :

Հ . Իպսոսի պատերազմէն վերջը Աղեք-  
սանդրի տէրութիւնը ի՞նչ կերպով բաժ-  
նուեցաւ .

Պ . Պտղոմէոսի բաժին եղան Եգիպտոս ,  
Կիւրենէ , Փիւնիկէ , Պաղեստին և Սաորին  
Ասորիք . Կասանդրի Մակեդոնիա և Յու-  
նաստան . Լիւսիմաքոսի Փոքր Ասիա և Թրա-  
կիա . Սելէւկոսի Ասիան՝ Ասորոց երկրէն  
ինչուան Հնդկաստան :



Հ. Պաղոմէոսի թագաւորութիւնը ինչուան ո՞ւր էր .

Պ. Կիւրենէէն ինչուան Ստորին Ասորիք :

Հ. Կասանդրի թագաւորութիւնը ինչուան ո՞ւր էր .

Պ. Թրակիայէն ինչուան Յունաստան :

Հ. Լիւսիմաքոսի նը .

Պ. Մակեդոնիայէն ինչուան Սելեւկոսի թագաւորութեան սահմանը :

Հ. Սելեւկոսի նը .

Պ. Ասորւոց երկրէն ինչուան Հնդկաստան :

Հ. Սելեւկեանց թուականը ի՞նչ դիպուած է կը սկսի .

Պ. Սելեւկոսի Բաբելոն առնելէն, 311ին :

Հ. Կասանդրի տէրութիւնը Մակեդոնիոյ մէջ ո՞րչափ ատեն դիմացաւ .

Պ. Կասանդր իրեք տարի խաղաղութիւն թագաւորեց Մակեդոնիոյ մէջ (301էն ինչուան 298) :

Հ. Կասանդրի մեռնելէն վերջը Մակեդոնիան ի՞նչ վիճակի մէջ մնաց .

Պ. Պիւսոս՝ Եսպիոսի թագաւորը, Դեմետր Պաշարիչ և Լիւսիմաքոս Թրակիոյ թագաւորը՝ Մակեդոնիոյ զանազան կտորներուն վրայ սկսան կռուիլ :



Հ . Գեմեար Պաշարիչ և Լիւսիմաքոս  
ի՛նչ եղան .

Պ . Գեմեար Սեւեւկոսի ձեռքն ընկաւ .  
քիչ մը վերջն ալ Լիւսիմաքոս սպաննուե-  
ցաւ :

Հ . Պիւռոսի դէմ ո՛վ ելաւ .

Պ . Գեմեարի որդին Անտիգոնոս Գոնա-  
տաս և Պտղոմէոս Կերաւնոս . բայց Պիւ-  
ռոս ստիպուեցաւ իր զէնքերը անոնցմէ  
Հռովմայեցւոց դէմ դարձնելու :

Հ . Անտիգոնոս Գոնատասի և Պտղոմէոս  
Կերաւնոսի վերջերը ի՛նչպէս եղան .

Պ . Կերաւնոս յաղթեց Անտիգոնոսին,  
ինքն ալ սպաննուեցաւ Գաղղիացւոցմէ որ  
դեռ նոր յարձըկեր էին Յունաստան :

Հ . Մակեդոնացւոց Թագաւորութիւնը  
Կերաւնոսէն վերջը որո՞ւ անցաւ .

Պ . Գեմեարի որդւոյն Անտիգոնոս Գո-  
նատասին :

Հ . Գոնատաս ի՛նչպէս առաւ Մակեդո-  
նիան և որչափ ասէն Թագաւորեց Հոն .

Պ . Երբոր Պիւռոս Արգոսի պաշարման  
Ժամանակը մեռաւ , Գոնատաս տիրեց Մա-  
կեդոնիոյ , և երեսուն տարի Թագաւորեց  
(272էն ինչուան 243) :

Հ . Անտիգոնոս Գոնատասի ո՛վ յաջոր-  
դեց , և ի՛նչ կերպ կառավարուի ունեցաւ .



Պ . Գոնատասի որդին Դեմեար Բ , որ  
հօրը պէս խաղաղութեամբ թագաւորեց :

Հ . Դեմեար երկրորդին մեռնելէն ետքը  
տէրութիւնը որո՞ւ անցաւ .

Պ . Իր եղբօրը Անտիգոնոս Գոսոնին , որ  
տասուերկու տարի փառաւորապէս թա-  
գաւորեց , բայց իր եղբօրորդւոյն իրաւուն-  
քը յափշտակելով :

Հ . Մակեդոնիոյ աթոռոյն օրինաւոր ժա-  
ռանգը ո՞վ եղաւ .

Պ . Գոսոնի մահուրնէն վերջը՝ թագաւո-  
րութիւնը անցաւ օրինաւոր ժառանգին որ  
էր Փիլիպպոս Գ , Դեմեար երկրորդին որ-  
դին :

Հ . Ո՞ր թագաւորին ժամանակը հռով-  
մայեցիք սկսան Յունաստանի բաներուն  
խառնուիլ .

Պ . Փիլիպպոս երրորդին ժամանակը , որ  
Դեմեար երկրորդին որդին էր :

Հ . Փիլիպպոս և Յոյիք ի՞նչ բանով աւ-  
րուեցան հռովմայեցւոյ հետ .

Պ . Ան դաշնագրութեամբ որ ըրին Ան-  
նիբաղայ հետ երբոր Աննիբաղ հռովմայե-  
ցւոյ յաղթեց Տրասիմեն լճին քովը :

Հ . Փիլիպպոս հռովմայեցւոյ ո՞ր ծովա-  
պետէն նեղն ընկած իր նաւատորմիդը այրեց .

Պ . Վաղերիտս Լեւինիտսէն :



Հ. Փիլիպպոս հաշտութիւն խնդրեց  
հռովմայեցւոցմէ .

Պ. հաշտութիւն խնդրեց ու առաւ, որ  
սէս զի նոր պատերազմի պատրաստութիւն  
տեսնէ :

Հ. Ի՞նչ նոր արշաւանքով հռովմայեցիքը  
նորէն իր վրայ պատերազմի գրգռեց .

Պ. Պերդամոնի Ատտաղոս Ա թագաւո-  
րին և հռոմէոս կղզւոյն վրայ վաղեց, որ  
հռովմայեցւոց դաշնակից էին :

Հ. Ան ժամանակները հռովմ ի՞նչ վիճա-  
կի մէջ էր .

Պ. Ան ատենները Սկիաիոն Ափրիկեցին  
Աննիբաղայ յաղթած ըլլալով, հռովմ խա-  
ղաղութեան մէջ էր :

Հ. հռովմայեցիք ետևէ ետև Փիլիպպոսի  
վրայ ի՞նչ զորավարներ զրկեցին, և ի՞նչ պա-  
տերազմ ըրին .

Պ. Նախ Սուլպիկոս բդեաշխը զրկեցին,  
ետքը Կուինտոս Փլամինիոս, որ Շանա-  
գլուխ ըսուած տեղը մեծ յաղթութիւն մը  
ըրաւ (197) :

Հ. Շանագլուխը ո՞ւր կ'էյնայ .

Պ. Թեսսաղիոյ մէջ՝ Լարիսսայի հարա-  
ւային արևելեան կողմը :

Հ. Փիլիպպոս ետքերը ի՞նչ տնական երկ-  
պառակութիւններ ունեցաւ .



Պ . Իր երկու որդիքը Պերսէոս և Դեմետր իրարու հետ կռուրտեցան . Փիլիպպոս առջինին զրպարտութեանցը մտիկ ընելով զԴեմետր սպաննել տուաւ , թէպէտ անոր անմեղ ըլլալը իր մեռնելէն առաջ ալ խնացաւ :

Հ . Փիլիպպոս երրորդին ո՞վ յաջորդեց .

Պ . Իր որդին Պերսէոս .

Հ . Պերսէոս ի՞նչ պատերազմներ ըրաւ Հռովմայեցւոց հետ , և ի՞նչպէս մեռաւ .

Պ . Պերսէոս իր հօրը Հռովմայեցւոց դէմ ունեցած ատելութիւնն ալ ժառանգելով առջի բերան քանի մը անգամ յաղթեց անոնց . բայց Պողոս Եմիլիոս բդեաշխը իրեն դէմ մեծ յաղթութիւն մը ըրաւ Պիւզնայի քով , զինքը գերի բռնեց ու Հռովմ յաղթանակով մտնելու ատենը հետը տարաւ :

Հ . Պիւզնայի առաջին պատերազմէն վերջը Մակեդոնացւոց տէրութիւնը ի՞նչ վիճակի մէջ մնաց .

Պ . Ազաա տէրութիւն եղաւ :

Հ . Պիւզնա ո՞ւր կ'իյնար .

Պ . Մակեդոնիոյ հարաւային կողմը Թերմական ծոցին քով :

Հ . Մակեդոնիան ե՞րբ Հռովմայեցւոց գաւառ եղաւ .

Պ . Պիւզնայի երկրորդ պատերազմէն



վերջը 148ին, որով Մեաեղզոս Անդրիակոսի  
յաղթեց որ ինքզինքը Փիլիպպոսի որդի  
կ'անուանէր:

Հ. Յոյնք երբոր Աղէքսանդրի մահուան  
լուրը առին ի՞նչ ըրին (323) .

Պ. Յոյնք, և մանաւանդ Աթենացիք միա-  
բանեցան որ իրենց հին ազատութիւնը նո-  
րէն ձեռք ձգեն:

Հ. Դեմոսթենէս և Փոկիոն ի՞նչ կ'ընէին  
ան առեն Աթէնքի մէջ .

Պ. Փոկիոն կը յորդորէր Յոյներն որ  
ձեռք զարկած բաներնուն վրայ առաջ աղէկ  
մտածեն. Դեմոսթենէս Պեղոպոնէսը ոտք  
հանելու ետևէ էր:

Հ. Յունաց Անտիպատրոսի դէմ պատե-  
րազմը ի՞նչպէս եղաւ .

Պ. Լեւոսթենէս աթենացին Լամիայի  
քով յաղթեց Անտիպատրոսի:

Հ. Ան պատերազմը ի՞նչ ըսուեցաւ .

Պ. Լամիա քաղաքին անունով Լամիան  
պատերազմ ըսուեցաւ:

Հ. Լամիա ո՞ւր կ'իյնար .

Պ. Թեսսաղիոյ արևելեան հարաւային  
կողմը, Սպերքիոս գետին քով:

Հ. Լամիական պատերազմը ի՞նչ վերջ  
ունեցաւ .



Պ. Անտիպատրոս Կրանոն քաղաքին քով  
վրէժը առնելով Աթէնքի վրայ վազեց :

Հ. Կրանոն ո՛ւր կ'իյնայ .

Պ. Լարիսայի հարաւային արևելեան  
կողմը, Շանագլխոյ հիւսիսային դին :

Հ. Ի՞նչ սլայմաններով Աթենացիք Ան-  
տիպատրոսի հետ կրցան հաշտութիւն ընել :

Պ. Անտիպատրոս Աթէնքի մէջ սահա-  
սան զօրք դրաւ, սատերազմին ծախքը ա-  
ռաւ, և Դեմոսթենէսն 'ի մահ դատաւար-  
տեց :

Հ. Դեմոսթենէս ի՞նչպէս մեռաւ .

Պ. Կալաւրիա կղզւոյն մէջ թոյն առաւ  
մեռաւ :

Հ. Կալաւրիա կղզին ո՛ւր կ'իյնայ .

Պ. Արգոզիսի արևելեան կողմը՝ սարո-  
նեան ծովուն մէջ :

Հ. Փոկիոն ինչո՞ւ համար և ի՞նչպէս մե-  
ռաւ .

Պ. Երբոր Պողիսակերքոնի որդին Աղէք-  
սանդր Աթենացւոց տիրեց ու ռամկապե-  
տութիւն հաստատեց հոն, Փոկիոն մոլե-  
խինդ խմեց ու մեռաւ 318ին :

Հ. Կասանդր ի՞նչ տեսակ կառավարու-  
թիւն հաստատեց Աթէնքի մէջ և զո՞վ գլուխ  
դրաւ .



Պ. Կասանդր Աթէնքի մէջ ազնուապե-  
տութիւնն հաստատեց և Դեմետրիոս Փա-  
ղերացին անոր գլուխ դրաւ :

Հ. Դեմետրիոս Փաղերացին ինչպէս և  
որչափ ատեն կառավարեց Աթէնքը .

Պ. Դեմետր տասը տարի խաղաղութեամբ  
կառավարեց . անոր համար բնակիչքը երեք  
հարիւր վաթսուն արձան կանգնեցին իրեն,  
որ ետքը կործանեցին ալ :

Հ. Դեմետրիոս Փաղերացին ո՞վ աքսորեց .

Պ. Դեմետր Պաշարիչը զորն որ Աթէնա-  
ցիք հրապարակաւ Աստուծոյ պէս պաշտե-  
ցին :

Հ. Դեմետր Պաշարիչը ինչ տեսակ կա-  
ռավարութիւնն հաստատեց Աթէնքի մէջ .

Պ. Խամկապետութիւնն :

Հ. Աթէնացւոց ապերախտութեան և ան-  
հաստատուէ յայտնի օրինակ մը կրնան տալ .

Պ. Աթէնացիք Իպսոսի պատերազմէն  
ետքը ներս չառին Դեմետրը որուն քիչ մը  
առաջ Աստուծոյ և Փրկչի պատիւը առե-  
կին :

Հ. Դեմետր Պաշարիչ Աթէնքի միայն  
տիրեց .

Պ. Չէ . գրեթէ բոլոր Յունաստանի ալ  
տիրեց՝ բաց ՚ի Եպիրոսէն , Սպարտայէն ու  
Պելոպոննեսի քանի մը քաղաքներէն :



Հ. Անկէ վերջը Յունաստանի մէջ ի՞նչ կռիւնքեր եղան .

Պ. Անտիգոնոս Գոնատասին ու Պտղոմէոս Կերաւնոսին ըրած պատերազմները :

Հ. Նոյն ատենները ուրիշ ի՞նչ յարձակ մունք եղաւ Յունաստան .

Պ. Գաղղիացւոց յարձակումը . բայց յանկարծական վախովմը անոնք ալ շուտով ձգեցին փախան :

Հ. Անտիգոնի Թագաւորութեան ատեն ի՞նչ երևելի բան պատահեցաւ Յունաստանի մէջ .

Պ. Մակեդոնիոյ իշխանութիւնը ամենէն աւելի մեծցաւ :

Հ. Մակեդոնացւոց զօրութեանը դէմ ի՞նչ դաշնակցութիւններ եղան Յունաց մէջ .

Պ. Ետողացւոց և Աքայեցւոց դաշնակցութիւնները :

Հ. Ետողացւոց դաշնակիցքը ի՞նչ մարդիկ էին .

Պ. Լեռնցի կարիճ մարդիկ, որ մտքերնին դրեր էին բոլոր Յունաստանի տիրելու :

Հ. Աքայեցւոց դաշնակցութիւնը ի՞նչ պէս էր .

Պ. Աքայեցւոց դաշնակցութիւնը ռամկապետական էր, բայց իւրաքանչիւր քա-



ղաքներն ալ իրարու դաշնակից էին, և իրենց վախճանն էր Յունաստանը ազատել:

Հ. Աքայեցւոց դաշնակցութիւնը երբ նորոգուեցաւ.

Պ. 280ին ատենները:

Հ. Արատոսի վրայ ի՞նչ կը սլատմուի.

Պ. Արատոս Սիկիոնը ազատեց անոր բռնաւորին ձեռքէն. զօրավար դրուելով Վորրնիթոսն ալ ազատեց և ուրիշ շատ քաղաքներ Աքայեցւոց դաշնակցութեանը մէջ մտցուց: Աթէնքէն Մակեդոնացիքը վարնտեց. բայց Լակեդեմոնացւոց Վղէուսէն թագաւորէն յաղթուելով իշխանութիւնը թողուց Անտիգոնոս Դոսոնին:

Հ. Մակեդոնացւոց ո՞ր թագաւորին ժամանակը Ետողացիք Աքայեցւոց հետ միացան.

Պ. Դեմետր երկրորդին ժամանակը:

Հ. Ան դաշնակցութենէն Պեղոպոնեսի ո՞ր քաղաքը հեռու կեցաւ.

Պ. Սպարտա, որ ինքզինքը բարեկարգելու հետ էր:

Հ. Սպարտայի մէջ ի՞նչ նոր փոփոխութիւն եղաւ ան ատենները.

Պ. Վղէուսէն Լիգուրկոսի օրէնքները նորէն հաստատեց, Սպարտացիք ալ տիրապե-



տելու մտքով պատերազմ բացին Աբայե-  
ցւոց դէմ:

Հ. Սպարտացւոց ու Աբայեցւոց կռիւը  
ի՞նչ վերջ ունեցաւ .

Պ. Աբայեցիք շատ անգամ յաղթուելով  
մեծ խեղճութեան հասան:

Հ. Յոյնք ի՞նչ կերպով Մակեդոնացւոց  
իշխանութեան տակն ընկան .

Պ. Առջի բերանը ուղեցին հաշտութիւն  
ընել. Կղէոմէն հաւանած էր, բայց Արատոս  
դէմ կեցաւ. երբոր յաղթուեցաւ Կղէոմէն  
օգնութիւն կանչեց Անտիոքոս Դոսոն Մա-  
կեդոնացւոց թագաւորը, որ եկաւ տիրեց  
Սպարտայի, և Յունաստան Մակեդոնա-  
ցւոց ձեռքն անցաւ:

Հ. Մակեդոնացիք ի՞նչ յաղթութեամբ  
տիրեցին Սպարտայի և Յունաստանի .

Պ. Սելասիայի յաղթութեամբը 222ին:

Հ. Ետողեան դաշնակցութեան մէջ ան  
ատենը ի՞նչ դաւառներ մնացին .

Պ. Եղիս և Մեսսենիա:

Հ. Ի՞նչպէս եղաւ դաշնակցաց կռիւը, և  
Մակեդոնացւոց նորէն անոնց տիրելը, և  
Արատոսի մահը:

Պ. Սելասեան պատերազմէն վերջը Պե-  
ղոպոնեոսացիք իրենք զիրենք անհոգութեան  
տուին. Ետողացիք սկսան իրենց սահման



ներքը ընդարձակել. Արատոս ասոնց վրայ վազեց, բայց յաղթուեցաւ Վափիկէս քաղքին մօտ, ու անխոհեմութեամբ օղնութի կանչեց Մակեդոնացւոց Փիլիպպոս Գ. թագաւորը. յաղթեց Փիլիպպոս դաշնակցաց իրեք տարի պատերազմէն էտքը, զԱրատոսն ալ մեծ ապերախտութեամբ սպաննել տուաւ թունաւորելով ՉԱՅին Գրիատոսէ առաջ:

Հ. Աքայեան դաշնակցութիւնը նորէն ո՞վ նորոգեց.

Պ. Փիլոպեմեն, որ Յունաստանի վերջի քաջը կը սեպուի:

Հ. Փիլոպեմեն ի՞նչպէս մարդ էր.

Պ. Փիլոպեմեն Մեգաղուպօլսեցին չարքաշ գործունեայ ու ժուժկալ երիտասարդ մըն էր Եպամինոնդասին պէս, ու միշտ կը ջանար անոր նմանելու. զօրավարութեան արուեստին շատ հմուտ էր, ինքն ալ քաջ ու խոհեմ իր ամէն գործոցը մէջ:

Հ. Փիլոպեմենին յաղթութիւնները որո՞նք են.

Պ. Աքայեան դաշնակցութիւնը նորոգեց ու կարգաւորեց, և անոր գլուխ դրուեցաւ. յաղթեց ու սպաննեց Մանտի նէայի քով Մաքանիդաս Սպարտացւոց բռնաւորը որ կ'ուզէր Պեղոպոնեսին տիրել. էտքը յաղթեց նաև անոր Նաբիս յաջորդին ու ստացուածքը Սպարտացւոց բաժնեց:



Հ . Հռովմայեցիք ի՞նչ հնարքով վը-  
ճացուցին Փիլոպեմենի ուժը և քաջու-  
թիւնը .

Պ . Հռովմայեցիք յաղթելով Փիլիպպոսին՝ Շանագլուխ ըսուած տեղը, Կուինսոս Փլամինիոսին ձեռքովը հրատարակեցին որ Յունաստանի բոլոր քաղաքները անկախ ըլլան . ասանկով Յոյները բաժնեցին իրարմէ որ տկարանան, ինչպէս որ ալ եղաւ, և Յունաց ու Փիլոպեմենի քաջութիւնները չկրցան իրենց մէջի երկպառակութիւններուն դէմն առնել :

Հ . Փիլոպեմեն ի՞նչպէս մեռաւ .

Պ . Ութերորդ անգամ Աքայեցւոց իշխան ընտրուելէն ետքը Մեսսենացիք զինքը բռնեցին բանտ դրին, ու Հռովմայեցւոցմէ կաշառուած ըլլալով զինքը թունաւորելով մեռուցին եօթանասուն տարեկան եղած ատենը :

Հ . Փիլոպեմենին մահուանէն վերջը Մակեդոնիոյ մէջ ի՞նչ պատահեցաւ .

Պ . Փիլոպեմենին մահուանէն վերջը Աքայեան դաշնակցութիւնը կը ջանար որ Հռովմայեցւոց հետ չաւրուի, ան միջոցին Պերսէոս մակեդոնացւոց թագաւորը յաղթուեցաւ Հռովմայեցւոցմէ, ան ատենէն Հռովմայ Ծերակոյսը սկսաւ խստութեամբ վարուիլ, ու մէկօրուան մէջ Եպիւռոսի երկիրը եօթանասուն քաղաք աւերակ դարձուցին, և հարիւր յիսուն հազար հողի



գերի առին բնակիչներէն, թեասաղիան ալ  
գրեթէ նոյնպէս աւրըշարկեցին :

Հ. Աքայեան գաշնակիցները վերջապէս  
ի՞նչ պատերազմով յաղթուեցան .

Պ. Մետեղոս Յունաց գերիները ետ  
գարձուց Հռովմէն, բայց որովհետեւ անոնք  
չառ նեղուած տանջուած ու քիչցած էին  
երբոր գարձան գերութենէ, գրգռեցին  
ուրիշ Աքայեցիներն ալ Հռովմայեցւոց  
դէմ, բայց յաղթուեցան Մետեղոսէն  
Սկարփեայի քով, նոյնպէս ալ Մուամիոս  
հիւսպատոսէն Լեւկոպատրայի քով :

Հ. Լեւկոպատրայի յաղթութենէն ետ  
քը Աքայեցւոց ի՞նչ պատահեցաւ .

Պ. Մուամիոս Կորնթոսը աւարի մատ  
նեց, պատերազմէն փախած զինուորները  
ջարդեց, անոնց կանայքն ու տղաքը ծախեց,  
քաղաքը այրեց, սլարիսպները կործանեց,  
և ամէն բան քանդեց, ու միայն արձաններ  
սլատկերներ և ուրիշ ազնիւ բաներ Հռովմ  
ու Իտալիա տարաւ (146) :

Հ. Կորնթոսի առնուելէն վերջը Յու  
նաստան ի՞նչ եղաւ .

Պ. Հռովմայեցւոց գաւառներէն մէկը  
սեպուեցաւ, և անունը դրին գաւառ Ա  
քայեան :

Հ. Յոյնք աս թշուառութեանց հասնե  
լէն վերջը՝ ի՞նչ աղդեցութիւն ունեցան  
Հռովմայեցւոց վրայ .



Պ. Յոյնք իրենց զէնքով տիրողներուն վրայ հանձարով տիրեցին, որ աւելի փառաւոր յաղթութիւն է. և Յունաստան առջինին պէս դայեակ մնաց ամենայն գիտութեանց և գեղարուեստից, և կեդրոն ու կանոն ամէն կիրթ ախորժակի. բանաստեղծութիւն, բարոյական, ճարտասանութիւն ինքը սորվեցուց իր վրայ տիրողներուն:








ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Դ Տ Ա Յ Ի Ո Յ

ԵՒ

ԱՍՈՐԻՈՅ



Եփեպոստ և Ասորոց երկրին պատմութիւնը :  
— Ի պոստ պատերազմէն ինչո՞ւն աս երկրները  
բուն հռոմայեցոց յետո՞ւ անցնիլը :

Ե Գ Ի Դ Տ Ա Յ Ի Ք

Հ . Երկրորդ ժամը Ղազոսեանց թագաւորութիւնը ո՞վ հաստատեց .

Պ . Պողոտէոս Ա Սոտեր , Ղազոսի որդին :

Հ . Ինչո՞ւ համար Պողոտէոս Սոտեր կոչուեցաւ .

Պ . Հռոմացիք աս անունը տուին Պողոտէոսի՝ իրենց օգնելուն պատճառաւ Գեմարիոս Պաշարիչին դէմ , վասն զի Սփէրյունարէն իրիւրսեւ է :



Հ. Պաղոմէոս Սոսեր ո՛րչափ ժամանակ  
Թագաւորեց Աղեքսանդրի մեռնելէն վեր-  
ջը .

Պ. Քառասուն տարի :

Հ. Պաղոմէոս Սոսեր ի՛նչպէս զարդա-  
րեց իր տէրութիւնը .

Պ. Ուսումնասէր մարդ ըլլալով, Աղեք-  
սանդրիայի Թանգարանը ու մեծ գրքատու-  
նը մատենագարան մը շինեց . ասիկայ իր  
յաջորդաց ձեռքովը այնչափ զարդարուե-  
ցաւ որ ինչուան եօթըհարիւր հազար հա-  
տոր գիրք կար մէջը :

Հ. Աղեքսանդրիոյ գրատան առաջին վե-  
րատեսուչը ո՞վ եղաւ .

Պ. Իեմեարիոս Փաղերացին որ Ա Թեոքէն  
քուած էր հոն :

Հ. Պաղոմէոս Սոսերին ո՞վ յաջորդեց .

Պ. Իր որդին Պաղոմէոս Փիլադեղփոս :

Հ. Պաղոմէոս Փիլադեղփոսի երևելի  
գործքերը որո՞նք են .

Պ. Կիւրենէի ասպտամբները նուաճեց ,  
հաշտութիւն ըրաւ Անտիոքոս Թէոսի Ա  
սորոց Թագաւորին հետ . Բերինիկէ անու-  
նով քաղաքը հիմնեց . մեծ ջրանցք մը քա-  
նալ տուաւ որով Նեղոս գետը Կարմիր ծո-  
վուն հետ միացուց . և իրեն արքունիքը շատ  
խմաստուն մարդիկ ժողվեց :



Հ. Պատգամէս Բ ինչո՞ւ Փիլադելփոս ըսուեցաւ .

Պ. Փիլադելփոս եղբայրսներ ըսել է . աս երգիծական անուներ գրին իրեն՝ եղբարցմէ երկուքը սպաննելուն համար :

Հ. Ի՞նչ է Եօթանասնից Թարգմանութիւնը .

Պ. Եօթանասնից Թարգմանութիւն կ'ըսուի սուրբ գրքին ան յունական Թարգմանութիւնը որ ըրին Եօթանասունուերկու հելլենագէտ հրեայ բաբունիներ :

Հ. Պատգամէս Փիլադելփոսի սալատը եղող բանաստեղծները որո՞նք էին .

Պ. Կալ լիմաքոս , Լիկոփրոն , Թէոկրիտոս , և ուրիշ Եօթը մատենագիրներ :

Հ. Ան ատենները ո՞վ եղաւ երևելի երկրաչափ .

Պ. Եւկղիդէս , որուն գործքերը ինչուան հիմայ ալ յարգի են :

Հ. Յունաց գրականութիւնը Աղեքսանդրիա փոխադրուելով ի՞նչ վիճակ ունեցաւ .

Պ. Յունաց գրականութիւնը Աղեքսանդրիա փոխադրուելով տեղացւոց օգուտ մը չըրաւ , Թէպէտ և Թագաւորները կը ջանային ծաղկեցնելու , բայց երևելի գործք մը չեղաւ , եղածն ալ բոլոր հիներուն հետևութիւն էր :



Հ. Փիլիսոփայութիւնը սրճափ ծաղկե-  
ցաւ Աղեքսանդրիոյ մէջ .

Պ. Փիլիսոփայութիւնը ուրիշ գիտու-  
թիւններէն աւելի յառաջադիմութիւն ու-  
նեցաւ, և Աղեքսանդրիոյ դպրոցներէն ե-  
րևելի փիլիսոփաներ, ետքէն ալ քաջ աս-  
տուածաբաններ ելան :

Հ. Պաղոմէոս Փիլադելփոսի յաջորդը  
ով եղաւ .

Պ. Պաղոմէոս Գ, Եւերգետէս ( Բարե-  
րար ) :

Հ. Պաղոմէոս Եւերգետէս գրականու-  
թեան ի՞նչ նպաստներ ըրաւ .

Պ. Կ'ըսեն թէ տասուիրէք տաղանդ  
տուաւ որ Եսքիղեսի, Սոփոկղի ու Եւրի-  
պիդեսի գործքերը եգիպտացերէն թարգ-  
մանուին :

Հ. Պաղոմէոս Եւերգետեսի յաջորդները  
ընդհանրապէս ի՞նչպէս մարդիկ եղան .

Պ. Ընդհանրապէս անկարգ ու անդուժ  
մարդիկ եղան :

Հ. Պաղոմէոս չորրորդին վրայ ի՞նչ գիտ-  
նալիք կայ .

Պ. Մեծին Անտիոքոսի դէմ պատերազմ  
բացաւ, ու ձեռքէն առաւ Ստորին Աստ-  
րիքը ու Պաղեստինը : Մեռցրնել տուաւ իր  
Բերինիկէ մայրը ու Մադոն եղբայրը ու իր  
Արսինոյէ կինը :



Հ. Պատղոմէոս չորրորդին ոմ յաջորդեց .

Պ. Պատղոմէոս Ե Եպիփան' 205ին : Քանի որ պղտիկ էր՝ տէրութիւնը իր խնամակալները կը կառավարէին , Ագաթոկոյ, Նէոպատղոմէոս ու ետքը Արիատոմեն : Ան միջոցին Փիլիպպոս Մակեդոնացին ու Անտիոքոս վազէցին Ստորին Ասորիքը առնելու , բայց վերջը խաղաղութիւն ըրին : Պատղոմէոս երբոր քիչ մը մեծցաւ , ինքզինքը զեղխութեան տուաւ . ու խիստ անգութ ըլլալուն շատերը իրմէ ապստամբեցան , ու վերջապէս իր պաշտօնաատէրներէն թունաւորուելով մեռաւ 180ին :

Հ. Պատղոմէոս հինգերորդին ոմ յաջորդեց .

Պ. Պատղոմէոս Զ, Փիլոմետոր (Մայրասէր) . բայց տէրութեան կառավարութիւնը իր մօրը Աղէոսպատրային ձեռքն էր , վերջը անցաւ երկու ներքինիներու ձեռքը՝ Հռովմայեցւոց պաշտպանութիւնը տակ : Անտիոքոս Եպիփան իր հօրեղբայրը Եգիպտոսին տիրեց , բայց Հռովմայեցիք ստիպեցին զինքը իր երկիրը դառնալու :

Հ. Պատղոմէոս վեցերորդին ոմ յաջորդեց .

Պ. Իր եղբայրը Պատղոմէոս Է, Փիսկոն 145ին . քիչ մը ատեն եղբօրը հետ թագաւորելէն վերջը սպաննել տուաւ եղբօրը որդին , ինքը առանձին թագաւորեց , և կին առաւ Աղէոսպատրան իր եղբօրը կինը : Ան



դթութեամբն ու զեղխութեամբը ամենուն  
ատելի եղաւ, բայց ինքն ալ վախնալով ժո-  
ղովրդեան տհաճութենէն՝ փախաւ Վիպրոս  
կղզին (133)։ Սպաննել տուաւ նաև Վղէո-  
պատրայէն ունեցած որդին, կարծելով թէ  
Եգիպտոսի մէջ խռովութիւն ձգողը Վղէո-  
պատրան է, ու տղուն մարմինը կտոր կտոր  
ընելով մօրը զրկեց։ Աւերջասէս ինքը նս-  
րէն դարձաւ իր անթուր օտար ազգերու օգ-  
նութեամբը, ու մեռաւ 116ին։

Հ. Պտղոմէոս Եւպատոր որչափ ատեն  
թագաւորեց .

Պ. Խիսա քիչ. վասն զի Փիսկոն զինքը  
սպաննեց։

Հ. Պտղոմէոս Ը Լաթիրոս ինչպէս թա-  
գաւորեց .

Պ. Տասր տարի թագաւորելէն վերջը, իր  
Վղէոպատրա մօրմէն հալածուելով ինքը  
Վիպրոս կղզին քաշուեցաւ. յաղթեց իր Ա-  
ղեքսանդր եղբօրը որ Պտղոմէոս թ կը կո-  
չուէր, ու ետքը թեբէ քաղաքը կործանեց  
որ իրեն դէմ կեցեր էր։

Հ. Ո՞վ էր Պտղոմէոս թ, և ինչպէս թա-  
գաւորեց ու մեռաւ .

Պ. Ասիկայ Պտղոմէոս եօթներորդին ու  
Վղէոպատրայի որդին էր. Եգիպտոսին տի-  
րեց ան միջոցին որ Պտղոմէոս եղբայրը Վի-  
պրոս էր. նաւական պատերազմի մը մէջ մե-  
ռաւ որ Լաթիրոս բացեր էր իրեն դէմ 83ին։



Հ . Ո՞վ եղաւ Ղազոսեանց ցեղէն վերջին օրինաւոր թագաւորը .

Պ . Պտղոմէոս Ժ Լաթիրոսի եղբօրորդին , բայց մէկ տարի մը միայն թագաւորեց (80) :

Հ . Ղազոսեանց ցեղէն քանի՞ օրինաւոր թագաւորներ եղան , ու որչափ ժամանակ թագաւորեցին Եգիպտոս .

Պ . Ղազոսեանց ցեղէն տասը թագաւոր կը համրուին , որ թագաւորեցին 323էն ինչուան 80 :

Հ . Ո՞վ եղաւ Ղազոսեանց ցեղէն ասորինաւոր թագաւորը .

Պ . Պտղոմէոս ԺԱ Աւլետ , որ Լաթիրոսի ասորինաւոր որդին էր :

Հ . Ի՞նչ արդեւքներ եղան Պտղոմէոս Աւլետին թագաւորելուն .

Պ . Հռովմայեցիք չուզեցին ղինքը թագաւոր ճանչնալ , որովհետեւ Պտղոմէոս տասներորդին անունովը սուտ կամ իրաւ կտակ մը կար՝ որ Հռովմայեցւոց կը թողուր իր թագաւորութիւնը :

Հ . Պտղոմէոս Աւլետին որդեքն ո՞վ էին , ու ո՞վ եղաւ անոնց խնամակալ .

Պ . Պտղոմէոս Աւլետին որդեքն էին Պրաղոմէոս ԺԲ ու ԺԳ , և անոնց խնամակալ եղան Կղէոսպատրա ու Պոմպէոս :



Հ. Աս երկու Պտղոմէոսներէն ո՞րը եղաւ  
որ սպաննել տուաւ զՊոմպէոս .

Պ. Պտղոմէոս յԲ :

Հ. Ի՞նչպէս մեռաւ Պտղոմէոս յԲ .

Պ. Կեսարու դէմ բացած սլատերազմին  
ատենը՝ Նեղոս գետին մէջ ընկաւ խեղդուե-  
ցաւ (48) :

Հ. Կղէոպատրա որո՞նք կինն էր ու Պրտ-  
ղոմէոս յԳ ի՞նչպէս մեռաւ .

Պ. Կղէոպատրա կինն եղաւ յԲ ու յԳ  
Պտղոմէոսներուն , բայց աս վերջինը թու-  
նաւորեց Կղէոպատրա որ ինքը մինակ թա-  
գաւորէ Կեսարու մահուան տարին :

Հ. Հռովմայեցիք ինչո՞ւ համար Եգիպ-  
տոս զօրք զրկեցին .

Պ. Երբոր լսեցին որ Անտոնիոս Կղէո-  
պատրային հետ կարգուեր է , սաստիկ բար-  
կացան , կարծելով թէ կ'ուզէ Հռովմայ ալ  
տիրել . ուստի զօրք զրկեցին վրանին , զորա-  
գլուխ գնելով հոկտաւիոսը :

Հ. Կղէոպատրա ի՞նչ ըրաւ Ակաիոնի  
սլատերազմին ատենը .

Պ. Ակաիոնի սլատերազմին մէջ Կղէոպա-  
տրա Անտոնիոսը մատնեց՝ որ խեղճու-  
թեամբ մեռաւ :

Հ. Կղէոպատրա ի՞նչպէս մեռաւ .



Պ . Ինքը զինքը իժի մը խածնէլ տուառ ու  
անանկով մեռաւ :

Հ . Աղէտաարայի մահուրնէն վերջը Ե-  
գիստոս ի՛նչ եղաւ .

Պ . Հռովմայեցւոց իշխանութեան տակը  
ընկաւ, Ղազոսեանց ցեղն ալ վերցուեցաւ :

Հ . Եգիստոս երբոր Հռովմայեցւոց տակ  
ընկաւ, ուամուշքներն ու արևելեան վա-  
ճառականութիւնը ի՛նչ վիճակ ունեցան .

Պ . Միշտ ծաղկած մնացին, Աղէքսան-  
դրիան ալ արևելեան վաճառականութեան  
կեդրոնը կը սեպուէր :

## Ա Ս Ո Ր Ի Ք

Հ . Սելեւկեանց թուականը երբ կը սկսի  
ու ի՛նչ պատճառով դրուեցաւ .

Պ . Սելեւկեանց թուականը 311ին կը  
սկսի . վասն զի ան ատեն Սելեւկոս Ա Նի-  
կատովը Բաբելոնի տիրեց :

Հ . Ասորւոց իշխանութեան բուն սկիզբը  
որ ատենէն է .

Պ . Քրիստոսէ 301 տարի առաջ՝ Իպսոսի  
պատերազմէն ետքը կը սկսի :

Հ . Սելեւկեանց մայրաքաղաքը որն է,  
ու ո՞վ շինեց .



Պ. Սեչեւկեանց մայրաքաղաքը Արոնա  
գետին վրայ շինուած էր ու Անտիոք կը  
սուէր. հիմնադիրն եղաւ Սեչեւկոս:

Հ. Սեչեւկոս ի՞նչ յաջողութիւններ ու  
նեցաւ ու ի՞նչպէս մեռաւ.

Պ. Դեմետր Պաշարիչը բռնեց, Վիւսի  
մաքոսը յաղթեց ու բռնեց Փոխւգիոյ մէջ,  
առաւ Թրակիան ու Մակեդոնիան, եօթը  
ամիս Փոքր Ասիոյ վրայ թագաւորեց. ու  
279ին Պտղոմէոս Կերաւնոսէն սպաննուե-  
ցաւ:

Հ. Սեչեւկոսի ո՞վ յաջորդեց.

Պ. Անտիոքոս Ա Սոտեր:

Հ. Անտիոքոս Սոտերի ատեն Սեչեւ-  
կեանց թագաւորութենէն ո՞ր գաւառները  
դուրս քաշեցին.

Պ. Փոխւգիա, Հելլեսպոնտոս և Բիւ-  
թանիա:

Հ. Անտիոքոս առաջինին ո՞վ յաջորդեց.

Պ. Անտիոքոս Բ Թէոս, որ Աստուած  
ըսել է:

Հ. Անտիոքոս Թէոսի ատեն ի՞նչ թագա-  
ւորութիւններ հաստատուեցան անոր դէմ.

Պ. Արշակայ ձեռքով Պարթևաց տէրու-  
թիւնը ելաւ, ու Թէոդոտափ ձեռքով Բակ-  
տրիացւոց թագաւորութիւնը հաստատուե-  
ցաւ (255):



Հ. Ի՞նչպէս մեռաւ Անտիոքոս Թէոս .

Պ. Անտիոքոս իր Նաւորիկէ կինը արձը-  
կեր էր, անիկայ ալ ոխ սրահելով զԹագա-  
ւորը Թունաւորեց :

Հ. Անտիոքոս Թէոսի ո՞վ եղաւ յաջորդ  
ու ո՞րչափ ատեն Թագաւորեց .

Պ. Անտիոքոս Թէոսի յաջորդեց Սելեւ-  
կոս Բ Վալինիկոս, ու տասներինը տարի  
Թշուառութեամբ Թագաւորեց :

Հ. Սելեւկոս Վալինիկոսի ո՞վ յաջորդեց  
ու քանի՞ տարի Թագաւորեց .

Պ. Վալինիկոսի յաջորդեց Սելեւկոս Աե-  
րաւնոս, ու 225էն ինչուան 222 Թագաւո-  
րեց :

Հ. Սելեւկոս Աերաւնոսի յաջորդն ո՞վ  
եղաւ ու ի՞նչ ըրաւ .

Պ. Անտիոքոս Մեծն, որ Պարթևաց տէ-  
րութիւնը ամփոփել տուաւ Պարթևաստան  
ու Արկան ըսուած երկիրները . Բակարիա-  
ցւոց ալ յաղթեց, ու Սելեւկեանց իշխանու-  
թիւր նորէն ինչուան Յնդոս գետը տարածեց :

Հ. Անտիոքոս Եգիպտացւոց դէմ ի՞նչ  
ըրաւ, ու ի՞նչպէս Հռովմայեցւոց հետ սա-  
տերազմեցաւ .

Պ. Ուղեց Պտղոմէոս Եպիփանը իշխանու-  
թենէն վար ձգել . բայց Հռովմայեցիք մէջ  
մտնելով հարկ եղաւ որ զէնքը անոնց դէմ  
դարձրնէ :



Հ . Աննիբաղայ հետ ի՞նչ վերաբերու-  
թիւն ունեցաւ Մեծն Անտիոքոս .

Պ . Իր սալատը առաւ զԱննիբաղ ու կէս  
մը անոր խորհրդոցը հետևելով՝ կարծեց թէ  
Հռովմայեցւոց դէմ կրնայ սլատերազմիլ,  
բայց չյաջողեցաւ :

Հ . Անտիոքոս ո՞ւր տեղ և ո՞ր Հռովմայեցի  
ըօրավարներէն յաղթուեցաւ .

Պ . Թերմոպիլէի մէջ Ակեղիոս Գլաբրիոն  
ու Մագնեսիայի քով Լուկիոս Սկիպիոն  
զարկին Անտիոքոսի զօրքը :

Հ . Անտիոքոս ի՞նչ սլայմաններով Հռով-  
մայեցւոց հետ հաշտութիւն ըրաւ .

Պ . Բոլոր Փոքր Ասիան ինչուան Տօրոս  
լեւը Հռովմայեցւոց ձգեց, ու սլատերազմին  
ծախքը վճարելով՝ տարին երկու հազար  
տաղանդ հարկ տալ խոստացաւ :

Հ . Անտիոքոս խոստացած հարկին տա-  
կը ի՞նչպէս վճարեց .

Պ . Եղիմայիս քաղաքին մէջ Բէլայ տա-  
ճարը եղած հարստութիւնները կողոստե-  
լով :

Հ . Մեծն Անտիոքոս ի՞նչպէս մեռաւ .

Պ . Եղիմացիք Անտիոքոսի ըրած սեղա-  
նակաստութեանը վրայ բարկացած՝ սպան-  
նեցին զինքը :

Հ . Մեծին Անտիոքոսի ո՞վ յաջորդեց .



ի՞նչ չարիք ըրաւ, ու ո՞վ էր իր հազարապետը .

Պ . Անտիոքոսի յաջորդեց Սեւեւկոս Դ որ իր հօրը նմանելով՝ Հեղիոգորոս իշխանին ձեռքովը Երուսաղեմի սաճարը կողոստել ուղեց . Հեղիոգորոսի սլաաթուխը սուրբ գրոց սլաամութե՛նէն յայտնի է : Հեղիոգորոս իր տէրը սպաննեց, ու տեղը ինքը նստաւ (174) :

Հ . Հեղիոգորոս ի՞նչպէս կորարնցուց իշխանութիւնը .

Պ . Սեւեւկոսի որդին Անտիոքոս Դ Եպիփան վարնտեց զինքը :

Հ . Անտիոքոս Եպիփան ո՞ր թագաւորութիւնը յափշտակեց .

Պ . Եպիփան Պտղոմէոս Փիլոմեատրէն Եգիպտոսի թագաւորութիւնը յափշտակեց :

Հ . Որո՞ւն միջնորդութեամբը Եգիպտոսի թագաւորութիւնը նորէն Պտղոմէոս Փիլոմեատրին անցաւ .

Պ . Հռովմայեցւոց Պոպիլիոս դեսպանին միջնորդութեամբը :

Հ . Անտիոքոս Եպիփան ի՞նչ հալածանք հանեց .

Պ . Անտիոքոս բոլոր բարկութիւնը իր հպատակաց ու հարկատու ազգաց վրայ թափեց : Հպատակները նեղը խոթեց որ Յունաց ու Զրադաշտի կրօնքը թողուն . իր



Հարկատու Հրեաներն ալ ստիպեց որ Մովսիսական կրօնքէն ետ կենան :

Հ . Հրեից ազգին քաջ պաշտպանը որոնք եղան .

Պ . Մակաբայեցիք :

Հ . Անտիոքոս ինչպէս մեռաւ , և իրեն ով յաջորդեց .

Պ . Անտիոքոս մեռաւ՝ Աստուծոյ պատժուելով , և իրեն յաջորդեց Անտիոքոս Ե եւ պատոր կամ Հորամոյն :

Հ . Անտիոքոս հինգերորդին վրայ ինչ կը պատմուի .

Պ . Իրեք տարի թագաւորեց խռովութեան մէջ , ու սպաննուեցաւ իր Դեմետրիոս հորեղբորէն :

Հ . Դեմետրիոսի ձեռքէն իշխանութիւնը ով առաւ .

Պ . Աղէքսանդր Բաղա , որ սպաննեց զինքը ու հինգ տարի թագաւորեց 149էն ինչուան 144 :

Հ . Աղէքսանդր Բաղային ով յաջորդեց .

Պ . Դեմետրիոս Բ Նիկատոր , ետքը Անտիոքոս Զ , Անտիոքոս Է , անգութն Աղէոպատրա և իր որդիքը :

Հ . Ասորւոց երկիրը երբ Հռովմայեցոց իշխանութեանը տակ ընկաւ .

Պ . 64ին :





## Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

# Մ Ա Ն Ե Ր Տ Լ Ի Ր Ո Ւ Թ Ե Լ Ն Յ

## Ը Ս Ի Ո Յ

Պարտից ու Մաիեդոնացոց փերո-թիւններուն  
կործանելէն վերջը՝ Ասիոյ մէջ եւած երկուրդական  
ճանր Բագասորո-թիւններ :

Հ . Պ Ա Ր Ս Ի Յ ու Մաիեդոնացոց տէրու-  
թիւններուն կործանելէն վերջը ինչ թա-  
գաւորութիւններ ելան Ասիոյ մէջ .

Պ . Բակարիացիք , Պարթևք , Պերդա-  
մացիք , Պոնտացիք , Վասպադուկացիք , Պափ-  
ղադոնացիք , Բիւթանացիք և Հրեայք :

Հ . Ո՛վ ու երբ հիմնեց Բակարիացոց տէ-  
րութիւնը .

Պ . Թէոդոտ , որ հիմնեց աս տէրութիւնը  
255ին :



Հ . Ո՛րչափ ասեն տեկց աս տէրութիւնը .  
Պ . 255էն ինչուան 141 :

Հ . Թէողոս երկրորդին վրայ ի՞նչ կայ  
գիտնալիք .

Պ . Իր թագաւորութիւնը ձեռքէն առաւ  
Եւթիղեմոս Մագնիսացին 220ին :

Հ . Եւթիղեմոսին ո՞վ յաջորդեց .

Պ . Իր որդին , բայց անոր ձեռքէն ալ  
թագաւորութիւնը առաւ Մենանդր որ  
Հնդկաց թագաւորներէն մէկն էր (190) :

Հ . Ի՞նչպէս վերցուեցաւ Բակորիոյ թա-  
գաւորութիւնը .

Պ . Պարթևք առին Բակորիան ու իրենց  
տէրութեանը հետ միացուցին 141ին :

Հ . Ի՞նչ կերպով ու էրբ սկսաւ Պար-  
թևաց թագաւորութիւնը .

Պ . Պարթևաց թագաւորութիւնը սկսաւ  
255ին Արշակէն , որ Անտիոքոս երկրորդէն  
գլուխ քաշեր էին :

Հ . Պարթևաց թագաւորներուն ընդհա-  
նուր ի՞նչ անուն կուտան Յոյնք ու Հռով-  
մայեցիք .

Պ . Արշակ անունը :

Հ . Պարթևաց երկիրն ու տէրութիւնը ՚ի  
սկզբան որչափ էր , ու ետքը ինչուան ո՞ւր  
տարածեցաւ .



Պ. Ի սկզբանս պզտիկ դաւառ մըն էր  
Կասպից ծովուն արևելեան հարաւային  
կողմը, բայց վերջը տարածուեցաւ արև-  
մուտքէն ինչուան Եփրատ գետը, արևելքէն  
ինչուան Հնդկաստան, ու հարաւէն ինչուան  
Պարսից ծոցը:

Հ. Պարթևաց տէրութեան մեծ պար-  
ծանքը ո՞րն է.

Պ. Իրենց մեծ պարծանք է որ ամէն թըշ-  
նամեաց դէմ չկեցան, ու նաև Հռովմայե-  
ցւոց ալ:

Հ. Պարթևաց Հռովմայեցւոց հետ ըրած  
պատերազմներուն վրայ ի՞նչ կայ գիտնա-  
լու.

Պ. Մէկ պատերազմին մէջ Կրասոս ընկաւ  
մեռաւ ՏՏին: Փիլիպպեան պատերազմէն  
ետքը Բակուր իրենց թագաւորներէն մէկը՝  
վազեց առաւ Ասորոց երկիրը, Հրէաստան,  
Կիլիկիա ու Կարիա: Ա՛նտիգիոս՝ Անտո-  
նիոսի անդակալը իրէք անգամ զարնուեցաւ  
անոր հետ ու երրորդին սպաննեց զԲակուր.  
Լաբիենոսն ալ բռնեց որ Բրուտոսի կու-  
սակիցն ըլլալով՝ Բակուրը գրգռեր էր Հռով-  
մայեցւոց դէմ:

Հ. Պարթևաց Արշակունի ցեղէն քանի  
թագաւոր եղաւ.

Պ. Երեսունի չափ կը համրուի:

Հ. Պարթևաց թագաւորութիւնը ի՞նչպէս



վերջացաւ, ու Արշակունեաց ցեղէն ետքը  
որ ցեղը յաջորդեց .

Պ . Պարթևաց տէրութիւնը Պարսից ձեռ-  
քըն անցաւ, Արշակունեաց տեղն ալ Սա-  
սանեանք տիրեցին 229ին Քրիստոսէ ետքը :

Հ . Պերգամացւոց տէրութիւնը երբ հաս-  
տատուեցաւ .

Պ . Քրիստոսէ առաջ 283ին կանգնեց աս-  
թագաւորութիւնը Փիլետեր՝ նոյն դաւա-  
ռին կուսակալը :

Հ . Պերգամացիք քանի՞ թագաւոր ունե-  
ցան ու որչափ տևեց թագաւորութիւննին .

Պ . Եօթը թագաւոր ունեցան, ու տևեց  
285էն ինչուան 129 :

Հ . Փիլետերի յաջորդներէն ո՞վ եղաւ  
առաջին թագաւորի անուն առնողը .

Պ . Ատտաղոս Ա, որ մեծցաւ ու հարըստ-  
ցաւ Գաղատիոյ ալ տիրելով :

Հ . Պերգամացւոց որ թագաւորը բարե-  
կամութիւն ցցուց Հռովմայեցւոց .

Պ . Եւմենէս Բ :

Հ . Ի՞նչ վարձատրութիւն ըրաւ Հռովմ  
Եւմենէսին .

Պ . Մեծին Անտիոքոսի Ասորւոց թագա-  
ւորին ան երկիրները որ Տօրոսէն ասդիս-  
էին՝ իրեն տուաւ :



Հ . Եւմենէս երկրորդին ոմ յաջորդեց .

Պ . Ատտաղոս Բ . որուն հարստութիւնը առակ եղած էր :

Հ . Ի՞նչ յանցանքով թագաւորեց Ատտաղոս Գ .

Պ . Թունաւորելով իր հօրեղբայրը , ինքը անցաւ անոր տեղը :

Հ . Ատտաղոս Գ , իր թագաւորութիւնը որո՞ւ թողուց մեռնելու ատենը .

Պ . Հռովմայեցւոց :

Հ . Ատտաղոսի կտակին վրայ ի՞նչ վէճ ելաւ .

Պ . Արիստոնիկոս Եւմենէսին ապօրինաւոր որդին ուզեց բռնութեամբ ձեռք ձգել ժառանգութիւնը , բայց պատերազմի մէջ մեռաւ :

Հ . Պերգամային անուանի թանգարանը ու հարուստ գրքատունը ի՞նչ եղան .

Պ . Թանգարանին բաները ցրուեցան , գրքատունն ալ Անտոնիոս Աղեքսանդրիա փոխադրեց :

Հ . Պոնտոսի թագաւորներուն սկիզբը ուսկի՞ց էր .

Պ . Կը կարծուէր թէ հին Պարսից թագաւորներուն ցեղէն էին :

Հ . Պոնտոսի տէրութեան մէջ ո՞րչափ



Թագաւոր կը համբուի Մեծն Միհրդատէն առաջ .

Պ . Վէց Թագաւոր Միհրդատէն առաջ :

Հ . Մեծին Միհրդատայ վրայինն էրեւելի բան կը պատմուի .

Պ . Մեծն Միհրդատ , որ մեր Տիգրան Բ Թագաւորին քեռայրն էր , շատ անուանի է՝ մանաւանդ Հռովմայեցւոց դէմ ունեցած ատելութեամբը , որովհետեւ Փոլեգիան իր ձեռքէն առեր էին , ու չէին թողուր որ Պափղազոնիոյ ու Վապագուկիոյ տիրէ : Միհրդատ Տիգրանայ օգնութեամբը վազեց Փոքր Ասիոյ տիրեց , ինչուան Յունաստան ալ մտաւ . զարնուեցաւ Սիղլային հետ , ու յաղթուելով հաշտութիւն ըրաւ , բայց քիչ ատենէն նորէն պատերազմ բացաւ որ երկու տարի քշեց : Երբոր Բիւթանիոյ Թագաւորը մեռաւ ու ան երկիրն ալ Հռովմայեցւոց ընկաւ , Միհրդատ երրորդ անգամ պատերազմ բացաւ , Ղուկուղղոս ու Պոմպէոս զօրավարներուն հետ զարնուելով յաղթեց ու յաղթուեցաւ . երբոր կը պատրաստուէր ինչուան Հռովմայ վրայ վազելու իր որդին Փառնակ մատնեց զինքը Հռովմայեցւոց . Միհրդատ երբոր իմացաւ ինքզինքը սպաննեց՝ թոյն առնելով :

Հ . Փառնակ իր մատնութեանը ինչ փոխարէն ընդունեցաւ Հռովմայեցւոցմէ .

Պ . Պոմպէոս իրեն տուաւ Վիմերեան



Վստփորը ուր առաջ իր հօրը տեղը կուսա-  
կալ էր:

Հ. Փառնակ ուսկից յաղթուեցաւ, ու  
Պոնաոս ի՛նչ եղաւ.

Պ. Փառնակ կեսարէն յաղթուեցաւ  
47ին, ու Պոնաոս Հռովմայեցւոց գաւառ-  
ներէն մէկը սեպուեցաւ:

Հ. Կապադովկիան էրք առանձին տէ-  
րութիւն եղաւ.

Պ. Աղէքսանդրի մեռնելէն վերջը 320ին:

Հ. Կապադովկացւոց թագաւորներուն  
սովորական անունը ի՛նչ էր.

Պ. Արիարաթ:

Հ. Ի՛նչպէս մեռաւ Արիարաթ Ե, ու  
իրմէ առաջ քանի՞ թագաւոր եղան.

Պ. Մեծն Միհրդատ զինքը սպաննեց,  
իրմէ առաջ եօթը թագաւորք նստեր էին:

Հ. Արիարաթ Ե, մեռնելէն վերջը՝ քանի՞  
թագաւոր ունեցան Կապադովկացիք.

Պ. Տասը:

Հ. Ո՞ր տարին ու ի՛նչպէս Կապադով-  
կիան Հռովմայեցւոց տէրուէ մասն եղաւ.

Պ. Տասնուեօթին Քրիստոսէ ետքը, եր-  
բոր Արքեղայոս որ Արիարաթին յաջորդն  
էր, Տիբեր կայսեր աչքէն իյնալով Հռովմ  
աարուեցաւ ու հոն բանախ մէջ մեռաւ:



Հ. Բիւթանիոյ տէրութիւնը երբ սկսաւ .

Պ. Աղեքսանդրի արշաւանաց ատենը :

Հ. Բիւթանիան ո՞ւր կ'իյնայ , ու գլխաւոր քաղաքները որո՞նք էին .

Պ. Ծովեզերեայ երկիր է՝ Առափորոս Թրակիոյ ըսուած երկրին մօտ , ու գլխաւոր քաղաքներն էին Նիկոմիդիա , Պրուսա , Հերակլիա , և այլն :

Հ. Բիւթանացւոց թագաւորներէն որո՞նք եղան անուանի .

Պ. Նիկոմիդէս Ա , Պրուսիաս , Նիկոմիդէս Բ , Նիկոմիդէս Գ :

Հ. Բիւթանացւոց ո՞ր թագաւորը յանձն առաւ Աննիբաղը Հռովմայեցւոց մասնելու .

Պ. Պրուսիաս , 237ին :

Հ. Ի՞նչ գիտելիք կայ Նիկոմիդէս երկրորդին ու Նիկոմիդէս երրորդին վրայ .

Պ. Նիկոմիդէս Բ . որ իր Պրուսիաս հայրը սպաններ էր , Հռովմայեցւոցմէ օգնութիւն առաւ Միհրդատայ դէմ . իսկ Նիկոմիդէս Գ , որ Միհրդատայ ձեռքովը իշխանութենէն ձգուած էր՝ Սիդղայի ձեռքովը նորէն թագաւորութիւնը ձեռք բերաւ , ու ետքը Հռովմայեցւոց թողուց 75ին :

Հ. Պափղագոնացիք ո՞ր ատեն սկսան առանձին թագաւոր ունենալ .

Պ. Քրիստոսէ առաջ 199էն ինչուան 121 :



Հ. Պափղագոնիան 121ին ինչ եղաւ .


Պ. Փիլեմէնէս Բ, Մեծին Միհրդատայ  
հօրը յանձնեց իր թագաւորութիւնը :

Հ. Ո՞ր թագաւորները Պափղագոնիոյ  
համար սրասերազմեցան .

Պ. Պոնտոսի ու Բիւթանացւոց թագաւորները :

Հ. Պափղագոնիան երբ հռովմայեցւոց  
տակ ընկաւ .

Պ. Քրիստոսէ առաջ 63ին :



### Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

Յունաց կրօնը, հանդէսները, խաչերը և  
գրական-իւր-նը :

Հ. Նոն ատենի Յունաց կրօնն ինչ էր .

Պ. Բազմաստուածութիւն :

Հ. Յունաց աստուածները քանի՞ հաս  
էին .

Պ. Յունաց պաշտած աստուածները  
դրեթէ անթիւ էին . ասոնք իրեք դաս կըր-  
նան բաժնուիլ . երկնաբնակք, երկրա-  
բնակք և սանդարամետականք կամ դժոխա-  
բնակք :



Հ. Յուճնաց գլխաւոր աստուածները քանի՞ հաստ են .

Պ. Տասուերկու, ու ասոնք են . Արամազդ, Պոսիգոն, Աստուղոն, Դեմեարէ, Աթենաս, Հեփեստոս, Հերա, Արէս, Հերմէս, Արտեմիս կամ Անահիտ, Ափրոդիտէ կամ Աստղիկ, Եստա :

Հ. Աս գլխաւոր աստուածներէն զատ ուրիշ ի՞նչ աստուածներ ունէին Յոյները .

Պ. Յոյնք երկրորդական աստուածներ ալ ունէին . անոնցմէ զատ նաև դիւցազունք՝ որ կ'սասարած կ'ըսուէին :

Հ. Յուճնաց կրօնական հանդէսներուն գլխաւորները որո՞նք էին .

Պ. Յուճնաց կրօնական հանդէսները խիստ շատ էին . գլխաւորները ասոնք են, ՀամաԲենախանք, Դեմոփոբեանք, Դիոնիսեանք, Ափրոդիտեանք, Արտեմիսեանք, Հերայեանք և այլն :

Հ. Յուճնաց երևելի խաղերը որո՞նք էին .

Պ. Յոյնք հանդիսաւոր չորս խաղ ունէին . Ողիմպիական խաղեր, Պիթեան խաղեր, Կեմեան խաղեր և Իսթմեան խաղեր :

Հ. Յուճնաստանի մէջ գիտութիւնները, արուեստները, գրականութիւնը ո՞ր աստն աւելի ծաղկեցան .

Պ. Աղեքսանդրի աշխարհակալութեանը նախընթաց երկու դարերուն մէջ :



Հ. Յունաստանի երևելի բանաստեղծները որո՞նք են .

Պ. Հոմերոս՝ որ անուանի է իրեն Իզիա-  
կան ու Ոգիսական բանաստեղծութեանցը  
համար : — Եսիոգոս որ ունի Տիւք և գործք  
անուանով գրուածք մը , Ծննդաբանութիւն  
աստուածոց , ու Հերակղէսի վահանին ստու-  
րագրութիւնը : — Տիրտէոս աթենացի՝ իր  
պատերազմական երգերուն պատճառաւը  
անուանի . Արքիղոքոս սամոսացի , Ալէոս ,  
Սափսիով , Պինդարոս , Անակրէոն , քնարեր-  
գակ բանաստեղծներ : — Եսքիլոս՝ հայր  
յունական ողբերգութեանց . Սոփոկղ , Եւ-  
րիպիդէս՝ ողբերգակ բանաստեղծներ : —  
Արիստոփան , Մենանդր՝ կատակերգակ : —  
Թէսկրիտոս , Մոսքոս և Բիոն՝ հովուերգակ :

Հ. Յունաց երևելի ճարտասանները ո-  
րո՞նք են .

Պ. Սոկրատ , Եսքիլոս , Դեմոսթենէս .  
քրիստոնէութեան ժամանակն ալ սուրբն  
Գրիգոր Նազիանզացի , սուրբն Բարսեղ , և  
մանաւանդ սուրբն Յովհան Ոսկեբերան :

Հ. Յունաստանի երևելի պատմիչները  
որո՞նք են .

Պ. Հերոդոտոս , Թուկիտիդէս , Քսե-  
նոփոն , Պողիբիոս , Դիոգորոս սիկիլիացի ,  
Դիոնեսիոս աղիկառնացի , Յովսէպոս ,  
Պլուտարքոս , և այլն :

Հ. Գլխաւոր իմաստասէրները որո՞նք են .



Պ. Յոնիական դպրոցէն Թաղէս, Անաքսիմանդր, Անաքսագոր, Արքեղայոս. Իտալական դպրոցէն Պիլթագոր սամոսացին, Եմպեդոկղ, Արքիտաս, և այլն. Եղէական դպրոցէն Քսենոփոն, Պարմենիդէս, Հելլակղիտոս, Լեւկիպպոս, Դեմոկրիտոս, և այլն: — Իմաստասիրաց մէջ շատ անուանի եղաւ Սոկրատ ու իր աշակերտները, այսինքն Պղատոն, Արիստոտէլ, Անտիսթենէս, Արիստիպպոս Կիւրենայ դպրոցին հիմնադիրը, Եպիկուրոս, Զենոն, Եպիկտետոս, Պիլոն:

Հ. Յունաստանի երևելի գիտունները որոնք են.

Պ. Թաղէս՝ որ Եգիպտոսէն Յունաստան բերաւ աստղաբաշխութիւնը, ու իր յաջորդները՝ Մեթոն Աթենացի (415), Արատոս Տարսոնացի, որ աստղաբաշխական բանաստեղծութիւն մըն ալ ունի. Արիստարքոս սամոսացի որ արևու անշարժութիւնը գուշակեց. Եւկղիդէս (262) ու Արքիմեդէս (212) երևելի երկրաչափները, հիպպոկրաս անուանի բժիշկը. և այլն:

Հ. Յոյնք ճարտարապետութեան կողմանէ ի՞նչ արդիւնք ունին.

Պ. Ճարտարապետութիւնն ալ ուրիշ արուեստներու պէս թէպէտ Ասիայէն ելած, բայց Յունաստանի մէջ կատարելագործուած է. իրենցմէ որոշուեցաւ ճարտարապետութեան իրեք կարգը այսինքն Դորացի ճարտարապետութիւն, Յոնիական



Ճարտարապետութիւն ու Կորնթեան Ճարտարապետութիւն :

Հ . Յունաց երևելի քանդակագործները որո՞նք են .

Պ . Փիդիաս , Պոլիկղէտոս , Միւռոն , Լիսիպոս , Պրաքսիտելէս , Սկոպաս :

Հ . Յունաց երևելի պատկերահանները որո՞նք են .

Պ . Պոլինոտ , Ապոլլոգորոս , Զեւքսիս , Պարրասիոս , Ապելէս , Պրոտոգենէս և այլն :







# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՀՈՌՎՄԵՅՆՅԻՈՅ



Իսպաւիոյ հին ժողովուրդները: — Հոռվմաբար հին  
 հիֆարիո-բիւնը: — Հոռվմայ Ռագասուրներուն  
 ժամանակին պատմութիւնը:

Հ, Հին ատենը Իտալիան ինչ բաժանմունք ունէր.

Պ. Իտալիան հին ատեն իրեք կը բաժնուէր, այսինքն Գաղղիա յԱյսկոյս Ալպեանց, Միջին Իտալիա, և Մեծ Յունաստան: Գաղղիա յԱյսկոյս Ալպեանց ըստածն ալ չորս կը բաժնուէր. այսինքն Գաղղիա յԱյսկոյս Պադուսի, Գաղղիա յԱյսկոյս Պադուսի, Լիգուրիա, և Վենետա: Միջին Իտալիան ալ վեց նահանգ կը բաժնուէր. Ետրուրիա կամ Տոսկանա, Ռամպրիա, Պիլենոն, Սամնիա, Լատիոն և Կամպանիա: Մեծ Յունաստանն ալ չորս նահանգ. այսինքն Ապուլիա, Մեսապիա, Լուկանիա և Բրուտիոն:



Հ . Իտալիոյ հին ժողովուրդներուն վրայ  
ինչ գիտելիք կայ .

Պ . Հռոմուլոսի ժամանակէն առաջ ե-  
ղած պատմութիւններուն վրայ ստոյգ տե-  
ղեկութիւն մը չկայ . հաւանական կար-  
ծիքն աս է թէ հիւսիսային ազգերը , Վեդաք  
Պեղասգեանք և Վիւրիկեցիք գնացեր բնա-  
կեր են Իտալիա : Ետքերը Յունաստանէն  
ու Ասիայէն գաղթականներ հոն երթալով  
հետերնին տարեր են նաև իրենց օրէնքնե-  
րը , արուեստներն ու գիտութիւնները : Ա-  
սոնց մէջ գլխաւորները Վատինք ու Ետրու-  
րացիք եղած են մէկմէկու դաշնակից տէրու-  
թիւններ :

Հ . Հռովմայեցւոց տէրութիւնն ուսկից  
կը սկըսի .

Պ . Տրոյիոյ պատերազմէն ետքը , երբոր  
Անքիատի որդին Ենէաս Իտալիա անցաւ ,  
ու Վատիններուն թագաւորին փեսայ ըլ-  
լալով անոր յաջորդեց : Ենէասի ցեղէն էր  
Հռոմուլոս՝ որ Հռովմ քաղաքը շինեց :

Հ . Ո՞վ էր Հռոմուլոս .

Պ . Պրոկաս թագաւորին Նումիատոր որ-  
դւոյն թոռն էր :

Հ . Պրոկասին ո՞վ յաջորդեց .

Պ . Պրոկաս մեռնելու ատենը իրեն յա-  
ջորդ ընտրեց Նումիատորը , որ անգրանիկն  
էր . բայց եղբայրը Ամուլիոս ձգեց Նումի-  
ատրն ու ինքը տեղն անցաւ , ու անոր հռէա



Սիլուխա անուանով աղջկանը երկուորեակ  
ծնած տղաքը, որ էին Հռոմուլոս ու Հաե-  
մոս, Տիբերիս գետը ձգել տուաւ :

Հ. Հռոմուլոս ու Հաեմոս ինչպէս ա-  
զատեցան .

Պ. Թագաւորին հովիւը փաւստուլոս  
զանոնք գտնելով տուն տարաւ մեծցուց :  
Ոմանք կ'ըսեն թէ գայլ մը վերցուց զիրենք,  
և ասեն մը ծառի տակ իր կաթովը կերա-  
կրեց, ետքը հովիւները գտան մեծցուցին :

Հ. Հռոմուլոս ու Հաեմոս ինչպէս ա-  
նուանի եղան .

Պ. Երբոր մեծցան, կարիճ մարդիկ ե-  
ղան . Փաւստուլոս հովիւը իմացուց Նումի-  
տորին անոնց ինչ մարդ ըլլալը . ան ալ հե-  
տերնին մէկտեղ Ամուլիոսին վրայ վազեց  
սպաննեց, և ժողովրդեան հասկըցընելով  
աս դիպուածները՝ ինքը նորէն թագաւոր  
նստաւ :

Հ. Հռովմ քաղաքը ինչպէս շինուեցաւ .

Պ. Հռոմուլոս ու Հաեմոս Տիբերիս գե-  
տին քովը քաղաք մը շինել ուզեցին . երբոր  
մէջերնին կռիւ ելաւ թէ ով իշխէ ան քաղ-  
քին, Նումիտոր խրատ տուաւ իրենց որ  
Թռչուններուն թռչելէն իմանան աս-  
տուածներուն կամքը . ուստի երկուքն ալ  
եղան մէյմէկ լեռներու վրայ . Հաեմոս վեց  
անգղ տեսաւ, Հռոմուլոս ալ տասուերկուք .  
Ժողովրդեան կէսը Հաեմոսի կողմն անցաւ .



առաջ տեսնելուն համար, կէսն ալ Հռոմուսին՝ շատ թաչուն տեսնելուն համար, ասկէ կռիւ ելաւ, ու Հռեմոս սլատերազմին մէջ մեռաւ. իսկ Հռոմուս ինքնիշխան մնալով քաղաքը շինեց Քրիստոսէ 753 տարի առաջ:

Հ. Հռովմ քաղքին առջի բնակիչները որոնք եղան.

Պ. Հռոմուսու հրաման հանեց որ յանցաւոր փախստական մարդիկ իր քաղաքը դան. անանկով շուտ մը լեցուեցաւ քաղաքը:

Հ. Հռոմուսու ինչ կարգեր դրաւ իր շինած քաղքին մէջ.

Պ. Հարիւր հոգի խելացիներէն ու կրտսիճներէն խորհրդական ընտրեց որ Ծերական ըսուեցան. և անոնց ցեղը Պապի կ'ըսուէին՝ որ Հռովմայեցւոց մէջ ազնուականներն էին. հասարակ ժողովրդեան իշխանութիւն տուաւ դատաւորներ ընտրելու, որէնք հաստատելու և սլատերազմ կամ հաշտութիւն ուզելու. բայց որոշելը ծերակուտին թողուց:

Հ. Հռովմայեցիք ինչ կերպով շատցան.

Պ. Հռոմուսու դեսպան զրկեց Սաբինեանց, որ իրենց մօտ կտրիճ ազգ մըն էին, և ուզեց որ Հռովմայեցւոց հետ խնամութիւն ընեն. երբոր Սաբինեանք ծաղր ըրին դեսպանները, Հռոմուսու ձայն հանեց թէ մեծ տօն մը պիտի կատարէ. ուստի չորս



դիէն ժողովուրդները հռովմ թափեցան ,  
Սաբինեանք ալ մէկտեղ : Հանդեսին խաղերն  
սկսելուն պէս հռովմայեցի կորիճները  
թուրը ձեռուրնին վազեցին Սաբինեանց աղ-  
ջիկները յափշտակեցին , փախան : Աս բա-  
նիս վրայ կատուելով Սաբինեանց Տատիոս  
թագաւորը՝ շատ զօրքով հռովմայ վրան  
եկաւ :

Հ . Հռովմայեցւոց ու Սաբինեանց պա-  
տերազմը ինչ վերջ ունեցաւ .

Պ . Երկու կողմէն ալ շատ մարդ ջարդուե-  
լէն ետքը , Հռոմուլոս ու Տատիոս դաշինք  
դրին որ երկուքնին մէկտեղ հռովմայ մէջը  
թագաւորեն : Ուստի հարիւր հոգի ալ  
Սաբինեանցմէ ծերակոյտ ընտրուեցան . և  
որոշեցին որ քաղաքը Հռոմուլոսին անու-  
նովը կոչուի , և ժողովուրդը Սաբինեանց  
Կուրէս մայրաքաղաքին անունովը Կուիրա-  
ցիք ըսուին :

Հ . Հռոմուլոս ինչպէս մեռաւ .

Պ . Երեսուներօթը տարի թագաւորելէն  
ետքը երբոր սկսաւ անիրաւութիւններ ընել՝  
հռովմայեցիք գաղտուկ սպաննեցին զինքը ,  
և ձայն հանեցին՝ թէ Հռոմուլոս երկինք ե-  
լաւ : Ետքը կռատուն մըն ալ շինեցին ու  
սկսան սգաշուել Հռոմուլոսը Կուիրինոս ա-  
նուանելով :

Հ . Հռոմուլոսի ո՞վ յաջորդեց .

Պ . Սաբինեանք ու հռովմայեցիք որոշե-



ցին որ հինգ օրը մէյմը կարգաւ մէկը թա-  
գաւոր ըլլայ: Աս բանիս տարի մը համբե-  
րելէն ետքը վիճակով ընտրուեցաւ Սաբի-  
նեանցմէ Նուամա Պոմպիլիոս խելացի ար-  
դար մարդը:

Հ. Նուամա Պոմպիլիոս ի՞նչ երևելի գործք  
ըրաւ.

Պ. Տօներ սահմանեց, կռատուններ շի-  
նեց. Յանոս կուռքին համար կռատուն մը  
շինեց որ միայն պատերազմի ատեն կը բա-  
ցուէր, և չորս Աեստեան ըսուած կուսանք  
հոն սպասաւոր դրաւ: Տոմարը կարգի դրաւ,  
քառսունուիրեք տարի խաղաղութեամբ  
թագաւորելէն ետքը մեռաւ:

Հ. Նուամա Պոմպիլիոսին ո՞վ յաջորդեց.

Պ. Տուղղոս Ռասիլիոս պատերազմասէր  
ազնուականը, որ Ալբայեցւոց դէմ պատե-  
րազմի ելաւ:

Հ. Հռովմայեցւոց ու Ալբայեցւոց պա-  
տերազմը ի՞նչպէս եղաւ.

Պ. Ալբայեցւոց զօրապետը ուզելով խա-  
ղաղութիւն ընել Հռովմայեցւոց ըսաւ թէ  
քանի մը հոգի երկու կողմէն ելլեն մինակ  
ծեծ կուին, ու որ կողմիններն որ զօրանան՝  
յաղթութիւնը անոր սեպուի: Ռասաի եր-  
կու կողմէն ալ իրեք իրեք եղբայր մէկմէ-  
կու դէմ ելան. Հռովմայեցւոց կողմիններն  
Ռվրատիոսք կ'ըսուէին, Ալբայեցւոցը Վու-  
րատիոսք:



Հ. Ի նչպէս եղաւ Ուրատեանց ու Կուրատեանց պատերազմը .

Պ. Առաջ Ուրատեանց երկուքը զարնուեցան մեռան, բայց իրեք Կուրատեանք ալ վիրաւորեցան ու մնացած մէկ Ուրատիոսին վրայ վազեցին . Ուրատիոս փախչելու ատենը դարձաւ տեսաւ որ իրեք Կուրատիոսները տկարացած՝ իր ետեէն վազելով մէկմէկէ հեռացեր են, յանկարծ ետ դարձաւ՝ ու առնոյք մէկմէկու քով չհասած՝ մէկիկ մէկիկ իրեքն ալ սպաննեց :

Հ. Ուրատեանց ու Կուրատեանց պատերազմին վերջը ի նչպէս եղաւ .

Պ. Երբոր Ուրատիոս յաղթանակով հռովմ կը դառնար, իր քոյրն որ Կուրատիոսներուն մէկուն նշանած էր սկսաւ լալ, Ուրատիոս ալ զարկաւ սպաննեց զքոյրն :

Հ. Տուղղոս Ոստիլիոս ի նչպէս մեռաւ .

Պ. Հռովմ սաստիկ ժանտախտ իյնելով Ոստիլիոսն ալ բռնուեցաւ, ու անկէ ետքը ուժէ ընկաւ . ոմանք կ'ըսեն թէ օր մը զոհ մատուցանելու ատեն կայծակէն զարնուեցաւ : Բայց կ'երևնայ թէ զինքը գաղտուկ սպաններ են :

Հ. Տուղղոս Ոստիլիոսին ո՞վ յաջորդեց .

Պ. Անկոս Մարտիոս՝ Կուլմայի թոռը . որ քովի ազգերուն յաղթեց, ու կուստուններ բանտեր շինեց, սարխապները նորոգեց : Տիբերիս գետին բերանն ալ Ոստիա ըսուած



նաւահանդիսոր շինեց, ՉԿ տարի թագաւո-  
րեւէն ետքը մեռաւ (614):

Հ. Անկոսէն ետքը ո՞վ թագաւորեց .

Պ. Իր տղոցը դաստիարակը Տարկուհինիոս  
երէց, որ ծերակուտին թիւը շատցուց՝ ի-  
րեքհարիւր հոգի ըրաւ. Աստիններուն ու  
Սաբինեանց յաղթեց, հռովմ քաղաքն ալ  
շէնքերով զարդարեց:

Հ. Տարկուհինիոս երէց ի՞նչպէս մեռաւ .

Պ. Անկոս Մարտիրոսին որդիքը երկու  
յանդուգն գեղացիներու խրատ տուին, որ  
ձեռուընին մէյմէկ կացին առած՝ թագա-  
ւորին սպալատը մանեէն՝ իբր թէ իրարու դէմ  
բողոքելով. երբոր թագաւորն սկսաւ մտիկ  
ընել մէկուն խօսքը, ան միջոցին լուռ կե-  
ցողը թագաւորին գլխուն զարնելն ու մեռ-  
ցնելը մէկ ըրաւ:

Հ. Տարկուհինիոս երէցին ո՞վ յաջորդեց .

Պ. Տարկուհինիոսի կնոջը հնարքովը իր  
փեսան Սերվիոս Տուղղիոս թագաւորեց:

Հ. Սերվիոս Տուղղիոս ի՞նչ երևելի գործք  
ըրաւ .

Պ. Հռովմ քաղաքը մեծցուց, առաջ որ  
հինգ բլուրի վրայ շինած էր, երկու բլուր  
ալ ինքը քաղքին մէջ առաւ. վարպետու-  
թեամբ մը ժողովրդեան իշխանութիւնը  
սպակսեցուց: Հարկ տալու կարգ դրաւ ա-  
մէն մարդուն կարողութեանը չափով. և



Ժողովրդեան համրանքը և ամէն մէկուն հարստութիւնը իմանալու համար օրէնք դրաւ որ հինգ տարին մէյմը ամէնքը զէնքերով Արեւի հրապարակը շարուին ու ըսեն՝ քանի հոգի ունին աներնին ու ի՞նչ հարստութիւն տէր են :

Հ. Սերվիտսի մասէն ի՞նչպէս եղաւ .

Պ. Սերվիտս իր երկու աղջիկը Տարկուլինիոսի երկու թոռներուն հետ կարգեր էր : Եւ որովհետեւ իր աղջիկներն ու փեսաները իրարու ներհակ բնութիւն ունէին, հեզը հպարտ տղուն տուաւ, կռուասէրն ալ հեզին : Բայց Ղուկիոս Տարկուլինիոս դաժան փեսան և իր կռուասէր աղջիկը Տուղղիա խօսքը մէկ ըրած՝ իրենց ընկերներն ըսպան նեցին ու մէկզմէկ առին : Ղուկիոս ծերակուտին մէկ մասը իրեն կողմը ձգելով Սերվիտսը սպաննել տուաւ : Տուղղիան ալ ճամբան իր հօրը մեռելը ձգուած տեղը հանգիպելով, հրաման տուաւ ու կառքը հօրը մեռելին վրայէն կոխկռտելով անցուց :

Հ. Ղուկիոս Տարկուլինիոս ի՞նչպէս ըրաւ թագաւորութիւնը .

Պ. Իր անգթութիւններուն համար Գոռոզ ըսուեցաւ . թիկնապահները շատցուց . Ժողովուրդն ալ միշտ սպառերազմի և շէնքեր շինելու կը զբաղեցընէր՝ որ անիրաւութիւնները մոռցուին :

Հ. Տարկուլինիոս Գոռոզ Գաբիէս քաղաքը ի՞նչպէս առաւ .



Պ. Նախ իր Սեքստոս որդին գնաց՝ հօրը  
ձեռքէն փախածի պէս Գաբիացւոց զօրա-  
պետ եղաւ, մէկ քանի պատերազմներու  
մէջ Տարկուհնիոսին յաղթել ձեացուց, ու  
երբոր տեսաւ որ Սաբինեանք իր վրայ վըս-  
տահ են, մարդ խրկեց հօրը հարցընելու թէ  
ի՞նչ ընէ: Տարկուհնիոս առանց պատաս-  
խան տալու՝ պարտէզն իջաւ ու դեսպանին  
հետ քալելու ատեն խաշխաշներուն մէջէն  
երկայններուն գլուխները կտրտեց: Սեքս-  
տոս երբոր լսեց հօրը միաքը հասկընալով  
Սաբինեանց մեծամեծները մէյմէկ պատճա-  
ռաւ մեռուց ու ստակնին աղքատներուն  
բաժնեց:

Հ. Տարկուհնիոս Գոռոզն ի՞նչ երևելի  
չէիք շինեց.

Պ. Ասպիտոլիոն բերդին կռատունը շի-  
նեց լմրնցուց:

Հ. Սիբիլեան գրոց սկիզբը ի՞նչ է.

Պ. Սիբիլա անունով մարգարէ սեպուած  
կին մը ինը կտոր գիրք բերաւ Տարկուհնիո-  
սին ծախելու: Երբոր թագաւորը չտուաւ  
ուզած գինը, կինը գնաց գրքերուն իրեքն  
այրեց, ու նորէն եկաւ մնացած վեցին հա-  
մար բոլորին գինն ուզեց. Տարկուհնիոս  
վճրնտեց զինքը: Գնաց կինը իրեք մըն ալ  
այրեց ու եկաւ նորէն իրեք մնացածին հա-  
մար բոլորին գինն ուզեց. թագաւորը՝ հա-  
ւահարցներուն խորհրդովը մնացածները  
գնեց, ու հրամայեց որ ան գրքերը զգուշու-



Թեամբ պահեն Վապխտովիոնի կուստանը  
մէջ :

Հ . Տարկուինիոս Գոռոզին վերջն ի՞նչ  
պէս եղաւ .

Պ . Երբոր Հռուտուլեանց Արդէա քա-  
ղաքը պաշարեր էր , իր որդին Սեքստոս  
Տարկուինիոս , Վոլլատինոս իշխանինն Լու-  
կրետիա կնոջը նախատինք ըրաւ . Լուկրե-  
տիա մարդ զրկեց իր հօրն ու էրկանը՝ որ  
տուն գան . հասկըցուց եղածը , աղաչեց որ  
վրէժխնդրութիւն ընեն , ու ինքը յանկարծ  
թուր մը հանեց՝ իր սիրտը խոթեց մեռաւ :  
Սարսափեցան ամէնքը , և Բրուտոս բարե-  
կամինն երգում ըրաւ վրէժն հանելու Տար-  
կուինեանցմէ . մէկալնոնք ալ մէկտեղ՝ Լու-  
կրետիայի մարմինը ժողովրդեան ցցուցին ,  
ու Տարկուինիոսը քսանհինգ տարի թա-  
գաւորելէն ետքը տնով տեղով Եարուրիա  
քշել աուին , թշնամեաց հեան ալ տասնը-  
հինգ տարուան զինադադարումն ըրին :

Հ . Բրուտոս ի՞նչ մարդ էր .

Պ . Բրուտոս խելացի մարդ մըն էր , որուն  
հայրն ու եղբայրը Տարկուինիոս մեռուցեր  
էր , անոր համար ինքը վախնալով կամօք  
խենթ ձևացեր էր . Տարկուինիոս ալ անու-  
նը Բրուտոս դրեր էր որ անասուն ըսել է .  
ուստի Բրուտոս առթի կը սպասէր որ վրէժն  
առնէ :



Հ Ռ Ո Վ Մ Ա Յ Ե Յ Ի Ո Յ

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Հիւսափոսութիւն : -- Իշխանապետութիւն : --

Տրիֆոնութիւն : -- Տասնպետութիւն :

Հ . ՏԱՐԿՈՒԻՆԻՈՍ Գոռոզին քշուէլէն  
Ետքը Հռովմայեցւոց ո՞վ իշխեց .

Պ . Հռովմայեցիք Հիւսափոս անունով եր-  
կու հոգի ընտրեցին , և անոնց յանձնեցին  
Թագաւորին իշխանութիւնը՝ մէկ տարուան  
համար :

Հ . Հիւսափոսներն ընտրողը ո՞վ էր .

Պ . Ժողովուրդը , որ Արեսի դաշտը կը  
Ժողովուէր :

Հ . Հիւսափոսաց իշխանութեան նշան-  
ներն ի՞նչ էին .

Պ . Իրենց վերարկուին եզերքը ծիրանի  
էր . Ժողովներու մէջ փղոսկրէ աթոռի վը-  
րայ կը նստէին , ձեռուրնին արծուէգլուխ  
փղոսկրէ գաւազան բռնած . դուրսն ալ ի-  
րենց առջևէն տապարաւորներ կ'երթային :

Հ . Առաջին հիւսափոսները որո՞նք է-  
ղան .

Պ . Բրուտոս և Կոլլասինոս :



Հ. Տարկուինիոս Գ. ուսող աքսորուէլէն  
էաքը շիջանայ թագաւորութիւնը նորէն  
ձեռք ձգելու .

Պ. Իր կուսակիցները գաղտուկ մէկը մէ-  
կալը գրգռեցին՝ որ Տարկուինիոսը նորէն  
թագաւոր նստեցնեն . բայց բոլորն ալ բռնը-  
ւեցան . անոնց մէջ էին նաև Բրուատոսի եր-  
կու որդիքը . բայց Բրուատոս միայն արդա-  
րութի մտածելով զանոնք ալ սպաննել տը-  
ւաւ իր աչքին առջև : Տարկուինիոս Ա. յայտ-  
ները յորդորեց՝ ու անոնցմով Հռովմայե-  
ցւոց վրայ պատերազմի ելաւ . Հիւապատոսնե-  
րը դէմն ելան . շատ ջարդ եղաւ երկու կողմէն  
ալ և Բրուատոս մեռաւ . բայց յաղթութիւնը  
Հռովմայեցւոցն եղաւ : Ան ատենը Ետրու-  
րացւոց Պորսենա թագաւորը Տարկուինիո-  
սի գրգռութեամբը ելաւ Հռովմայ վրայ , և  
Հռովմայեցիք յաղթուեցան . Ետրուրացիք  
անոնց ետևէն ինկած եկան ինչուան գետին  
կամրջին քովը . հոն Ովրատիոս Առկղէս եր-  
կու ընկերով կամրջին գլուխը կեցաւ արգի-  
լեց թշնամիները :

Հ. Մուկիոս Սկեւոլա ի՞նչ քաջուհի ըրաւ .

Պ. Երբոր Ետրուրացիք Հռովմը պաշարեր  
էին , Մուկիոս անոնց բանակը մտաւ . զատե-  
նադպիրը թագաւորը կարծելով սպաննեց ,  
և մէկէն զինքը բռնեցին : Թագաւորն ուզեց  
զինքը տանջանքի դնել որ շիտակն ըսէ . հոն  
վառած կրակ կար , Մուկիոս ձեռքը բոցին  
մէջ խոթեց , ըսելով . Ես ինքիրմէս կը տան-  
ջեմ ան ձեռքն որ սխալեցաւ . բայց գիտ-



ցիր որ ինծի պէս իրեքհարիւր կարիճ ալ  
կայ որ քեզ մեռցրնելու երգում ըրեր են :  
Զարմայալ թագաւորն ու հաշաութիւն  
ըրաւ Հռովմայեցւոց հետ :

Հ . Իշխանապետութիւնը ի՞նչ պատճա-  
ռաւ դրուեցաւ .

Պ . Հռովմայեցւոց աղքատները շատ  
պարտքերու տակ ըլլալով՝ պատերազմի եր-  
թալ չէին ուզեր . ուստի որոշեցին որ անկէ  
էտքը պէտք եղած ատենը բոլոր իշխանու-  
թիւնը մէկու մը յանձնուի միայն վեց ամիս՝  
ան մարդուն անունը ըլլայ Դիւսպար կամ  
Իշխանապետ , և ընտրուեցաւ Նարտիոս հիւ-  
պատար . որ ժողովուրդը վախցրնելու հա-  
մար քսանըջորս տապարաւոր առջևէն կը  
տանէր :

Հ . Հռովմայեցիք իշխանապետութիւնը  
հաստատելն էտքը ի՞նչ պատերազմ ըրին .

Պ . Նատիններուն յաղթեցին , անոնք ալ  
նեղը մտած հաշաութիւն ուղեցին՝ վարնտե-  
լով իրենց քաղքրներէն Տարկուինիոսն ու  
անոր կուսակիցները : Տարկուինիոս ալ փա-  
խաւ հեռու տեղ մը ու խեղճութեամբ մե-  
ռաւ իննըսուն տարուան (494) :

Հ . Տրիբուններուն իշխանութիւնը երբ  
ու ի՞նչպէս հաստատուեցաւ .

Պ . Ժողովուրդը ազնուականաց բռնու-  
թիւներէն ձանձրացած՝ ձգեցին ելան Հռով-  
մէն դուրս Նուիրական ըսուած լեռը գնա-



ցին . Տերակոյտը վախցաւ ու մարդ զրկեց  
յորդորելու որ հռովմ գառնան . անոնք ալ  
գարձան , բայց առաջ խօսք առին Տերակու  
տէն որ անկէ ետքը տարուէ տարի մէկ քա  
նի հոգի ժողովրդեան պաշտպան ընտրուին .  
ան ատենը (492) Տրիբուն անուանով հինգ  
հոգի ժողովրդապետ դրին , որոնք ատեն  
անցնելէն ետքը տասն եղան :

Հ . Տրիբունները ինչ մասնաւոր իշխա  
նութիւն ունէին .

Պ . Իրենց ձեռք վերցընել չէր ըլլար : Նոր  
կանոն մը ելածին պէս՝ Տրիբունները կը քըն  
նէին , ու թէ որ չիհաւնէին՝ veto կ'արգիւծէ  
կը գրէին , անով կը վերցուէր :

Հ . Մարկիոս Վորիոլանոսի պատմութիւ  
նը ինչ է .

Պ . Վորիոլանոս ազնուական մըն էր՝ որ  
Վորիոլոն քաղաքը սաշարուած ատենը մեծ  
քաջութիւններ ցցուցեր ու քաղքին տիրեր  
էր . երբոր ժողովուրդը զինքը հիւպատոս  
չընտրեցին , ջանաց որ Տրիբունի իշխանու  
թիւնը վերցընէ . երբոր դատաստանի կան  
չուեցաւ ու տրիբուններուն որոշելովը աք  
սորուեցաւ , դնաց Վոլսկեանց ասպաւինե  
ցաւ , որ Վորիոլանոսին հետ մէկտեղ հռով  
մայեցւոց երկիրները կոխեցին , հռովմը պա  
շարեցին : Տերակոյտն ու ժողովուրդը մէկ  
եղած՝ մէկ երկու անգամ դեսպան զրկեցին  
Վորիոլանոսին որ թողու թշնամութիւնը ,  
ու նորէն գայ պատուով իր հայրենիքը .



Վորիտլանոս երբոր անոնց մտիկ չըրաւ ,  
իր մայրը ու կինը սուգի հագուստներով  
եւան դիմացը , սկսան աղաչել . Վորիտլանո-  
սին սիրտը շարժելով թողուց պաշարումն  
ու ետ դարձաւ : Վրսէն թէ դառնալու ա-  
տէն զօրքը զինքը մեռուցին , և ետքը զղջա-  
ցան ու մեծ պատուով թաղեցին (488) :

Հ . Ագարակային օրէնքն ի՞նչ էր .

Պ . Թշնամիներէ առնուած երկիրները  
ժողովրդեան բաժնելու օրէնք մըն էր 484ին  
դրուած՝ Վասսիոս Սպուրիոսի առաջարկու-  
թիւնը : Աս օրէնքին պատճառաւ մեծամեծ  
կռիւներ եղան ետքը Հռովմայեցւոց մէջ :

Հ . Վասսիոս Սպուրիոսի պատմութիւնը  
ի՞նչ է .

Պ . Սպուրիոս Վասսիոս հիւպատոս էր ,  
որ ժողովրդեան սիրտը վաստրկիլ ուղեւով  
ձերակուտին կասկածելի եղաւ , ու դատա-  
պարտուելով Տարսէոնի ժայռէն վար նե-  
տուեցաւ մեռաւ :

Հ . Վինկիննատոս ի՞նչ մարդ էր ու ի՞նչ  
երևելի գործք ըրաւ .

Պ . Վինկիննատոս արգար մարդ մըն էր ,  
որ իր գեղը քաշուած կը կենար . երկու  
անգամ զինքը տարին բռնի հիւպատոս ու  
իշխանապետ ըրին , որ քաղաքացիքը հան-  
դարտեցընելէն և թշնամեաց յաղթելէն  
ետքը նորէն գնաց իր գեղը քաշուեցաւ :



Հ. Հռովմայեցիք հին ատենը գրով օրէնք ունէին .

Պ. Ինչուան իրէքհարիւր սարի որոշ օրէնք մը չունէին . ուստի իրէք հոգի զրկեցին Յունաստան որ իրենց պէտք եղած օրէնքներն ընտրեն ու առնեն բերեն : Երբոր գեսպանները դարձան , ամենուն ուզելովը տասը հոգի ընտրուեցան Տասնպէս անունով :

Հ. Տասնպետաց իշխանութիւնը որչափ ատենի համար էր .

Պ. Տարեկան էր . Ապալիոս առջի տարուան տասնպետներուն մէկը ամենուն սիրելի ըլլալով՝ Երկրորդ տարին նորէն ինքն ընտրուեցաւ , և իր կողմը բռնող ծերունիներէն վեց հոգի՝ Ժողովրդէն ալ իրէք հոգի իրեն ընկեր ընտրեց և սկսան օրէնքները օտքի տակ առնել :

Հ. Ախրգինիա ո՞վ էր և ի՞նչ պատճառաւ մեռուցին զինքը .

Պ. Ախրգինիա Ախրգինիոս հարիւրապետին աղջիկն էր . Ապալիոս ուզեց զինքը կին առնել : Խորհուրդ տուաւ Աղօղիոս անունով ցած մարդու մը՝ որ ճամբան Ախրգինիային հանդիպելով բռնեց՝ իմ աղախնիա զաւակն է ըսելով , Ապալիոսին առջին դատաստանի ելաւ : Ախրգինիոս դուրսը բանակին մէջ ըլլալով , աս բանս իմանալուն պէս հռովմ դարձաւ . բայց երբոր տեսաւ Ապալիոսին անիրաւ վճիռը՝ որով զԱխրգինիան Աղօղիոսի կուտար , դանակը հանեց ,



իր աղջկանը զարկաւ մեռուց, և անանկ դանակը ձեռքը ժողովուրդն ու զօրքը ոտք հանեց որ վրէժխնդրութիւն ընեն. ժողովրդեան սիրտը վառուեցաւ, զօրքերն ալ անոնց հետ զօրասպետնին ձգեցին՝ Աւենտին լեռը քաշուեցան:

Հ. Տասնպետներուն իշխանութիւնը ինչպէս վերջացաւ.

Պ. Ծերակոյտը տեսաւ որ հռովմ՝ պարպեցաւ, տասնպետները իշխանութենէն ձգել տուին ու զրկեցին իմացուցին ժողովրդեան, անոնք ալ եկան Տրիբուններ ու հիւպատոսներ դրին:

Հ. Տասնպետներուն ջնջուելէն ետքը ուրիշ ինչ կարգ դրուեցաւ.

Պ. Տրիբունները ծերակուտէն խնդրեցին, որ հասարակ ժողովուրդը կարենայ ազնուականաց հետ խնամութիւն ընել, և ժողովրդականք կարենան հիւպատոս ընտրուիլ. ուստի տարուան համար վեց հոգի ընտրեցին հիւպատոսներուն տեղը՝ Տրիբուն ղըրայ անուանով, իրեքը ծերակուտէն՝ իրեքն ալ ժողովրդէն: Երկու իշխաններ ալ դրուեցան համարակալ անուանով, որոնց պաշտօններ ժողովուրդը համրել ու ամենուն՝ ինչուան ծերակուտին ալ ըրածը քննել ու գիր անցընել (143):

Հ. Առջի համարակալները որոնք եղան.

Պ. Պապիրիոս ու Սեմպրոնիոս ծերու.



նինները . և ինչուան հարիւր տարիի չափ ա-  
սոնց ցեղին մէջ մնաց համարակալու թիւեր :

Հ . Սպուրիոս Մեղիոսի պատմութիւնն  
ի՞նչ է .

Պ . Սպուրիոս Մեղիոս հարուստ մարդը  
Եարուրիայի ցորենները բոլոր ինքը գնեց  
ու աղքատներուն կը բաժնէր՝ սրտերնին  
չահելու համար , որ զինքը թագաւորեցը-  
նեն . բայց երբոր իր միտքը իմացուեցաւ ,  
զինքը սպաննեցին :

Հ . Հռովմայեցիք ի՞նչ պատճառաւ Փի-  
դենացւոց ու Աէյացւոց դէմ ելան .

Պ . Հռովմայեցիք դեսպան զրկեցին ա-  
նոնց , անոնք զդեսպաններն սպաննեցին .  
Հռովմայեցիք ալ թողուցին իրենց մէջի  
խռովութիւնն ու անոնց դէմ պատերազմի  
ելան : Կուռնեղիոս Կոսսոս անունով մէկը  
զԱէյացւոց թագաւորն սպաննեց ու դու-  
խը թրին ծայրն անցուցած՝ Աէյացւոց  
ցցուց , անոնք ալ շփոթեցան ցրուեցան :

Հ . Ի՞նչպէս առին Հռովմայեցիք Աէյէս  
քաղաքը .

Պ . Տասը տարի քաղաքը պաշարած պա-  
հելէն ետքը , Կամիլոս իշխանապետը եկաւ ,  
գետնին տակէն ինչուան բերդին մէջտեղը  
ծածուկ ճամբայ բանալ տուաւ , ու Հռով-  
մայեցւոց զօրքը յանկարծ քաղաքը լցուե-  
ցան՝ առին , և Կամիլոս յաղթանակով  
Հռովմ մտաւ :



Հ . Աւելիսն առնելէն ետև Աամիլլոս ինչ  
երևելի դործք ըրաւ .

Պ . Փաղիսկեանց քաղաքն ալ պաշարեց .  
ան քաղաքին աղնուական տղոց վարժապե-  
տը յանկարծ տարաւ տղաքը Աամիլլոսին  
մտանեց . բայց Աամիլլոս բարկացաւ անոր  
անհաւատարմութիւնը վրայ , ձեռուրներն ե-  
տինն կապած՝ աշկերտներուն ձեռքը տուաւ  
որ ծեծելով ղինքը քաղաք տանին : Փաղիս-  
կեանք զարմացան Աամիլլոսին արգարու-  
թեանը վրայ , ու շատ ստակ վճարելով հաշ-  
տութիւն ըրին :

Հ . Հռովմայեցիք ինչ ապերախտութիւն  
ըրին Աամիլլոսի դէմ .

Պ . Տրիբունները վրան զրպարտութիւն  
ըրին թէ Աւելիսի կողոպուտէն շատ բան  
իրեն պահեր է . Աամիլլոս այսպիսի ապե-  
րախտութեան չիդիմանալով Արդէա քա-  
ղաքը քաշուեցաւ :

Գաղղիացի-ոց և Պի-տոսի յարձակմանը :

Հ . Գաղղիացիք ինչ պատճառով Հռով-  
մայեցւոց վրայ եկան .

Պ . Գաղղիացիք երկու հարիւր տարուը-  
նէ ՚ի վեր չորս դին տիրել սկսեր էին . Բրեն-  
նոս իրենց զօրապետը ինչուան Հռովմ ե-  
կաւ , Ալլիա գետին քով Հռովմայեցւոց հետ  
զարնուեցաւ , ու քառասուն հազար հոգի  
մեռուց (390) :



Հ . Գաղղիացիք ի՞նչպէս առին Հռովմ՝  
քաղաքը .

Պ . Հռովմայեցւոց կտրիճները Վասիստու-  
լիոնին բերդը սլահուրտեցան . ոմանք ձգե-  
ցին փախան , շտան ալ քաղքին մէջ մնացին :  
Իսկ քուրմերը ու ծերակուտին ծերերը ժողովրդեան մեղքերուն համար զոհ ըլլալու  
մտքով փղոսկրէ աթոռներու վրայ նստած  
շարուեցան ատեան ընելու տեղերնին : Գաղ-  
ղիացիք համարձակ ներս մտան , քաղաքին  
կրակ տուին , կիներն ու տղաքը անխնայ թրէ  
անցուցին , Վասիստուլիոնն ալ սլաշարեցին :  
Հռովմայեցիք ալ սովէն նեղացած , հաշտու-  
թի ըրին՝ դաշինք դնելով որ Հռովմայեցիք  
շատ մը ոսկի տան Գաղղիացւոց : Ոսկին կը շ-  
ռելու ատեն երբոր Հռովմայեցիք գանգա-  
տեցան , Բրեննոս հանեց իր թուրն ալ կշեռ-  
քին մէջ դրաւ , ըսելով . Վայ յաղթուողին :  
Ան միջոցին Վամիլլոս շատ զօրքով վրայ հա-  
սաւ . ոսկին ետ տանել տուաւ ու երկու  
անգամ Գաղղիացւոց հետ սաստիկ զար-  
նուելով հալածեց (387) :

Հ . Հռովմայեցիք ի՞նչ սլաաճառաւ Ղա-  
տիններուն դէմ ելան .

Պ . Ղատիններն ուզեցին որ Հռովմայե-  
ցւոց հետ մէկ ըլլան , ու հիւսպատոսին մէկը  
և ծերակուտին կէսն իրենցմէ ըլլայ . Հռով-  
մայեցիք չհաւանեցան ու սլատերազմի ելան :  
Ղատիններուն զօրապետներէն մէկը ելաւ  
կանչեց որ մէկը դիմացն ելլէ՝ մինակ կռուե-  
լու . Հռովմայեցւոցմէ ան ատենը Մանլիոս



հիւսպատոսին որդին առանց հրամանի վազեց գէմն ելաւ՝ յաղթեց ան մարդուն, կողոպտեց, ու հօրը վրանը եկաւ: Հայրը երբոր տեսաւ, սաստիկ նեղացաւ, ու անգթութիւն որդւոյն գլուխը կտրել տուաւ: Ետքը զարնուեցան Լատինացւոց հետ, ու վերջապէս յաղթեցին անոնց:

Հ. Ուրիշ ինչ երկար պատերազմ ունեցան Հռովմայեցիք ան ատենները.

Պ. Սամնիացւոց պատերազմը, որոնցմէ քանի մը անգամ յաղթուելէն ետքը անոնց ալ յաղթեցին:


Հ. Պիւռոս ինչպէս օգնեց Սամնիացւոց.

Պ. Շատ ձիաւոր ու հեռակազ զօրքով և քսան փիղով ճամբայ ելաւ, բայց փոթորկէ մը փրասուած՝ մէկ քանի նաւով Իտալիա հասաւ: Հռովմայեցւոց Լեւինոս հիւսպատոսը շատ զօրքով Լիրիս գետին քովը զարնուեցաւ հետը. երկու կողմէն ալ եօթը անգամ մէկզմէկ ետ քշեցին. բայց ետքը Հռովմայեցիք Պիւռոսին փղերը տեսնելով վախցան յաղթուեցան. տասներհինգ հազար հոգի մեռան, ութը հազար ալ գերի գնացին. թէպէտ Պիւռոս ալ շատ մարդ կորսնցուց: Հռովմայեցիք գերի փոխելու համար դեսպաններ ղրկեցին, որոնց գլխաւորն էր Փաբրիկիոս անուանի մարդը: Բայց Պիւռոս պայմանները յանձն չառաւ:



Հ. Հռովմայեցւոց Պիւռոսի հետ ունեցած պատերազմը ինչպէս լմնացաւ .

Պ. Երրորդ տարին երբոր նորէն սկսան պատերազմիլ՝ Պիւռոսին բժիշկը գաղտուկ թուղթ գրեց Հռովմայեցւոց՝ որ ինքը թոյն կուտայ Պիւռոսին՝ թէ որ իրեն բան մը խոստանան : Հռովմայեցիք Պիւռոսին խնայուցին՝ որ քննեց ու պատժեց բժիշկը , և Հռովմայեցւոց հետ հաշտուիլ ուզեց , բայց Հռովմայեցիք յանձ չառին . ուստի նորէն զարնուեցան , ու Պիւռոսի բանակին ալ տիրեցին : Իսկ Պիւռոս Տարենտացւոց կամքին դէմ հոն պահապաններ թողուց ու գնաց Իտալիայէն խոստանալով որ նորէն դառնայ (275) . Տարենտացիք ալ Հռովմայեցւոցմէ նուաճուեցան , և բոլոր Իտալիան Հռովմայեցւոց ձեռքն անցաւ (163) :



## ՀՌՈՎՄԱՅԵՑԻՑ

### ՉԻՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Հ. ՉԻՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ կողմանէ ինչ կարգ ունէին Հռովմայեցիք .

Պ. Բոլոր քաղաքացիքը զինուոր էին . մէկը տասը տարի զինուորու թի չըրած՝ պաշտօնի մը չէր կրնար հասնիլ . և տասներեօթը տարեկան կը սկսէին զինուորու թեան երթալ :



Հ . Զօրաժողովը ի՞նչպէս կ'ընէին .

Պ . Հիւպատոսները հրովարտակ մը կը հանէին , և Վասիտոլիոնին վրայ դրօշակ կը տնկէին . շուտ մը ամէն մարդ զէնքը կ'առնէր՝ Արեսի դաշտը կ'երթար՝ իր ցեղին մէջը կը կենար . հոն պէտք եղողները կ'ընտրուէին . Թէ որ մէկը դժուարութիւն ցուցընէր՝ ունեցածը հասարակաց կ'առնէին , զինքն ալ ծառայ կ'ընէին :

Հ . Հռովմայեցւոց զօրքը ի՞նչպէս կը բաժնուէր .

Պ . Զօրքը լեգէոններ կը բաժնուէր . մէկ լեգէոնը չորս կամ հինգ հազար ձիաւոր կ'ուսնենար : Զօրքը ժողովուելէն ետև ամէն լեգէոնէն մէյմէկ հոգի կ'ելլէին ու բարձր ձայնով զինուորական երգումը կ'ընէին . մէկալներն ալ նոյնը կը կրկնէին : Ամէն լեգէոն տասը խումբ կը բաժնուէր , և վեց զինուորական տրիբունի տակ էր . անոնց տակն ալ հարիւրապետներ կային :

Հ . Պատերազմին շարքը ի՞նչպէս էր .

Պ . Պատերազմին շարքը իրէք գծի վրայ էր . առաջ փոփառներն էին , երկրորդին՝ իշխանները , երրորդին՝ երրորդառները : Ամէն մէկ գծին մէջ ութը՝ տասուերկու՝ ինչուան տասնըվեց կարգ մարդ ետևէ ետև շարուած կը գտնուէին :

Հ . Հռովմայեցւոց զօրքին զէնքերն ի՞նչ էին .



Պ . Բոլոր զօրքին զէնքը երկու բերնով  
թուր էր : Բայց թեթև զօրքը թրէն զատ  
եօթ եօթը նեւ՝ իրեք ոտնաչափ երկայն ,  
փայտէ պղտի վահան մը և սղնձէ սաղաւարտ  
ունէին . իսկ ծանր զօրքը սովորական նե-  
տերէն զատ հինգ կամ վեց ոտնաչափ ուրիշ  
նետեր ալ ունէին , և մէյմէկ երկրթէ ճանկ ,  
գլուխնին սղնձէ սաղաւարտ , կուրծքերնին  
թելէ կամ միակտուր սղնձէ զրահ , ձախ  
ձեռքերնին ալ վահան : Ձիաւորներուն  
զէնքը երկայն թուր մըն էր , նիզակ մը , և  
քանի մը նեւ :

Հ . Հռովմայեցիք պատերազմի մէջ ի՞նչ  
մեքենայ կը գործածէին .

Պ . Տեսակ տեսակ մեքենաներէն ու բա-  
բաններէն զատ՝ հնարք մը ունէին որ զե-  
նուորները մէյմէկ քառանկիւն վահան կը  
դնէին գլուխնին ու այնպէս իրարու հետ  
կը յարմարցընէին քովէ քով՝ որ ծածքի պէս  
կը լլար բոլոր բանակին վրայ , ասոր անունը  
Վեհայ դրեր էին : Երբոր պարիսպ մը կամ  
բերդ մը կ'ուզէին առնել , այսպէս ըրած  
կը մօտենային ու տակը կը փորէին :

Հ . Հռովմայեցւոց դրօշակն ի՞նչ էր .

Պ . Առջի ատենները խուրձ մը խոտ էր՝  
նիզակի մը ծայր անցուցած : Ետքը աւելցու-  
ցին պղտի կլոր տախտակներ՝ վրան կուռքեր  
քաշած : Իսկ Մարիոսէն ետև ամէն լեզէոն  
մէյմէկ ոսկիէ արծիւ կ'ունեւար :



Հ. Հռովմայեցիք ինչպէս բանակ կը դնէին .

Պ. Իրենց բանակը սովորաբար քառակուսի էր, և ամէն գունդ զատ տեղ ունէր : Արանները մորթէ էին, և ամէն մէկուն մէջը տասնական զինուոր կը կենային իրենց տասնասպետովը : Չորասպետին վրանը բանակին մէջտեղն էր . վրանին առջևն ալ հրասպարակ մը թող կուտային, ուր որ առուտուր կ'ընէին, ու սկսեք եղած ատենը զորասպետը հոն կը ժողովէր զանոնք : Չորս կողմը չորս գունդ կ'ունենար բանակը . և չորս դին ինը ոտք խոր փոս կը բանային ցիցերով վրաններէն երկուհարիւր քայլ հեռու : Քալելու ատեն ամէն զինուոր իրեք չորս ցիցէն զատ՝ հետը կը տանէր տասնըհինգ օրուան ցորեն կամ սպաքսիմատ : Անկէց ալ՝ ի զատ մէյմէկ սղոց, մաղ, բրիչ, կացին, մանգաղ, շղթայ և խալկին :

Հ. Հռովմայեցւոց զինուորներուն վարձքը ինչ էր .

Պ. Գլխաւոր վարձքերնին պսակ մը՝ ըրած քաջութիւններնուն յարմար որ զորասպետը կը բաժնէր բոլոր զօրքին առջևը : Իսկ զորասպետին վարձքն էր մեծ կամ սղտիկ յաղթանակ : Մեծ յաղթանակին ատեն՝ յաղթողը դափնի պսակով՝ չորս ձերմակ ձիով կառքի մէջ նստած Հռովմ կը մտնէր, ու Կապիտոլիոն կ'երթար : Իսկ սղտիկ յաղթանակ ընողը ոտքով կամ ձիով կը մտնէր քաղաքը :



ԿԱՐՔԵԴՈՆԱԳԻՏՈՒՄ

ՍԻՒՆԻՆՅԱՆ ԿԱՐՔԵՐԱԳՐԱԿԵՐՈՒՄ: — ԱՄՈՒՆԻՆ ԳՐԱԿԵՐՈՒՄ  
ԿԵՆՆԻ ԿԱՐՔԵՐԱԳՐԱԿԵՐՈՒՄ:

Հ. ԿԱՐՔԵԴՈՆԱԳԻՏՈՒՄ ԽՆՆՅԱՆ ԿԱՐՔԵՐԱԳՐԱԿԵՐՈՒՄ:

Պ. Կարքեդոնացիք որ Կարթագինեցիք  
այ կ'ըսուին, Տիւրացւոցմէ առաջ եկած են .  
վասն զի Քրիստոսէ 869 տարի առաջ Նի-  
գէ թագուհին իր եղբօրը ձեռքէն փախաւ  
գնաց Ափրիկէի մէջ Կարքեդոնը շինեց, որ  
քիչ ատենի մէջ առաջ եկաւ:

Հ. Կարքեդոնացւոց ըրած երևելի պա-  
տերազմները որոնք են.

Պ. Առջինը եղաւ Սիկիլիացւոց հետ ըրած  
պատերազմին. երկրորդը Հռոմէացեացւոց  
դէմ, որ Պունիկեան կ'ըսուի:

Հ. Կարքեդոնացւոց կառավարութիւնն  
ի՞նչ կերպ էր.

Պ. Կարքեդոնացիք բնութեամբ խորա-  
գէտ ու բարակամիտ ըլլալով խառն սե-  
տութի ընտրեր էին իրենց. այսինքն կէս մը  
ազնուապետութիւն, կէս մը ռամկապե-  
տութիւն: Երկու գլխաւոր դատաւոր ու-  
նէին՝ Սփէթ անունով, որ տարուէ տարի կը  
փոխուէին. և ազնուականներուն ձեռքովը  
կ'ըլլար ամէն խորհուրդ, դատաստան,  
վճիռ, և այլն: Թէ որ ասոնք իրարու մէջ



միաբան ջրլային՝ ժողովուրդը կ'որոշէր : Ան  
աղնուականներուն մէջէն ալ հարիւր չորս  
հոգի որոշուած էին գլխաւոր, որոնց իշ-  
խանութիւնը մշանջենաւոր էր :

Հ . Ի՞նչպէս եղաւ առաջին Պունիկեան  
պատերազմը .

Պ . Վարքեդոնացիք Սիկիլիոյ մեծ մասին  
տիրած ըլլալով մնացածին ալ կը ջանային  
տիրել : Բայց տեղացւոց աղաչանքովը Հռով-  
մայեցիք Մեսսինային տիրեցին, ու Սիրա-  
կուսայի հերոն թագաւորը նեղը խոթեցին՝  
որ ուզեց հաշտուիլ Հռովմայեցւոց հետ,  
ու անոնց նիղակակիցը եղաւ Վարքեդոնա-  
ցւոց դէմ :

Հ . Հռովմայեցիք ի՞նչ կերպով նաւա-  
տորմիղ ունեցան .

Պ . Ան ատենները Վարքեդոնացիի նաւ մը  
ալէկոծութեամբ Իտալիոյ կողմերը զարկած  
ըլլալով անիկայ իրենց օրինակ առին ու եր-  
կու ամսուան մէջ հարիւր քսան նաւով նոր  
նաւատորմիղ մը շինեցին :

Հ . Հռովմայեցւոց առաջին յաղթու-  
թիւնը ո՞րն եղաւ ծովու վրայ .

Պ . Գուլիլիոս հիւպատոսը Վարքեդոնա-  
ցւոց դէմ ելաւ, յաղթեց Վարքեդոնացւոց,  
և յիսուն կտոր պղտի նաւ ընկղմեց (260) .  
Հռովմայեցիք մեծ հանդէսով յաղթանակ  
ըրին Գուլիլիոսին, և սիւն մը կանգնեցին՝  
փորած :



Հ. Հռեգուղոս ինչ ըրաւ Վարքեգոնա-  
ցւոց դէմ.

Պ. Հռովմայեցիք երկրորդ տարին նորէն  
Ափրիկէի վրայ զրկեցին Հռեգուղոսը հա-  
րիւր նաւով, որ ծովու վրայ փոփոխ զար-  
նուէլէն ետքը յաղթեց անոնց. Վարքեգո-  
նացիք Քսանթիպոլոսի օգնութեամբը յաղ-  
թեցին, Հռեգուղոսն ալ բռնեցին՝ բանտ  
դրին:

Հ. Հռեգուղոսի վերջն ինչպէս եղաւ.

Պ. Վարքեգոնացիք հաշտութիւն ընել  
ուզելով Հռեգուղոսը ուրիշ գեասպաններու  
հետ Հռովմ զրկեցին, դաշինք դնելով որ  
եթէ Հռովմայեցիք յանձն չառնեն, Հռե-  
գուղոս ետ դառնայ: Հռեգուղոս տեսնե-  
լով որ իր վրայ կսկծալով կ'ուզեն Հռով-  
մայեցիք հաշտութիւն խօսիլ, ինքը դէմ կե-  
ցաւ, ու ետ դարձաւ գեասպաններուն հետ.  
Վարքեգոնացիք ալ բարկացան, ուրիշ տան-  
ջանքներ տալէն ետև, մէջը ցցուած գամե-  
րով լեցուն սնտուկի մը մէջ գոցեցին զինքն  
ու հոն մեռաւ:

Հ. Առաջին Պունիկէան սատերազմը  
ինչպէս վերջացաւ.

Պ. Վերջի նաւական սատերազմին մէջ  
Վարքեգոնացիք չարաչար յաղթուեցան ու  
հաշտութիւն ուզեցին. Հռովմայեցւոց ալ  
աչքը վախցած յանձն առին, սպայման դնե-  
լով որ Վարքեգոնացիք սատերազմին ծախ-  
քերուն տեղը հազար տաղանդ արծաթ



տան, Սիկիլիայէն հեռանան և գերիները  
աղատեն (241) :

Հ. Առաջին Պունիկեան պատերազմէն  
ինչուան երկրորդը հռովմ ինչ երևելի գի-  
տուած եղաւ .

Պ. Աեց տարի գոցեցին հռովմայեցիք  
Յանոսի տաճարը, ու սկսան խելք սորվե-  
լու բաներու ետևէ ըլլալ Յունաց հետևելով:  
Լիւրիկեցւոց վրայ ելան՝ յաղթեցին, շատ  
քաղաքներ առին, մնացածներն ալ հարկա-  
տու ըրին: Գաղղիացիք Ետրուրիայի կող-  
մերը շատ մնասներ ընելէն ետքը, ինչուան  
իրեք օրուան տեղ մօտեցան հռովմայ: Ա-  
նոնց դէմ ելան հռովմայեցիք, յաղթեցին,  
ու ետքը հաշտութիւն ըրին:

Երեւոյ՝ երեւոյ Պունիկեան պատերազմը: --  
Կարեւորնի իրժանումը:

Հ. Երկրորդ Պունիկեան պատերազմը  
ինչ պատճառաւ բացուեցաւ .

Պ. Կարգեգոնացիք առիթ գտածնուն  
պէս դաշինքը ոտքի տակ առին. Աննիբաղ  
պաշարեց Սպանիոյ Սագունտոն քաղաքն  
ու առաւ. հռովմայեցիք գանդատ ըրին և  
զԱննիբաղ ուղեցին որ իրենց ձեռքը տան,  
անոնք մտիկ չըրին. ասանկով սկսաւ պատե-  
րազմը:

Հ. Երկրորդ Պունիկեան պատերազմին



առջի զարնուիլը ուր եղաւ, և ո՞վ յաղ-  
թեց .

Պ . Աննիբաղ քաջ պատերազմող ըլլալով,  
Իտալիա անցնելու մտքով քառասուն հազար  
հետևակով և ինը հազար ձիաւորով Սպա-  
նիոյ լեռներէն անցաւ, տասը օրէն Ալպեան  
լեռներուն տակը հասաւ : Ան լեռներէն  
տասնըհինգ օրուան մէջ անցաւ . հռովմայե-  
ցիք Սկիպիոն հիւպատոսը անոր դէմ զրկե-  
ցին . Աննիբաղ անոր յաղթեց ու փախուց :

Հ . Աննիբաղ Սկիպիոնին յաղթելէն ետ-  
քը ուրիշ ի՞նչ պատերազմ ըրաւ .

Պ . Երբոր նորէն զարնուեցան Տրասիմեն  
լճին քովը, Աննիբաղ իր զօրքը բլուրներուն  
վրայ հանեց, սաստիկ ջարդ մը տուաւ  
հռովմայեցւոց, և վեց հազար հոգի գերի  
բռնեց :

Հ . Հռովմայեցիք իրեք անգամ Աննիբա-  
ղէն յաղթուելէն ետքը ի՞նչ ըրին .

Պ . Փաբիոս Մաքսիմոս բարակամիտ ու  
սրտոտ մարդը Վարքեդոնացիքը յոգնեցը-  
նելու մտքով իր բանակը ասպառաժ տե-  
ղուանք կը պտըտցընէր : Անգամ մըն ալ լեռ-  
ներու մէջ պաշարեց զԱննիբաղ, անիկայ կէս  
գիշերուն երկու հազար եզներու եղջիւր-  
ներուն վրայ խռիւներ կապեց բռնկցուց,  
ու հռովմայեցւոց վրայ քշեց : Երբոր  
հռովմայեցիք սարսափած փախան, Աննի-  
բաղ իր զօրքովը անցաւ նեղ ճամբէն ու ա-  
զատեցաւ :



Հ. Կաննեսի սլատերազմն ինչպէս եղաւ .

Պ. Վարրոն ու Պողոս Եմիլիոս հիւպատոսները իննըսուն հազարով Կաննէս քաղքին մօտ զարնուեցան ու յիսուն կամ ութսուն հազար մարդ կորսընցուցին : Հռովմայեցիք նորէն զօրք հանեցին ու շատ անգամ զարնուեցան Աննիբաղին և ապստամբած քաղքըներուն հետ . (216) դնացին Կապուան ալ սլաշարեցին , ուր կը ձմերէր Աննիբաղ . անիկայ թողուց Կապուան ու Հռովմայ վրայ վազեց . երկու անգամ սաստիկ փոթորիկ ըլլալուն համար սլատերազմէն արդիւուեցաւ :

Հ. Աննիբաղին դէմ ինչպէս զօրացան Հռովմայեցիք .

Պ. Կարբեդոնացիք Աննիբաղին Ասորուբաղ եղբօրը ձեռքովը Սպանիայէն օգնական զօրք զրկեցին : Հռովմայեցիք դիմացն առին , զօրքը ջարդեցին ցրուեցին . Ասորուբաղ ալ ընկաւ սլատերազմին մէջ : Եւ ան գիշերն որ Աննիբաղ իր եղբօրը հասնելուն կը սպասէր , Ասորուբաղին գլուխը անոր բանակին մէջը նետեցին :

Հ. Հռովմայեցիք Սիրակուսան ինչպէս առին .

Պ. Պատերազմով առնելէն յուսահատած՝ իրեք տարի սլաշարեւէն ետքը՝ մէջիններուն անմիաբանութեամբը առին , Արքիմեդէս երկրաչափն ալ իր ձեւերուն զբաղած ատենը վրայ հասան սպաննեցին (210) :



Հ. Ի՛նչպէս լմընցաւ Պուճիկեան երկրորդ պատերազմը .

Պ. Սկիսւիտն շատ զօրքով գնաց Վարքե-  
դոնին վրայ . Վարքեդոնացիք Աննիբաղը ետ  
կանչեցին ու նորէն երկու կողմէն ալ սլառ-  
րաստուած՝ կատաղի պատերազմ մը ըրին ,  
և վերջապէս Հռովմայեցիք յաղթեցին , ու  
ծանր սլայմաններով հաշտութիւն ըրին : Ա-  
սանկով լմընցաւ երկրորդ Պուճիկեան պա-  
տերազմը տասներեօթը տարի քշելէն ետքը  
(202) :

Հ. Աննիբաղայ մահն ի՛նչպէս եղաւ .

Պ. Ասդիս անդին փախստական սլարտե-  
լէն ետքը՝ Բիւթանացոց Պրուսիաս թա-  
գաւորին ապաւինեցաւ . բայց երբոր Պրու-  
սիաս ղինքը Հռովմայեցոց մատնել խոս-  
տացաւ , Աննիբաղ թոյն խմեց մեռաւ (192) :

Հ. Ի՛նչ պատճառով եղաւ Պուճիկեան  
երրորդ պատերազմը :

Պ. Հռովմայեցիք լսելով որ Վարքեդոնա-  
ցիք յիսուն տարուան մէջ նորէն ուժովցեր  
են զանազան պատճառանքներով պատե-  
րազմի ելան , գնացին Վարքեդոնի վրայ ,  
հրաման հանեցին թէ կ'ուզենք Վարքեդոնը  
կործանել , ուստի Վարքեդոնացիք ելլեն  
քաղքէն երթան ուր որ կ'ուզեն :

Հ. Վարքեդոնացիք աս որ լսեցին՝ ի՛նչ  
ըրին .

Պ. Յուսահատաբար սկսան պատերազ-



միւ չորս սարի . ինչուան որ Սկիպիոն Ամբիկեցին եկաւ զիրենք նեղը խոթեց . Կարբեդոնացիք ալ յուսահատած՝ քաղքին բերդը տուին , հրաման առնելով որ մէջէն երթան : Ասանկով կործանեցաւ Կարբեդոն :

Հռովմայեցոց պատերազմները Ատոյ՝ Երուսայի ու Արեւիկէի մէջ : — Գրաւիտանիայի խռովումներ :

Հ . Պունիկեան պատերազմներուն ժամանակը ուրիշ ինչ պատերազմներ ունեցան Հռովմայեցիք .

Պ . Ան միջոցին պատերազմ ունեցան ին , Մակեդոնացւոց Փիլիպպոս Բ թագաւորին հետ . ք , Ասորւոց Անտիոքոս թագաւորին հետ . ք , Գաղատացւոց հետ . ք , Սպարտացւոց Նաբիս բռնաւորին հետ . ք . Եստղացւոց հետ . ք , Պերսէոսի հետ . ք , Լիւրիկեցւոց հետ . ք , Աքայեցւոց հետ . ք , Սպանիացւոց հետ :

Հ . Կարբեդոնի կործանելէն ետքը Հռովմայեցւոց մէջ ինչ մասնաւոր գիտնալու գիտուած եղաւ .

Պ . Ամենուն սիրտը զեղխութիւն ու ազահութի անրելով շատ խռովութիւններ սկսան քաղքին մէջ . գլխաւորն եղաւ Գրակքոսեանց կռիւը (133) :



Հ . Ո՞վ էին Գրակքոսեանք ու ի՞նչ խոս-  
վութիւն հանեցին .

Պ . Տիբերիոս ու Վայիոս Գրակքոսեանք  
երկու եղբարք փառասիրութեամբ զժողո-  
վուրդը ոտք հանեցին ծերակուտին դէմ :  
Օր մը երբոր Տիբերիոս ժողովրդեան առ-  
ջևը կը խօսէր՝ ծերակուտին կուսակիցները  
զարկին զինքը սպաննեցին , կուսակիցներէն  
ալ իրեքհարիւր հոգի մեռուցին , մնացած-  
ներն աքսորեցին . ետքը սպաննեցին նաև մէ-  
կալ եղբայրը :

Հ . Ափրիկէի մէջ ի՞նչ պատերազմներ  
ըրին Հռովմայեցեք .

Պ . Նումիդիայի Մասինիսսա թագաւորին  
թողը Յուգուրթ իր մեծ եղբայրն սպաննեց  
որ ինքը թագաւորէ , պղտիկը Հռովմ փա-  
խաւ՝ օգնութի ուղելու համար . բայց Յու-  
գուրթ շատ ընծաներով Հռովմայեցւոց սիր-  
տը վաստրկեցաւ , ուստի Ոպիմիոս հիւպա-  
տոսը զրկուեցաւ որ տէրուիը երկուքին մէջ  
բաժնէ . Յուգուրթ ուղելով որ մինակ թա-  
գաւորէ , եղբօրը վրայ պատերազմի ելաւ ու  
խաբելով բռնեց սպաննեց : Աս անգթու-  
թէր համար Հռովմ կանչուեցաւ , և չկրցաւ  
արդարանալ . անոր համար մէկէն զինքը Ի-  
տալիայէն դուրս ըրին , ու ետքը վրան պա-  
տերազմի ելան : Մետեղոս հիւպատոսը գը-  
նաց քանի մը անգամ Յուգուրթին յաղթեց .  
Մարիոս՝ բոլոր բերդերն առաւ Յուգուր-  
թին ձեռքէն . Յուգուրթ ալ յուսահա-  
տած՝ իր Բոկքոս աներոջը ապաւինեցաւ



որ Մաւրիտանացւոց թագաւորն էր : Բոկ-  
քոս Յուզուրթը բռնեց Հռովմայեցւոց  
ձեռքը տուաւ , որ շղթաներով կապած  
Հռովմ սարին , ու բանտին մէջ անօթու-  
թենէ մեռաւ (105) :

Հ . Մարիոս ուրիշ ինչ յաղթութիւն  
ըրաւ .

Պ . Մարիոս երկու մեծ յաղթութիւններ  
ալ ըրաւ . մէյնը Թեւտոններուն վրայ՝ Սպա-  
նիայի Պրովէնտիա գաւառին մէջ , մէյնն  
ալ որ Ախմբրացւոցմէ իրեքհարիւր հազար  
հոգի ջարդեց Սպանիայի Ալերկելէ ըսուած  
դաշտերուն մէջ :

Իսաղնաւորաց պատերազմը : -- Սիշշայի -- Մա-  
րիոսի կռիւները : -- Պոմպէոս : -- Աեւար : --  
Եռասպէս :

Հ . Իսաղնաւորաց պատերազմը որն է .

Պ . Հռովմայ մօտ եղած Ժողովուրդները՝  
որ Իտալացի կ'ըսուին՝ կ'ուզէին Հռովմայե-  
ցի գրուել , բայց ծերակոյտը յանձ չէր առ-  
ներ . անոր համար մէջերնին պատերազմ  
բացուեցաւ , որ երկու սարի քշէլէն ետքը՝  
ծերակոյտը վախնալով , անոնց մէջէն չա-  
պրատամբող Ժողովուրդներուն Հռովմայե-  
ցի գրուելու հրաման տուաւ . մէկալներուն  
ալ խոստացաւ Հռովմայեցի գրել՝ թէ որ  
պատերազմէլէն դադրին : Ասանկով դաշնա-  
ւորները հաշտուեցան ու Հռովմայեցի



գրուեցան . միայն տերութեան բաներու  
մէջ չէին խառնուեր (90) :

Հ . Դաշնաւորաց պատերազմէն ետքը  
Լ՛նչ երևելի դիպուած եղաւ Հռովմայ մէջ .

Պ . Միհրդատ Պոնտոսի թագաւորը շատ  
մնաս հասուց Հռովմայեցոց . ան միջո-  
ցին Սիղղա ու Մարիոս հիւպատոսները  
իրարու հետ կռուըտեցան . Սիղղան զՄա-  
րիոսը քշել տուաւ իր կուսակիցներովը և  
Վիննան հիւպատոս դրաւ . ետքը իր թշնա-  
միներուն ալ ներելով , դնաց Միհրդատայ  
դէմ :

Հ . Վիննան Լ՛նչ ըրաւ Հռովմայ մէջ .

Պ . Մարիոսի թափառական պտրտած  
առեւնները ինքն ալ քշուած ըլլալով , Մա-  
րիոսը իր քովը կանչեց , ու մէկտեղ զօրքով  
Հռովմ մտան , բոլոր իրենց թշնամիները  
թրէ անցուցին . բայց Մարիոս քիչ ատե-  
նէն մեռաւ , Վիննան ալ հարիւրապետէ մը  
սպաննուեցաւ :

Հ . Սիղղան Լ՛նչ ըրաւ Միհրդատայ պա-  
տերազմէն ետքը .

Պ . Երբոր քանի մը անգամ յաղթելէն  
ու յաղթուելէն ետքը՝ հետը հաշտութիւն  
ըրաւ , յաղթանակով Հռովմ մտաւ , շատ  
մարդ ջարդեց , ինքզինքը մշանջենաւոր իշ-  
խանապետ ընել տուաւ , ու սաստիկ բռնա-  
ւոր մը եղաւ : Բայց իրէք տարիէն չարաչար  
հիւանդութիւ մեռաւ վաթսուն տարեկան :



Հ . Սիղղային տեղն ո՞վ անցաւ .

Պ . Լեպիգոս հիւսպատոսը Բրուտոս և Պերպէննա զօրասպետներուն հետ Սիղղային տեղն անցնելու մտքով սկսաւ գէտի՛ Տաուլմ գալ : Ծերակոյսը Պոմպէոսը խրկեց ան էրկուքին ու Սերտորիոսի գէմ՝ որ Սպանիոյ մէջ բռնացեր էր : Պոմպէոս գնաց Սերտորիոսն սպաննեց , և Սպանիայի սրատերազմը վերջացուց :

Հ . Ի՞նչ պատճառաւ սկսաւ Սորուկներուն սրատերազմը .

Պ . Սպարտակոս կորիճ սուսերամարտը եօթանասուն ընկերով և ուրիշ փախստական գեղացիներով ինչուան հարիւր քսան հազար հոգի ժողովեց , և Իտալիոյ մէջ շատ փնասներ ընեւէն ետքը՝ հռովմայ վրայ գնաց : Վերջապէս Պոմպէոս յաղթեց անոնց :

Հ . Պոմպէոս ուրիշ ի՞նչ քաջութիւններաւ .

Պ . Միջերկրական ծովուն վրայի աւազակներուն ալ յաղթեց , շատ զօրքով գնաց Միհրդատայ վրայ՝ յաղթեց , ու յաղթանակով հռովմ գարձաւ :

Հ . Կատիլինայի դաւաճանութիւնն ի՞նչ էր .

Պ . Կատիլինան քանի մը ընկերներով բոլոր Իտալիան օտք հանելու մտքով պատրաստուեր էր հռովմայ կրակ տալ և ծերակոյսը թրէ անցընել : Աիկերոնի ձեռ-



քովը դաւը իմացուեցաւ : Կատիլինան ալ  
քսան հազար զօրքով երբոր հռովմ կուգար,  
չորս դիէն սաշարուած յուսահատաբար  
սլատերազմի կեցաւ՝ ու զօրքին մեծ մասը  
կորսընցընելէն ետև ինքն ալ մեռաւ :

Հ . Կատիլինային մեռնելէն ետև հռովմ  
ի՞նչ նոր բան սլատահեցաւ .

Պ . Յուլիոս Կեսար , Պոմպէոս ու Կրաս-  
սոս մէջերնին խօսք դրին որ հասարակա-  
պետութեան մէջ առանց իրենց դիտնա-  
լուն բան մը չըլլայ : Աս միաբանութիւնը  
ըսուեցաւ Բաշնակո-Բիւն Եռասպէսաց (60) :

Հ . Եռասպէտաց իշխանութիւնը որչափ  
ատեն դիմացաւ .

Պ . Խիստ քիչ . վասն զի Կեսար ծերա-  
կուտին կամացը դէմ ինքզինքը հիւսպատոս  
ընտրել տուաւ . Պոմպէոս Սպանիան առաւ ,  
Կրասոս Ասորեստան , Կեսարն ալ Գաղ-  
ղիան : Պոմպէոս լսելով Կեսարին Գաղղիոյ  
մէջ ըրած յաղթութիւնները՝ կը նախան-  
ձէր , ու կը ջանար որ ինքն իշխանապետ ըն-  
տրուի : Կեսար Պոմպէոսին վրայ սլատե-  
րազմի եկաւ , անիկայ ալ Յունաստան փա-  
խաւ :

Հ . Կեսար ու Պոմպէոս ի՞նչ անուանի  
սլատերազմ ըրին իրարու հետ .

Պ . Յունաստանի մէջ Փարսաղիա դաշտին  
սլատերազմը : Պոմպէոսին զօրքերը քառ-  
սունըհինգ հազար հետեակ ու եօթըհա-



զար ձիաւոր էին . Աեասարինը՝ քսանուերկու հազար հեռեակ՝ հազար ալ ձիաւոր : Առաւօտէն ինչուան կէսօր քչեց պատերազմը , և Աեասար յաղթեց Պոմպէոսի :

Հ . Պոմպէոս ինչպէս մեռաւ .

Պ . Եգիպտոս ուղեց փախչել՝ Պտղոմէոս Թագաւորին քով : Երբոր նաւով մօտեցաւ Պեղուսիոն քաղաքինու կ'ուղէր ծովեզերքը ելլել , կռնրկէն դանակով զարկին սպաննեցին , գլուխն ալ կտրեցին ու Աեասարու ընծայ տարին :

Հ . Փարսապիայի յաղթութենէն ետև Աեասար ինչ ըրաւ .

Պ . Գնաց Աղէքսանդրիա , ու շատ քաջութիւններ ընելէն ետքը Պերսամոնի Միհրդատ Թագաւորին օգնութեամբը յաղթեց Եգիպտացոց . Աղէոսպարան պզտի եղբօրը հետ Թագաւորեցուց , ետքը Իտալիա դարձաւ , չորս դին հանգարտեցուց . Սկիպիոնին ու Վատոնին զրայ ալ գնաց՝ որ Պոմպէոսի կողմը բռնելով Ափրիկէի մէջ շատ մարդ ժողվեր ու իրեն գէմ պատրաստուեր էին :

Հ . Վատոն ինչպէս մեռաւ .

Պ . Զօրքը ցրուելէն ետքը Ուտիկէ գնաց , և հոն ծերակոյտ մը հաստատելու համար փուճ տեղը ջանալէն ետև , ինքզինքը սպաննեց :



Հ . Ափրիկէի յաղթութենէն ետքը Աե-  
սար ինչ ըրաւ .

Պ . Հռովմ գարձաւ , ու չորս օր յաղթա-  
նակ ըրաւ . ետքը ուրիշ յաղթութիւններ  
ալ ընելուն համար՝ Հռովմայեցիք զինքը  
մշտնջենաւոր իշխանապետ ընտրեցին , և  
մեհեաններու մէջ իր արձանը կանգնեցին :  
Հռովմը փառաւոր շէնքերով զարդարեց ,  
օրացոյցը կարգի գրաւ՝ տարին 365 օր որո-  
շեց , Վարքեդոն ու Վորնթոս քաղքերները  
նորէն շինեց :

Հ . Յուլիոս Աեսար ինչպէս մեռաւ .

Պ . Թագաւոր կոչուելու փափաքը երբոր  
խմացուեցաւ , Բրուտոս ամենէն հաւատա-  
րիմ բարեկամը և Վասիոս , ծերակուտէն  
վաթսուն հոգւոյ հետ միաբանեցան զինքը  
մեռցնելու որ օրն որ իրեն թագ պիտի աը-  
րուէր . քսանուիրեք տեղէն զարկին ըսպան-  
նեցին զինքը յիսունուվեց տարեկան (44) :

Հ . Աեսարին մեռնելէն ետև Հռովմայե-  
ցոց տէրութիւնը ինչ վիճակ ունեցաւ .

Պ . Անտոնիոս , Վեպիգոս և Ոկտաւիանոս  
նորէն եռապետութիւն հաստատեցին . Ան-  
տոնիոս Գաղղիան իրեն առաւ , Վեպիգոս  
Սպանիան , Ոկտաւիանոսն ալ Ափրիկէն ու  
Միջերկրական ծովուն կղզիները (43) :

Հ . Երկրորդ եռապետները ինչ ըրին .


Պ . Հռովմայ մէջ շատ արիւն ընելէն  
ետքը՝ Յունաստան գնացին Բրուտոսի ու



Աասիոսի վրայ . առջի բերան յաղթուեցան ,  
ու ետքը յաղթեցին , այնպէս որ Աասիոս  
ու Բրուտոս յուսահատած՝ իրենք զիրենք  
սպաննեցին :

Հ . Երկրորդ եռապետները միաբան  
մնացին .

Պ . Ոկտաւիանոս զԱլեպիդոսը քշել տը-  
լաւ . ետքը արեւմուտքը իրեն առաւ , Անտո-  
նիոսն ալ արեւելքը : Բայց վերջը մինակ տի-  
րելու մտքով իրեքհարիւր նաւով Անտո-  
նիոսի վրայ դնաց Եգիպտոս . Անտոնիոս  
դէմն ելաւ , ու Ակաիոնի նաւահանգստին  
մէջ սաստիկ պատերազմ մը ընեւէն ետքը՝  
յաղթուեցաւ փախաւ : Եւ որովհետեւ  
Աղէոսպատրա թագուհւոյն հետ կարգուած  
էր՝ սուտ համբաւ մը առնելով թէ Աղէո-  
սպատրան ինքզինքը մեռուցեր է՝ յուսահա-  
տած ինքզինքը զարկաւ սպաննեց :





Հ Ռ Ո Վ Մ Ա Յ Ե Յ Ի Ո Յ  
Ի Ն Ք Ն Ա Կ Ա Լ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Օգոստոսի Կոնստանդնուպոլսի Եպիսկոպոսն Կոստան-  
դիանոս :

Հ . Մ Կ Տ Ի Ո Ն Ի պատերազմէն ու յաղթու-  
թեանէն ետքը Ոկտաւիանոս ինչ ըրաւ .

Պ . Հռովմ գարձաւ ու անանկ կերպ մը  
բռնեց՝ որ ամենուն սիրելի ու պատկառելի  
եղաւ : Ուստի ժողովրդեան ուղեւորն ինքե-  
նաւ կոչուեցաւ տասը տարուան համար . իր  
անունն ալ փոխեցին Օգոստոս գրին՝ որ  
Կոստանդ ըսել է . բայց ան տասը տարին  
մշտնջենաւորի փոխուեցաւ (30) :

Հ . Օգոստոս ինչ նոր օրէնք գրաւ Հռով-  
մայեցոց .

Պ . Հրաման հանեց որ Սուսերամարտից  
խաղը տարին միայն երկու անգամ խաղան :  
Ազնուականները պատիւ ունենան , գերի-  
ներն իրենց տէրերուն վրայ ամբաստանու-  
թիւն կարենան ընել . և այլն : Օգոստոս ար-  
հեստներն ալ ծաղկեցուց , զօրքերը շա-  
ցուց . ամէն աշխարհքէ գեսպաններ կու-  
գային բարեկամ ըլլալ ուղեւոր . Գերմանա-  
ցիք ալ իրեն տակը մտան . անանկ որ բոլոր  
աշխարհք խաղաղութիւն եղաւ , և Յա-  
նոս կուռքին տաճարը գոցուեցաւ :



Հ . Օգոստոսի կայսերութեան ժամանակը ի՞նչ երևեցի բան եղաւ .

Պ . Քրիստոս տէրն մեր ծնաւ Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքը :

Հ . Օգոստոս ի՞նչպէս մեռաւ .

Պ . Տիբերիոս որդին իր տեղը թագաւորեցրնեւէն երկու տարի ետքը դէպ 'ի Ալիքիկէ պատերազմի երթալու ատեն հիւանդացաւ , ու ետ դառնալու ատենը մեռաւ : Հաովմայեցիք մեծ սուգ ըրին իրեն համար , ու անուշովը կուստուններ ալ շինեցին ( Քրիստոսէ ետքը Ակին ) :

Հ . Տիբերիոս ի՞նչպէս ըրաւ թագաւորութիւնը .

Պ . Բնութեամբ խիստ ու անգութ մարդ ըլլալով , երբոր տեսաւ թէ ժողովուրդը իր Գերմանիկոս եղբորորդւոյն կայսր ըլլալուն կը փափաքի , խրկեց զինքը դէպ 'ի արևելք , ու ետքը գաղտուկ թունաւորել տուաւ : Աւրիշ շատ չարիքներ ընեւէն ու անկարգ կեանք անցրնեւէն ետև հիւանդացաւ . իրեն յաջորդ ընտրեց Գերմանիկոսին Աալիգոլաստղան : Օր մըն ալ իշխաններէն մէկը բարձր գլխուն վրայ դնելով խղդեց զինքը եօթանասունըութ տարուան , քսանուերկու տարի կայսերութիւն ընեւէն ետքը (37) :

Հ . Աալիգոլան ի՞նչպէս ըրաւ կայսերութիւնը .

Պ . Իր խելքէ դուրս անկարգութիւններ



րովը՝ որով ոչ միայն ինքզինքը կուռքի պէս պաշտել կուտար, հասպա նաև իր ձիուն աւելի պատիւ կ'ընէր քան թէ իշխանաց. ուստի չորս տարի կայսերութիւն ընելէն ետքը սպաննուեցաւ (41) :

Հ. Վալիգոլայի տեղն ո՞վ անցաւ .

Պ. Քանի մը զինուորներ Վալիգոլային Վղոգիոս հօրեղբայրը՝ որ ապուշ մարդ մըն էր, ուսերնուն վրայ առած հրապարակը տարին ու կայսր նստեցուցին :

Հ. Վղոգիոս ի՞նչպէս ըրաւ կայսերութիւնը .

Պ. Առջի բերանը ամէնուն ներեց, ետքը անկարգ մարդիկներու խորհրդով, մանաւանդ իր Մեսալիա կնոջը գրգռելովը սկըսաւ անիրաւ սպանութիւններ ընել. անոր համար ժողովրդեան աչքէն ընկաւ. և իր երկրորդ կինն Ագրիպպինա՝ առջի երկրնէն ունեցած Ներոն որդին կայսր ընելու մտքով թունաւոր փետուր մը կլլեցուց Վղոգիոսի, որ շուտ մը մեռաւ ու թսուներչորս տարուան՝ տասուիրէք տարի կայսերութիւն ընելէն ետքը (54) :

Հ. Ներոն ի՞նչպէս թագաւորեց .

Պ. Առջի բերանը արդար ու գթած երևցաւ. բայց ետքը անանկ չարացաւ՝ որ իր Ագրիպպինա մայրն ու Սենեկա վարպետն ալ սպաննեց. անկարգութիւններուն ու զեզխութիւններուն չափ չկար՝ և իր ատենն



էր որ հռովմ քաղաքին կեսէն շատը այրե-  
ցաւ, ու պատճառը Ներոնն էր կ'ըսէն: Ին-  
քը եղաւ նաև առաջին հալածանք հանողը  
քրիստոնէից դէմ (64):

Հ. Ի՞նչպէս մեռաւ Ներոն.

Պ. Ժողովուրդը ոտք ելաւ ու երբոր Նե-  
րոն փախչելով ազատիլ կ'ուզէր՝ իմացուցին  
իր բարեկամները թէ Գաղբան կայսր ըն-  
տրեր են, և հրաման եղեր է որ Ներոն կա-  
խողանի վրայ ծեծով մեռցուի: Աս երբոր  
լսեց Ներոն, թուրը իր վզին կռթընցուց  
մեռաւ երեսունուերկու տարուան, տա-  
սուիրեք տարի և ութը ամիս թագաւորելէն  
ետքը (68):

Հ. Գաղբա ի՞նչպէս ըրաւ ինքնակալու-  
թիւնը.

Պ. Ուզեց ամէն բանի կարգ դնել, բայց  
ուրիշի խօսքովը շատ անխոհեմ ու անգու-  
գործքեր ալ ըրաւ, և քանի մը երևելի մար-  
դիկ մեռցրնէլ տուաւ:

Հ. Գաղբային ատենը ի՞նչ ապստամբու-  
թիւն ելաւ.

Պ. Ինքը զաւակ չունենալով՝ Ոթոն Նե-  
րոնին սիրելին զօրքը ժողովեց, ինքզինքը  
կայսր ընտրել տուաւ ու յանկարծ Գաղ-  
բային վրայ վազեց ու եօթը ամիս թագա-  
ւորելէն ետքը սպաննեց (69):

Հ. Ոթոն ի՞նչպէս ըրաւ ինքնակալութիւնը.



Պ . Թէպէտ ինքն սկսաւ անուշութեամբ վարուիլ, բայց Ախտելիոս Գերմանիոյ զօրապետը զօրքին սիրտը վաստակեցաւ ու ինքնակալ կոչուեցաւ . Աթոն ալ սլատերազմի մէջ յաղթուելով ինքզինքը սպաննեց :

Հ . Ախտելիոս ի նչպէս ըրաւ կայսերութիւնը .

Պ . Հռովմը յաղթութեամբ առածի պէս ներս մտաւ , ու ինքզինքը անկարգութեանց տուաւ . ուստի Ասիոյ զօրքը միաբանեցան Աեսպասիանոսը կայսր ըրին , ու մէկ երկու սլատերազմներէ ետքը Ախտելիոսը թուքումուրով քաշկրռուելով հրապարակը տարին , ու չարաչար ծեծելէն ետև՝ մորթեցին (70) :

Հ . Աեսպասիանոս ի նչպէս կայսր եղաւ .

Պ . Զօրքին ու ծերակուտին աղաչանքովը ընտրուելով Երուսաղէմի պաշարումն իր Տիաոս որդւոյն յանձնեց ու Հռովմ դարձաւ . ու երբոր Տիաոս Երուսաղէմն առաւ ու Հռովմ եկաւ , Հռովմայեցիք փառաւոր յաղթանակ ըրին Տիաոսի , ու յաղթական կամար մըն ալ շինեցին իրեն :

Հ . Աեսպասիանոսին վերջը ի նչպէս եղաւ , և տեղն ո՞վ նստաւ .

Պ . Տասը տարի թագաւորելէն ետքը մեռաւ (79) . Հռովմայեցիք տեղը Տիաոսը նըստեցուցին , որ իր անուշ բնութենն ու առա-



տաձեռնութեանը համար՝ ամենուն սիրելի  
եղաւ :

Տ . Տիտոսի օրերն ի՞նչ երևելի դիպուած  
եղաւ :

Պ . Ախտով հրաբուխ լեռը բռնկեցաւ ,  
չատ քաղաքներ այրեց . Պլինիոս փիլիսո-  
փան ալ հետաքրքրութեամբ մօտենալով  
հրաբուխին մէջ այրեցաւ , և հռովմ գետ  
նաշարժ՝ սով ժանտամահ եղաւ : Ան միջո-  
ցին իր Ագրիկոլա զօրապետն ալ Անգղիան  
առաւ , ու Անգղիացիքը քիչ մը կրթեց ,  
որոնք առաջ վայրենի մարդիկ էին :

Տ . Տիտոս որչափ ատեն ինքնակալու-  
թիւն ըրաւ , ու տեղը ո՞վ անցաւ :

Պ . Տիտոս երկու տարի իրէք ամիս տի-  
րելէն ետև՝ քառսուներմէկ տարուան մե-  
ռաւ , և տեղն անցաւ իր եղբայրը Գոմե-  
տիանոս (81) :

Տ . Գոմետիանոս ի՞նչպէս ըրաւ ինքնա-  
կալութիւնը :

Պ . Առջի բերանը նոր օրէնքներ դրաւ ,  
չէնքեր շինեց , դրատունները նորոգեց .  
բայց քիչ ատենէն ինքզինքը անկարգու-  
թեան տուաւ , փիլիսոփաներն ու ուսում-  
նականները հռովմէն վաճառեց : Գերմանա-  
ցւոց վրայ պատերազմի ելաւ ու բան մը չը-  
րած դարձաւ . շատ գերիներ գնեց՝ Գեր-  
մանացւոց հազուսար հազցուց , ու անանկ  
հանդէսով հռովմ մտաւ :



Հ . Գոմեափանոսի ատենը ի՞նչ էրեւելի դիպուած եղաւ .

Պ . Ռուսները թաթարներուն հետ միացած Հռովմայեցւոց սահմանը մտան . Գաւկիացիք ալ իրենց Գեղեքաղ թագաւորովը Հռովմայեցւոց վրայ ելան ու քանի մը սլատերազմի մէջ յաղթեցին : Իսկ երբոր նորէն բռնի կամ ստրկով ետ քաշուեցան , Գոմեափանոս փառաւոր յաղթանակով երկուանգամ Հռովմ մտաւ :

Հ . Գոմեափանոսի վերջը ի՞նչպէս եղաւ .

Պ . Երբոր անգթութիւնները շատցուց , քրիստոնէից վրայ ալ երկրորդ հալածանքը հանեց , ու սրտին չարութենէն շատ տանջանքներ ալ ինքը կը հնարէր , իր Գոմեափանոջը գործակցութեամբ թշնամիներն զինքը սպաննեցին (96) :

Հ . Գոմեափանոսին տեղն ո՞վ անցաւ .

Պ . Ծերակոյտը անոր մահը լսածին պէս՝ արձանները կտարաւել տուին , ու Ներուասանունով ազնուական առաքիլնի մարդը ինքնակալ դրին , որ չորս ամիսէն ետքը հիւանդացաւ մեռաւ , իրեն յաջորդ ընտրելով Տրայիանոսը՝ որ Գերմանիոյ կուսակալ էր :

Հ . Տրայիանոս ի՞նչպէս ըրաւ կայսերութիւնը .

Պ . Ամենուն սիրելի եղաւ իր մէկքանի աղէկութեանը համար . Պլուտարքոս փիլիսոփան իր վարպետն էր : Գակիացւոց Գե



կերաղ թագաւորին յաղթեց, բոլոր երկրին տիրեց և յաղթանակով Հռովմ մտաւ. Հռովմը աղուոր շէնքերով զարդարեց:

Հ. Ի՞նչ երևելի դիպուած եղաւ Տրայիանոսի ատենը.

Պ. Իր կայսերութեան իններորդ տարին երրորդ հալածանքը հանեց քրիստոնէից վրայ. թէպէտ ետքը քիչ մը հանդարտեցուց:

Հ. Տրայիանոս ի՞նչպէս մեռաւ.

Պ. Ասիոյ կողմերը ինչուան Եփրատէն ալ անդին քալելէն ետև՝ Հռովմ դառնալու ատենը Սելեւկիա քաղաքը երբոր հասաւ՝ մեռաւ վաթսուհուիրէք տարուան, տասնըինը տարի ու վեց ամիս կայսերութի ընելէն ետքը (117): Երակոյտը իրեն պատուոյ համար սիւն մը կանգնեցին Տրայիանոսի հրապարակ ըսուած տեղը:

Հ. Տրայիանոսի ո՞վ յաջորդեց.

Պ. Ադրիանոս անոր ազգականը, որ ուսումնասէր և խաղաղասէր կայսր եղաւ. անուանի է նաև իր կարգէ դուրս յիշողութեանը համար:

Հ. Ադրիանոսի ատեն ի՞նչ երևելի բան հանդիպեցաւ.

Պ. Հիւսիսային ազգերը Հռովմայեցւոյ սահմանները կոխեցին. Ադրիանոս անոնց դէմ ելաւ, յաղթեց. Ափրիկէ անցաւ, հին



Կարբէզոնը նորոգեց մեծցուց ու անուներ  
Ադրիանուպօլիս գրաւ : Երուսաղէմ ալ գը-  
նաց, հրաման տուաւ հրէից որ շինեն քա-  
ղաքը . անոնք ալ երբոր համարձակութիւն  
տուած՝ հրէաստանի մէջ գտնուած հռով-  
մայեցիներն ալ քրիստոնէաներն ալ թրէ-  
անցուցին՝ Բարկոքերաս անուանով սուտ մե-  
սիային առաջնորդութեամբը, Ադրիանոս  
ըօրք խրկեց ու վեցհարիւր հազար հրեայ  
ջարդելէն ետքը՝ մնացածներն ալ հրէաս-  
տանէն դուրս վարձուեց տուաւ :

Հ . Ադրիանոսի տեղն ո՞վ անցաւ .

Պ . Երբոր ինքը քսանուերկու տարի թա-  
գաւորելէն ետքը մեռաւ, տեղն անցաւ իր  
որդեգիրն Անտոնինոս Պի<sup>ա</sup> այսինքն Բարե-  
պաշտ որ քսանուերկու տարի ակրելէն ե-  
տե մեռաւ եօթանասուներկու հինգ տարեկան  
(161) :

Հ . Անտոնինոս Պիոսի ո՞վ յաջորդեց .

Պ . Իր որդեգիրն Աւրեղիոս, որ որչափ  
իր աղէկութիւններուն համար անուանի էր,  
նոյնչափ ալ Աւրոս իր գահակիցը մոլու-  
թիւններուն համար ատելի եղաւ : Աւրոս  
Պարթևաց վրայ գնաց . և թէպէտ յաղթեց,  
բայց ետ դառնալու ատենը սովէն ու ժանտ-  
ախտէն զօրքին կէսը կորսընցուց, ետքը  
Աւրեղիոս՝ Մարկոման ըսուած Գերմանա-  
ցաց վրայ գնաց Աւրոսին հետ, յաղթեց  
անոնց ու գարձաւ . բայց Աւրոս ճամբան  
մեռաւ երսուներկնր տարեկան :



Հ . Աւերոսի մեռնելէն ետքը Աւրեղիոսի ատենն ինչ հանդիպեցաւ .

Պ . Աւրեղիոս նորէն Մարկոմաններուն վրայ ելաւ , և պատերազմին մէջ յանկարծ թշնամիներէն պաշարուեցաւ , իր բանակին ջուրն ալ հատաւ , և բանակին մէջի քրիստոնէներուն աղօթքովը յորդ անձրև մը եկաւ . ետքը նոյն ամալը թշնամեաց վրայ կայծակներ թափելով ցիրուցան փախուց զիրենք : Ասոր վրայ Աւրեղիոս քրիստոնէից հալածմունքը դադրեցընել տուաւ :

Հ . Աւրեղիոսին վերջն ինչպէս եղաւ .

Պ . Լսելով որ Ռուաներն ու Թաթարները իր տէրութեանը վրայ կուգան , դէմերնին ելաւ , Աէննա քաղաքին մէջ հիւանդացաւ , ու տասներինը տարի թագաւորելէն ետքը՝ մեռաւ յիսուսուինը տարուան (180) :

Հ . Աւրեղիոսին ո՞վ յաջորդեց .

Պ . Որդին Աոմոգոս , որ անկարգութեան կողմանէ Գոմեոփանոսն ալ անցուց . ուստի հռովմայեցիք նախ թոյն խմցուցին իրեն , ու երբոր թոյնը չազդեց , դաղտուկ սենեակն մտան ու խղդեցին զինքը տասուերկու տարի կայսերութիւն ընելէն ետքը :

Հ . Աոմոգոսի տեղն ո՞վ նստաւ .

Պ . Պերտինաքս անունով անուանի մարդը , որ ակամայ յանձն առաւ կայսերութիւնը , և խիստ արդարութեան ետևէ ըլլալուն համար՝ զօրքը կատղած վրան վաղէ-



ցին ու սալափին մէջ զարկին սպաննեցին  
զինքը իրեք ամիս տիրելէն ետև :

Հ . Պերսիմաքսին տեղն ո՞վ անցաւ .

Պ . Զօրքը ծախեցին ինքնակալութիւնը  
կայսեր աներոջը Գիդիոս հիւպատոսին՝  
չստ ստակով . բայց Ափրիկէի զօրքը իրենց  
Սեւերոսիոս Սեւերոս զօրասպետնին ինքնա-  
կալ դրին՝ որ մարդ խրկեց ու զԳիդիոսն  
սպաննել տուաւ (194) :

Հ . Սեւերոս ի՞նչպէս ըրաւ կայսերու-  
թիւնը .

Պ . Յաղթեց Ասորոց երկրին Նիգեր կու-  
սակալին ու Անգղիայի Ալբինոս զօրասպե-  
տին . ետքը Պարթևներուն դէմ գնաց , յաղ-  
թեց և դարձաւ հռովմ , և քրիստոնէից դէմ  
հինգերորդ հալածանքը հանեց . ետքը Անգ-  
ղիա գնաց՝ երևելի սլաւ մը քաշեց , և մե-  
ռաւ հոն վաթսուսուվեց տարուան , տաս-  
նըութը տարի թագաւորելէն ետքը (211) :

Հ . Սեւերոսի տեղն ո՞վ անցաւ .

Պ . Զօրքը ընտրեցին անոր երկու որդիքը  
Կարակալա ու Գետաս : Կարակալա քանի  
մը հողւով եղբօրը սալափար վազեց ու մօրը  
գրկին մէջ սպաննեց զԳետասը , և անիրա-  
ւութեան ու անպթութեան կողմանէ Գո-  
մեափանոսն ալ անցուց , Ներոնն ալ . և օր  
մը երբոր կառքով Ադեսիա քաղաքին քովե-  
րը քանի մը հողւով կը ստորտեր , հարիւրա-  
սկտ մը սպաննեց զինքը , և կայսերութիւնը



Մակրինոսին անցաւ, որ Աարքեդոնացի  
հասարակ մարդ մըն էր՝ զօրապետ եղած :

Հ . Մակրինոս ինչպէս ըրաւ կայսերու  
թիւնը .

Պ . Թէպէտ արդարասէր բարբոսը սիրելի  
եղաւ, բայց զօրքը ապստամբելով՝ զինքը  
Քաղկեդոն փախուցին ու հոն սպաննեցին՝  
տարի մը կայսերու թիւն ընելէն ետքը (217) :

Հ . Մակրինոսին ո՞վ յաջորդեց .

Պ . Արակալային տանը չորս տարեկան  
տղան Եղիոգաբաղոս որ չորս տարի միայն  
ապրեցաւ՝ անկարգութեամբ : Իր խենթու  
թիւններուն ու անիրաւութիւններուն չղի-  
մացան զօրքը, ետեւէն ընկան ու սահուը-  
տած տեղէն հանեցին՝ քաշկրուտելով փո-  
ղոցները ստրուցուցին՝ ու մեռելը Տիբերիս  
դէտը նետեցին (222) :

Հ . Եղիոգաբաղոսին տեղն ո՞վ անցաւ .

Պ . Մօրքրոջը տղան Աղէքսանդր Սեւե-  
րոս տանը վեց տարեկան, որ երևելի երա-  
ժիշտ, վարպետ արձանագործ և բանա-  
ստեղծ էր : Իր Մամէա մօրը խրատովը քրիս-  
տոնեաներուն հանդստութի տուաւ . Պար-  
թևներուն յաղթեց ու հռովմայեցւոց տէ-  
րութիւնը առջի մեծութեանը հասուց :

Հ . Աղէքսանդր Սեւերոսին վերջը ինչ  
պէս եղաւ .

Պ . Մաքսիմինոս Գերմանիոյ զօրապետը



ասպատամբեցաւ իրմէն, ու դահիճ մը խըր-  
կելով գլուխը կտրել տուաւ (235):

Հ. Աղէքսանդր Սեւերոսէն ետքը ո՞վ ե-  
ղաւ ինքնակալ.

Պ. Մաքսիմիոս որ Յունաստանի կողմե-  
րը հովուի մը տղայ էր, աւազակներու հետ  
կռուելու սորված. հսկայ, որկրամուլ և չա-  
րագործ. վեցերորդ սասաիկ հալածանքը  
հանեց քրիստոնէից դէմ. և թէպէտ սլա-  
տերազմներու մէջ շատ կտրճութիներ ցու-  
ցուց Գերմանացուց և հիւսիսականաց դէմ,  
բայց ըրած անիրաւութիւններուն համար  
քունին մէջ սպաննեցին զինքը իրէք տարի  
թագաւորելէն ետև (237):

Հ. Մաքսիմիոսէն ետև ո՞վ եղաւ կայսր.

Պ. Ծերակոյտն երկու հոգի ընտրեց,  
Պոպիէնոս ու Բալբինոս. բայց անոնք իրա-  
րու հետ անմիաբան ըլլալով և զօրքը երկու-  
քին ալ թշնամի, օր մը երկուքն ալ սպան-  
նեցին:

Հ. Պոպիէնոսէն ու Բալբինոսէն ետև  
ո՞վ թագաւորեց.

Պ. Գորգիանոս անունով տասներվեց տա-  
րեկան ուսումնասէր ու արդարասէր կարի-  
ճը. բայց Փիլիպպոս Արաբացի սպարապե-  
տը ըրաւ չըրաւ՝ Գորգիանոսին հետ մէկ-  
տեղ թագաւորեց, ետքը սպաննել տուաւ  
զԳորգիանոսը, որ վեց տարի թագաւորեր  
էր. և ինքը իր վեց տարեկան տղուն հետ



կայսր նստաւ : Պարսից հետ զինագագա-  
րում ըրաւ ու ճամբայ ելաւ հռովմ գալու .  
բայց զօրքը Գեկոս զօրապետին հետ Փի-  
լիպպոսէն ապստամբեցան ու զինքը մե-  
ռուցին՝ հինգ տարի կայսերութիւն ընելէն  
ետև :

Հ . Փիլիպպոսի տեղն ո՛վ անցաւ .

Պ . Գեկոս կարիճ զօրապետը , որ Գո-  
թացւոց գէմ գնաց , ու որդւոյն հետ մե-  
ռաւ երկու տարի օիրելէն ետև : Քրիստո-  
նէից վրայ եօթներորդ մեծ հալածանքը Գե-  
կոս հանեց (250) :

Հ . Գեկոսի ո՛վ յաջորդեց .

Պ . Գաղղոս զօրավարն որ պատճառ եղեր  
էր Գեկոսի յաղթուելուն , և երբոր Եմի-  
լիանոս զօրապետը գնաց Գոթացւոց յաղ-  
թեց՝ ու զօրքին ուղելովը ինքնակալ եղաւ ,  
Գաղղոս գէմն ելաւ ու իր տղուն հետ մէկ-  
տեղ սպաննուեցաւ Եմիլիանոսէն , երկու  
տարի կայսերութիւն ընելէն ետքը : Բայց  
ծերակոյտն Եմելիանոսը չընդունեցան ու  
տեղը Վաղերիանոսը կայսր ըրին (253) :

Հ . Վաղերիանոս ի՞նչպէս ըրաւ ինքնա-  
կալութիւնը .

Պ . Առջի բերանը քիչ մը քրիստոնէից  
հանգստութի տուաւ . բայց ետքը հանեց ու-  
թերորդ հալածանքը խիստ սաստիկ . Պար-  
սից Շապուհ թագաւորը պատերազմի մէջ  
զինքը գերի բռնեց , և ձի հեծնելու ատենը  
Վաղերիանոսին վրայ կոխելով կ'ելէր . եօթը



տարիէն նաև անոր աչուրները փորեց, ու մարմնոյն կաշին քերթեց:

Հ. Ազդերիանոսին տեղը ո՞վ կայսր եղաւ.

Պ. Իր Գաղիանոս որդին. ան միջոցին ինքնակաշուծեան ետևէ եղող երեսուն հոգի ելան, ու տէրութիւնը տակնուվրայ ըրին, ինչուան որ Գաղիանոս դէմերնին ելաւ, և անոնցմէ մէկը Միլան քաղաքին մէջ սլաշարած ատենը՝ ինքը իր զինուորներէն սպաննուեցաւ (268):

Հ. Գաղիանոսի տեղն ո՞վ անցաւ.

Պ. Փլաւիոս Կղոզիոս անուշ բարբով մարդը, որ Գոթացւոց վրայ երթալու ատենը Յունաստանի կողմերը հիւանդացաւ մեռաւ (270):

Հ. Փլաւիոս Կղոզիոսէն ետև ո՞վ եղաւ կայսր.

Պ. Աւրեղիանոս անունով աննշան ցեղէ կտրիճ և ուժով զօրասպետը. ասոր յաղթած թագաւորներուն մէջ ամենէն երևելին Պալմիրայի Չենոբիա թագուհին էր, որուն երկիրն առնելէն ետև զինքն ալ գերի ըրաւ: Աւրեղիանոս հանեց եկեղեցւոյ իններորդ հալածանքը:

Հ. Աւրեղիանոսի վերջն ի՞նչպէս եղաւ.

Պ. Յունաստան երթալու ատենը իր Մնեսթէոս ատենագարին դաշնակիցները



մեռուցին զինքը հինոյ տարի տիրելէն ետև  
(273):

Հ. Աւրեղիանոսէն ետև ո՞վ էրաւ ինքնա-  
կալ:

Պ. Տակիտոս ազնուականը որ Պարսից և  
Թաթարաց վրայ երթալու ատենը կայսե-  
րութեանը վեցերորդ տարին մեռաւ:

Հ. Տակիտոսի ո՞վ յաջորդեց:

Պ. Պրոբոս անուանով կտրիճ սպարապե-  
տը • բայց զօրքը իր սաստիկ կարգին կանո-  
նին չգիտացան, և Յուլիանոսի կողմերն եր-  
թալու ատենը մեռուցին զինքը վեց տարի  
թագաւորելէն ետև:

Հ. Պրոբոսի տեղն ո՞վ անցաւ:

Պ. Մարկոս Աւրեղիոս Վարոս զօրապե-  
տը, որ իր Վարինոս ու Նումերիանոս տղայքը  
իրեն գահակից ըրաւ: Քիչ ատենէն Վա-  
րոսին վրանին վրայ կայծակ մը իջաւ ու քո-  
վիններովը մէկտեղ սպաննեց: Նումերիանոս  
հօրը հետ Թաթարներուն ու Պարսից վրայ  
դնացեր յաղթեր էր, հօրը մեռնելէն ետքը  
սպաննուեցաւ Ապեր անուանով աներոջմէն •  
և ան ատեն Դիոկղետիանոս զօրագլուխը  
կայսր ընտրուեցաւ (284):

Հ. Դիոկղետիանոս ի՞նչպէս ըրաւ կայ-  
սերութիւնը:

Պ. Ինքը Դաղմատացի ցած մարդու մը  
տղայ էր՝ կտրճութեամբն սուաջ եկած: Իր



սիրելի բարեկամ Մաքսիմիանոսն իրեն դա-  
հակից ըրած՝ հիւսիսային ազգաց յաղթեց .  
Մաքսիմիանոսի դրդուութեամբը շատ քրիս-  
տոնեայ ջարդել տուաւ և քսան տարի տի-  
րելէն ետև կայսերութենէ հրաժարեցաւ  
Մաքսիմիանոսին հետ մէկտեղ . ինչ մա-  
հուամբ մեռնիլը յայտնի չէ (305) :

Հ . Դիոկղետիանոսի ու Մաքսիմիանոսի  
տեղն ո՛վ անցաւ .

Պ . Իրենց ընտրած Կոստանդ Բլորոսն ու  
Գաղերիոսը : Ասոնք տէրութիւնը մէջերնին  
բաժնեցին , արևմտեան կողմը Կոստանդն  
առաւ , արևելքը՝ Գաղերիոս : Կոստանդ  
Անգղիա գնաց՝ Սկովտիան առաւ , և իր  
Կոստանդիանոս որդին տեղը դնելով՝ հոն  
մեռաւ : Գաղերիոս քրիստոնէից նեղու-  
թիւն կուտար առջի բերանը . երբոր սաս-  
տիկ հիւանդութեամբ վրան գլուխը խոցով  
որդնոտեցաւ , քրիստոնէից դէմ հանած  
հրովարտակները բոլոր ետ առաւ , բայց ա-  
ռանց դառնալու մեռաւ և կայսերութիւնը  
բոլոր Կոստանդիանոսի ձեռքը մնաց (324) :

Հ . Կոստանդիանոս ինչպէս ըրաւ ինք-  
նակալութիւնը .

Պ . Երբոր Մաքսենտիոս իշխանին դէմ  
բանակովը հռովմայ վրայ կ'երթար՝ երկնքին  
երեսը խաչ մը տեսաւ՝ վրան գրած Աստ-  
յազնէս . երկրորդ օրը ան նշանովը գրօշակ  
մը շինել տուաւ որ միշտ բանակին առջևէն  
կը խրկէր : Անկէց ետքը քրիստոնէութիւնը



ընդունեցաւ, Մաքսէնտիոսին յաղթեց,  
Հռովմ մտաւ, ու իր ամէն արձաններուն աջ  
կողմը երկինքը տեսած խաչը փորել տուաւ:  
Քրիստոնէութեան հետ ուսմունքն ալ ծաղ-  
կեցրնել ջանաց. մեծ պատերազմներով իր  
Լիկիանոս անունով ապստամբ փեփին յաղ-  
թեց (328):

Հ. Կոստանդիանոս երբոր ամէն թշնա-  
միներէն ազատեցաւ՝ ինչ գործքի հետ ե-  
ղաւ.

Պ. Աթոռը Բիւզանդիոն քաղաքը փո-  
խադրեց, ու անունը Ն<sup>ու</sup> Հ<sup>ռ</sup>ովմ գրաւ, որ  
Կոստանդնուպօլիս ալ ըսուեցաւ (337): Ետքը  
ջանալով քրիստոնէութիւնը տարածել՝ ե-  
կեղեցւոյ մէջ եղած հերետիկոսները պատ-  
ժեց, որոնց գլխաւորը Արիոս հերետիկոսն  
էր, և անոր դէմ՝ Նիկիոյ սուրբ ժողովն ընել  
տուաւ:

Հ. Աթոռը Կոստանդնուպօլիս փոխա-  
դրուելէն ետեւ՝ Հռովմ ինչ վիճակի մէջ  
մնաց.

Պ. Կոստանդիանոս տէրութիւնը իրեք  
բաժնեց. Կոստանդին մեծ որդւոյն Գաղ-  
ղիան և արեւմտեան կողմերը տուաւ. Կոս-  
տանդ տղուն արեւելքի կողմերը. Կոստաս  
անունով պղտի տղան ալ Հռովմ նստեցուց  
ու Իտալիան անոր յանձնեց: Եւ անկէց ե-  
տեւ սովորութիւն եղաւ որ միշտ երկու կայսր  
կը նստէին. մէկը Հռովմ, մէկալը Կոստանդ-  
նուպօլիս:



Հ . Կոստանդիանոս ի՞նչպէս մեռաւ .

Պ . Երեսուն տարի ինքնակալութիւն ընելէն ետև հիւանդացաւ, Նիկոմիդիա գնաց, և հոն մկրտուեցաւ ու սրբութեամբ աւանդեց հոգին :

Հ . Մեծին Կոստանդիանոսի վախճանելէն ետև հռովմ ի՞նչ հանդիպեցաւ .

Պ . Հռովմայեցւոց տէրութիւնն երթալով տկարացաւ . վասն զի Գոթացիք զօրացան ու Հռովմայեցւոց երկիրները կոխկրտսեցին : Իսկ ինքնակալներն Ասիոյ կողմերը քաշուած՝ իրենց հանդիստը կը նայէին : Կոստանդին ու Կոստաս երբոր մեռան՝ տէրութիւնը Կոստանդ կայսեր մնաց . ան ալ երեսուն տարի կայսերութիւն ըրաւ, ու մէկ երևելի բան մը չըրաւ : Իր հօրեղբօրը թող Յուլիանոս Աւրացող երկու տարուան կայսերութեան ատենը զօրացաւ թշնամեաց վրայ ու Գոթացիքը հալածեց Իտալիայէն : Յաջորդները Յովիանոս և Վաղենտիանոս քիչ մը ատեն ալ սլաշտպանեցին տէրութիւնը . Վաղենտիանոսին Վաղէս եղբայրը Գոթացւոց հետ զարնուելով՝ փախչելու ատենը խղի մը մէջ այրեցաւ (364) :

Հ . Վաղեսէն ետքը հռովմայեցիք ի՞նչ ըրին .

Պ . Այնչափ տկարացան որ հազիւ միայն Իտալիան ձեռուրնին մնաց . ուստի Գոթացւոց Ալարիկոս թագաւորն իրենց օգնութիւն կանչեցին :



Հ . Ալարիկոս ինչպէս օգնութիւն ըրաւ  
Հռովմայեցւոց .

Պ . Ալարիկոս երբոր եկաւ ու մեծին  
Թէոդոսի Արկադէոս ու Ռնորիոս սղոցը  
տկարութիւնը տեսաւ , զինքը հրաւիրող  
ներուն դէմ պատերազմեցաւ՝ յաղթեց ,  
Հռովմայ տիրեց , ու եկեղեցիներէն ՚ի զատ  
ամէն տեղ կողոպտել տուաւ իր զօրքին՝ ինչ  
չուան իրեք օր :

Հ . Ան ատենները Հռովմայ կայսերք ուր  
կը նստէին .

Պ . Իտալիոյ Հռաւեննոս քաղաքը քա-  
չուած էին :

Հ . Ալարիկոսէն ետքը ո՛վ ելաւ Հռով-  
մայեցւոց վրայ .

Պ . Գեներիկոս Թագաւորը , որ տասնը  
չորս օր կողոպտեց քանդեց քաղաքը ան-  
խնայ . և ասանկով Ռնորիոսին ձեռքէն Եւրո-  
պայի մեծ մասը գնաց , և Հռովմայեցւոց տէ-  
րութիւնը բոլորովին կործանեցաւ : Օգոստու-  
ղոս կայսրն ալ ինքնակալութեան անունը  
ձգեց , ու Գերմանիայէն եկած Երուզնե-  
րուն Ոգուադր զօրապետը ինքզինքը բոլոր  
Իտալիոյ Թագաւոր անուանեց . և կայսե-  
րութեան աթոռոյն Բիւզանդիա փոխա-  
դրուելէն 146 տարի ետքը , Քրիստոսի 476  
տարին՝ Հռովմայեցւոց տէրութիւնը վեր-  
ջացաւ :



## Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ճ

Հին Հռոմայեց-ոց հասարակարարութիւնը, և քանի  
ճը սովորութիւնները :

Հ. ՏՈՒՎԱԲԱՅԵՑԻՈՑ տէրութիւնը քանի՞  
տեսակ մարդկանց վրայ բաժնուած էր .

Պ. Գլխաւոր բաժանմունքը երկուք էր .  
մէյմը Աշխատասիւն+ կամ Պապրիի+, մէյմ'ալ  
Ժողովրդասիւն+ . Ետքէն կարգ մըն ալ ելաւ  
որ Աստուծոյ կը կոչուէին : Ժողովուրդն ալ  
իրեք տեսակ կը բաժնուէր . օ, Յէշի վրայ .  
բ, ամէն մէկ ցեղը տասնական ՏՆՃ էին .  
գ, բոլոր ժողովուրդը հարիւր իննասուսուի-  
րեք հարիւր-ընասի+ էին . ու հարիւրեկաց ժո-  
ղովներուն մէջ մէկ հարիւրեակը մէկ վիճակ  
մը կը ձգէր : Եւ որովհետեւ ծերակուտին  
մէջ մանուկները ցուցակի մը մէջ կը գրուէին՝  
անոր համար իրենք ալ հար+ համագրեալ+ կը  
կոչուէին :

Հ. Քանի՞ տեսակ իշխանութիւն կար հին  
Հռոմայեցւոց մէջ .

Պ. Գլխաւոր եօթը . օ, Իշխանապե-  
տութիւն . իշխանապետը փոխանորդ մըն ալ  
կ'ունենար որ կ'ըսուէր Իշխան ասպետաց .  
բ, Հիւպատոսութիւն . գ, Համարակալու-



Թիւն . 7, ՊրետորուԹիւն . որոնց գլխաւոր  
պաշտօնն էր դատաստան կտրել, ու հիւ-  
պատոսները պատերազմի գնացած ատեն-  
նին՝ անոնց տեղը բռնել . Է, Շինուածա-  
պետուԹիւն . 8, ԳանձաւորուԹիւն . Է,  
ՏրիբունուԹիւն :

Հ . Ի՞նչպէս կը բաժնէին Հռովմայեցիք  
Ժամանակը .

Պ . Հին ատենը մարտէն կը սկսէին տա-  
րին . անոր համար ետքի չորս ամիսը Սեպ-  
տեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր և Դեկ-  
տեմբեր կ'ըսուին, որ կը նշանակէ Եօթնե-  
րորդ, ութերորդ, իններորդ ու տասնե-  
րորդ :

Հ . Հռովմայեցւոց խաղերն ու տեսարան-  
ներն ի՞նչպէս էին .

Պ . Գլխաւոր խաղերնին էր ըմբշամար-  
տուԹիւն, ոտքով կամ ձիով վազել, կռուք  
վազընել, գազաններու հետ կռուիլ, և  
նաւահան պատերազմ, որուն համար ջրը  
մուղներ շինած էին որ կրկիսին մէջ ջուր  
կը բերէին, և սղտի ծով մը կը ձևանար :  
Մէկ տեսարանն ալ սուսերամարտ խաղն էր .  
ունէին նաև Թատերական խաղեր, այսինքն  
ողբերգուԹիւն, կատակերգուԹիւն և ծա-  
ղրածուԹիւն :

Հ . Հռովմայեցիք քանի՞ անուն կ'ունե-  
նային .

Պ . Սովորաբար իրեք կամ չորս . զոր օրի-



նակ Պոբղիոս Կուռնեւիոս Սկիպիոն Ափրիկեցի : Առջինը նախանուն կ'ըսուէր , անով Սկիպիոնն իր եղբօրմէն կ'որոշուէր . երկրորդ անունովը Կուռնեւեանց ցեղէն ըլլալը կ'իմացուէր . երրորդը մականունն էր , որով Կուռնեւեանց ճղերէն Սկիպիոնեանցը կ'որոշուէր . իսկ չորրորդը՝ կը տրուէր կամ ուրիշ ցեղի հետ ազգակցութիւն ընելուն համար , կամ երեւելի քաջութեան մը , և կամ բնական սակասութեան մը համար :

Հ . Հռովմայեցւոց հագուստն ի՞նչ էր .

Պ . Սովորական լաթերնին էր շապիկ , կապայ և վերարկու , իրեքն ալ բրդէ : Կապան ինչուան ծունկը կը հասնէր , որուն վրայէն դօտի կը կապէին տնէն դուրս ելլելու ատեն : Վերարկուն առանց թևի երկայն լաթ մըն էր՝ ձախ ուսին վրայ մէկ ծայրը մէկալին կոճկած :

Հ . Ո՞ր արհեստն աւելի ծաղկած էր Հռովմ .

Պ . Հռովմայեցիք պատերազմէ ու երկրագործութենէ՝ ի զատ գլխաւոր արհեստ չունէին : Ինչուան Պերսէոսի պատերազմին ատենը ոչ հաց ծախող կար Հռովմ և ոչ ջրաղացք : Բայց այգեգործութիւնը ծաղկած էր մէջերնին :

Հ . Ուամուկքը ե՞րբ և ի՞նչպէս սկսաւ Հռովմայեցւոց մէջ .



Պ. Հասարակապետութեան վերջերը եր-  
բոր Հռովմայեցիք փրեցին Յունաց, ա-  
նոնցմէ մտաւ մէջերնին ամէն տեսակ ուս-  
մունք, և շատ երևելի ուսումնական մարդիկ  
ունեցան :









# Յ Լ Ն Կ

## Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

### Ե Գ Ի Պ Տ Ա Յ Ի Ո Յ

Եգիպտացոց պապմանութիւնը ինչո՞ւն Կամ  
Բիւսի քիւրէլը: -- Եգիպտացոց կրօնքը,  
կառավարութիւնը, արուեստները և հնո-  
ւթիւնները . . . . . 1

## Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

### Ա Ս Ո Ր Ե Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

#### Ե Ի Բ Ա Բ Ե Լ Ա Յ Ի Ո Յ

Ասորոց և Բաբելոնացոց պապմանութիւնը  
ինչո՞ւն Կիւրոսի Բաբելոն ատենէլը: --  
Քաղաքացոց կառավարութիւնը, կրօնքը  
ու գիտութիւնը: Բաբելոնի հնո-ւթիւնները . . . 11



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Ա Յ , Պ Ա Ր Ս Ի Յ

ԵՒ ԼՒՒԴԱՅԻՈՅ

Լի-դաց-ոց Բագաս-որո-Բի-նը Ինչո-ան  
 Կրէսոսի անկո-մը : — Պարսից և Մարաց  
 պարսո-Բի-նը Ինչո-ան Կի-րոս . Կի-րոսի  
 Բագաս-որո-Բի-նը : Պարսից և Մարաց սո-  
 շորո-Բի-ննէրն և օրէնքնէրը . . . . . 19



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պ Ա Ր Ս Ի Յ

Կի-րոսի յաջորդաց պարսո-Բի-նը Ինչո-ան  
 Դարէնի Յո-նաց դէմ պարսերազմին սկիզբը . . . . . 28



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Փ Ի Ի Ն Ի Կ Ե Յ Ի Ո Յ

Տի-րոսի շեղումը, Վաճառ-անկան-Բի-նը, Գաղ  
 Բահանէրը . . . . . 39



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՅ

Յոսևասփան . -- Առջի հին Բնակիչք : --  
Տեւեկեք : -- Դիւցազանց ժամանակներուն  
պատմութիւնք : -- ՈղբՏպիական Բռնական . 43



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱԹԵՆԱՅԻՈՅ

Աթենացաց պատմութիւնք ինչոսան Պարսից  
առջի յարձակումք : -- Աթենքի հառաւա-  
րութիւնք : -- Դրակներէ եւ Սողներ օրէնս-  
դրութիւնք : -- Մարաց պատերազմներուն  
ժամանակք . . . . . 58



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՊԱՐՏԱՅԻՈՅ

Սպարացաց հառաւաւարութիւնք : -- Լի-  
հարժոսի օրէնսդրութիւնք : -- Մեսսենիա-  
ցաց պատերազմներք : -- Պեղոպոնետի վի-  
ճակք Մարաց պատերազմներուն ժամանակք . 67



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՅ

Մարտոյ պատերազմին ժամանակը . . . . . 78

Յոնասպանի ներքին պատերազմները ինչո՞ւնս  
լուսան Պեղոպոնէասիան պատերազմին վերջը . . . . . 86

Պեղոպոնէասիան պատերազմին ետք Յոնասոյ  
և Պարսից Տէջ եղած պատերազմները ինչո՞ւնս  
Ալէքսանդրի հօրը Փիլիպպոսի ժամանակը . . . . . 91

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ Ա Կ Ե Դ Ո՛Ն Ա Յ Ի Ո Յ

Մահէրոնիոյ պատմութիւնը ինչո՞ւնս Փիլիպպոսի  
Լեպիդոսի Լեպիդոսի . . . . . 97

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Յ Ա Ջ Ո Ր Դ Ա Յ Ն Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի

Ալէքսանդրի յաջորդաց իտիւնները ինչո՞ւնս  
Իպոսի պատերազմը . . . . . Մահէրոնիոյ և



Յոաննասփանի էփթի պատմութիւնները՝ ինչոսան Հռովմայեցոց փրկապետութիւնը . 111

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏԱՅԻՈՅ

Եգիպտոսի և Ասորոց երկրի պատմութիւնը: — Իպտոսի պատերազմէն ինչոսան առ երկիրներուն Հռովմայեցոց յետին անջնիւը . . . . . 131

ԱՍՈՐԻՔ . . . . . 139

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՆՐ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ԱՍԻՈՅ

Պարսից ու Մակեդոնացոց փերութիւններուն իործանելէն վերջը՝ Ասիոյ Տէջ էլած երկրորդական ճանր Ռաֆաւորութիւններ . . 145

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Յոաննայ իրօնը, հանդէսները, խաչերը և փրահանութիւնը . . . . . 153



ԲՅՈՒՆԱՆԻՔ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ

Իսաալիոյ հին ժողովուրդները: -- Հառձ  
քաղաքին հիմնարկութիւնը: -- Հառձայ Ռա-  
գաւորներուն ժամանակին պատմութիւնը . 158

ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ


ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հիւսիսային-արեւմտեան: -- Իշխանապետութեան  
Ռիւն . -- Տրիֆոն-նութիւն: -- Տասնպե-  
տութիւն . . . . . 169  
Գաղղիացոց և Պիտոսի յարձակումները . 177  
Հառձայեցոց շինարարական կարգերը . 180

ԿԱՐՔԵԴՈՆԱՅԻՔ

Սիկիւլիոյ պատերազմները: -- Առաջին  
Պոնտիկեան պատերազմը . . . . . 184  
Երկրորդ և երրորդ Պոնտիկեան պատերազ-  
մը: -- Կարտեդոնի կործանումը . . . . . 187

ՄԱՐ





Հանձնայեցոց պատերազմէրը Ասիոյ՝ Եւ-  
րոպայի ու Արեւիկէի Տէլ: -- Գրականութանց  
խոնարհութիւնը . . . . . 191

Գաղնատոց պատերազմը: -- Սիւլապի ու  
Մարտիոսի կռիւները: -- Պոյսկոն: --  
Կեսար: -- Եռասպէսք . . . . . 193

ՀՌՈՎՄԱՅԵՑՒՈՑ

ԻՆ ՔՆ ԱԿԱԼՈՒ ԹԻՒՆԸ

Օգոստոսի կայսր ըլլալէն ինչո՞ւն Տէժն  
Կոստանդինոս . . . . . 200

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Հին Հանձնայեցոց կառավարութիւնը, և  
քանի՞ ճ սովորութիւնները . . . . . 220

*Я могу молиться*  
*Кух*  
*Крученик*